



«Մասնակցային գործընթացը կրթության հիմքերում»

ծրագրի շրջանակներում իրականացված

նախադպրոցական հաստատությունների մոնիտորինգի

# ԶԵԿՈՒՅՑ

**Մանկական զարգացման հիմնադրամ**

*Երևան 2017*

*Մանկական զարգացման հիմնադրամ*

**Հասցե**՝ Ռ. Մելիքյան 1, Երևան 0065
**Հեռախոս**՝ +37410739148, +37460491001
Էլ. փոստ՝ info@cdf.am
Կայք՝ www.cdf.am

*Սույն ուսումնասիրությունը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ և «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի կողմից իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում: Ուսումնասիրության բովանդակության համար պատասխանատու է Մանկական զարգացման հիմնադրամը, և այն պարտադիր չէ, որ արտացոլի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության կարծիքը:*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ ..... 4
ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ ..... 5
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 8
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ..... 8
Մոնիտորինգային ծրագրի նկարագիր ..... 8
Մոնիտորինգի մեթոդները ..... 9
Մոնիտորինգի սահմանափակումները ..... 11
ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՏՈՒՄՆԵՐԸ ..... 12
Նախադպրոցական կրթության իրավական հիմքերը ..... 12
Ընդհանուր իրավիճակ ..... 14
Խմբերի խտություն ..... 16
Հաստիքացուցակ ..... 18
Տարածքը և պայմանները ..... 19
Մաքրություն և հիգիենա ..... 22
Սննդամթերք և սնունդ ..... 24
Կրթություն և զարգացում ..... 24
Ուսուցման ծրագրեր ..... 26
Ուսուցողական նյութեր և զարգացման հնարավորություններ ..... 27
Դաստիարակների հմտություններն ու մոտեցումները ..... 29
Աշխատանք ծնողների հետ ..... 31
Ներառման հնարավորությունները ..... 33
Համագործակցություն պետական մարմինների հետ ..... 36
ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ..... 37
ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ..... 39
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ..... 43
Հավելված 1. Նախադպրոցական կրթության ոլորտի իրավական ակտերի ցանկ ..... 44
Հավելված 2. Նախադպրոցական կրթությանը վերաբերող իրավական ակտերով սահմանված հիմնական չափորոշիչներ ..... 45
Հավելված 3. Նախադպրոցական կրթության ծառայությունների մոնիտորինգի քարտ ..... 62
Հավելված 4. Փորձագիտական հարցազրույցների մասնակիցների ցանկ ..... 71
Հավելված 5. Փորձագիտական հարցազրույցների հարցաշար ..... 72
Հավելված 6. Ծնողների ֆոկուս-խմբային քննարկման հարցաշար ..... 74
Հավելված 7. Հարցաթերթ ծնողների համար ..... 75
Հավելված 8. Չափորոշիչներին համապատասխանության ամփոփ աղյուսակ՝ ըստ ուսումնասիրված ՆԴՀ-ների ..... 77

# ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

| | |
|---|---|
| ԱՄՆ | Ամերիկայի Միացյալ Նահանգներ |
| ԱՆ | Առողջապահության նախարարություն |
| ԿԱԻ | Կրթության ազգային ինստիտուտ |
| ԿԳՆ | Կրթության և գիտության նախարարություն |
| ՀԿ | Հասարակական կազմակերպություն |
| ՀՀ | Հայաստանի Հանրապետություն |
| ՄԶՀ | Մանկական զարգացման հիմնադրամ |
| ՆԴՀ | Նախադպրոցական հաստատություն |
| ՏԻՄ | Տեղական ինքնակառավարման մարմին |
| ՏԿԶՆ | Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն |
| ՖԽ | Ֆոկուս խումբ |

# ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Սույն զեկույցը ներկայացնում է Մանկական զարգացման հիմնադրամի (ՄԶՀ) կողմից «Մասնակցային գործընթացը կրթության հիմքերում» ծրագրի շրջանակներում իրականացված մոնիտորինգի արդյունքները: Ծրագիրն իրականացվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ և «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի կողմից իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում: Ծրագիրը ներառում է նախադպրոցական հաստատությունների (ՆԴՀ) մոնիտորինգ թիրախ համայնքներում՝ համայնքային բնակչության մասնակցությամբ: Որպես ծրագրի թիրախ ընտրվել են Արարատի և Վայոց Ձորի մարզերի 6 համայնքների 12 նախադպրոցական հաստատություններ: Մոնիտորինգի նպատակն էր ուսումնասիրել թիրախ համայնքների ՆԴՀ-ների կողմից մատուցվող ընդհանուր ծառայությունների որակը և ներառականության բաղադրիչը՝ համապատասխան բարելավումների առաջարկներով հանդես գալու տեղական ինքնակառավարման մարմիններին (ՏԻՄ) և այլ պատասխանատու և շահագրգիռ մարմիններին ուղղելու համար:

Մոնիտորինգի շրջանակներում օգտագործվել են տվյալների հավաքագրման հետևյալ մեթոդները՝

1. Նախադպրոցական կրթության ոլորտը կարգավորող իրավական ակտերի և ոլորտին առնչվող հետազոտությունների վերլուծություն,
2. Օրենքով սահմանված չափորոշիչներին թիրախ ՆԴՀ-ների պայմանների և ծառայությունների համապատասխանության վերաբերյալ մոնիտորինգ, որն իրականացվել է տեղական մոնիտորների խմբի կողմից,
3. Ծնողների կարծիքներն ու առաջարկները հավաքագրելու նպատակով ֆոկուս-խմբային քննարկումներ,
4. Փորձագիտական հարցազրույցներ՝ ոլորտի փորձագետների և հիմնական դերակատարների, մարզպետարանների և ՏԻՄ-երի ներկայացուցիչների հետ:

Մոնիտորինգի համար ընտրված չափորոշիչները, ըստ որի կազմվել է մոնիտորինգի քարտը, ներառում են հետևյալ ոլորտները.

- Խմբերի խտությունը և ՆԴՀ-երի հաստիքացուցակը,
- Մաքրությունը և հիգիենան,
- Տարածքը և պայմանները (լուսավորություն, տաք ջրամատակարարում, ջեռուցում և օդափոխություն, երեխաների զբոսանքը մաքուր օդում),
- Սննդամթերքի և սննդի պատրաստման վերաբերյալ կանոնները,
- Տարիքին համապատասխան զարգացման պայմանները,
- Կրթական ծրագրերին ներկայացվող պահանջները, ուսումնական պարապմունքների քանակը և տևողությունը:

Հետազոտությունը վեր է հանել մի շարք խնդիրներ՝ ոլորտում սահմանված նորմատիվների պահպանման շրջանակներում և դրանցից դուրս: Մասնավորապես, հետազոտության մասնակիցների կողմից ընդգծվում է նախադպրոցական կրթության հասանելիության խնդիրը, որը հանգեցնում է առկա ՆԴՀ-ների խմբերի գերբեռնվածությանը: Մի շարք ՆԴՀ-երում արձանագրվել են շենքային անբավարար պայմաններ, ջեռուցման ու ջրամատակարարման

խնդիրներ։ Այսպես, երեք ՆԴՀ-երում ջեռուցումն իրականացվում է փայտե և կամ էլեկտրական վառարանների միջոցով, որն ըստ ՀՀ Առողջապահության նախարարի 20.12.2002թ. թիվ 857-Ն հրամանով սահմանված նորմատիվների անթույլատրելի է։ Մաքրության ու հիգիենայի, ինչպես նաև սննդի հետ կապված սակավաթիվ խնդիրներ են արձանագրվել, ենթադրաբար պայմանավորված այս ոլորտներում առկա հաճախակի ստուգումներով և ռիսկայնության գործոնով։

Հետազոտության ուշադրության կենտրոնում էին նաև ուսուցման ու զարգացման ոլորտի խնդիրները։ Ըստ մոնիտորինգի տվյալների՝ ՆԴՀ-երից ոչ մեկում առկա չեն զարգացման՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարի 30.03.2011թ. «Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 257-Ն հրամանով նախատեսված բոլոր պարագաները և պայմանները, բայց ՆԴՀ-երի մեծ մասում ապահովված է այդ պայմանների ավելի քան 75 տոկոսը։ Զարգացման պայմանների առկայության տեսանկյունից ամենախնդրահարույցը Մալիշկա համայնքի մանկապարտեզներն էին, որտեղ առկա էր անհրաժեշտ պայմանների կեսից էլ պակասը։ Ինչ վերաբերում է ուսուցման ծրագրերին, ՆԴՀ-երը հիմնականում պահպանում են ՀՀ Առողջապահության նախարարի 20.12.2002թ. թիվ 857-Ն հրամանով սահմանված ժամանակացույցը, պարապմունքների տևողությունը, ՀՀ Կրթության և գիտության նախարարի 30.03.2011թ. թիվ 257-Ն հրամանով նախատեսված՝ կրթական ծրագրերին ներկայացվող ընդհանուր պահանջները, սակայն դժվար է եզրակացություն կատարել մատուցած կրթական ծառայությունների որակի մասին։ Ըստ փորձագետների՝ չնայած նախադպրոցական կրթության ոլորտում մշակված բազմաթիվ մեթոդական ձեռնարկներին ու իրականացվող վերապատրաստումներին, ընդհանուր առմամբ մանկավարժական կադրերի որակը բավարար չէ, իսկ կրթական ծրագրերի մոնիտորինգի ու մանկավարժների կատարողականության գնահատման համար մեխանիզմներ սահմանված չեն։

Հետազոտության բացահայտումներից է ծնողավարման հմտությունների ուսուցանման մեծ պահանջարկը ծնողների կողմից. փորձագետները ծնողների համար ուսուցողական միջոցառումները համարում են նախադպրոցական կրթության կարևոր բաղադրիչ և առաջարկում պարտադիր դարձնել դրանք։

Առանձին անդրադարձ է կատարվել նախադպրոցական կրթության ներառականության հնարավորություններին։ Այս ոլորտն օրենսդրորեն ամբողջությամբ դեռ կարգավորված չէ, և ՆԴՀ-երը հատուկ կարիքներով երեխաներին ընդունում են ըստ իրենց հայեցողության ու կարողությունների։ Այդուամենայնիվ, նախադպրոցական կրթության՝ ներառական լինելու համար դեռևս բազմաթիվ խոչընդոտներ կան, այդ թվում՝ խմբերի ծանրաբեռնվածությունը, համապատասխան մասնագետների պակասը, ծնողների մտածելակերպի խնդիրները։

Հետազոտության բացահայտումների հիման վրա ներկայացվել են մի շարք առաջարկություններ, այդ թվում.

- ՏԻՄ-երի կողմից ռեսուրսների հատկացումը ՆԴՀ-երում համապատասխան տարածք, պայմաններ և ուսումնական պարագաներ ապահովելու համար,
- մանկավարժների աշխատանքի մոնիտորինգի ու մենթորական աջակցության մեխանիզմների ստեղծումը,
- հատուկ մասնագետների ներառումը ՆԴՀ-երի հաստիքացուցակում,
- միջգերատեսչական համագործակցության բարելավումը և այլն։

Մոնիտորինգի արդյունքները ներկայացնելու և բացահայտված խնդիրների լուծումները ջատագովելու նպատակով ՄԶՀ-ն կազմակերպել է համայնքային քննարկումներ՝ համայնքի շահագրգիռ կողմերի՝ ՏԻՄ-երի, ՆԴՀ-երի տնօրենների ու ծնողների մասնակցությամբ։ Հանդիպումների արդյունքում ծրագրի թիրախ համայնքներում գործողությունների պլաններ մշակվեցին ՆԴՀ-երի հիմնախնդիրների լուծման վերաբերյալ։ Թիրախ համայնքներում իրականացվող իր գործունեության շրջանակներում ՄԶՀ-ն հետևողական կլինի գործողությունների ծրագրերի իրականացմանը հետևելու և հնարավոր աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ։ Իր հետագա աշխատանքներում ՄԶՀ-ն կհամագործակցի նաև պետական մարմինների և ոլորտում ներգրավված տեղական ու միջազգային կազմակերպությունների հետ՝ իրավական մակարդակում բացահայտված խնդիրները լուծելու և զեկույցում շարադրված առաջարկների իրագործումը ջատագովելու նպատակով։

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2016-2017թթ. Մանկական զարգացման հիմնադրամն (ՄԶՀ) իրականացրել է «Մասնակցային գործընթացը կրթության հիմքերում» ծրագիրը, որն ուղղված էր Արարատի և Վայոց Ձորի մարզերի վեց համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) վերահսկողության և կառավարման ներքո գտնվող 12 նախադպրոցական հաստատություններում (ՆԴՀ կամ մանկապարտեզ) մասնակցային մոնիտորինգի իրականացմանը և հաշվետվողականության մեխանիզմի ներդրմանը: Ծրագիրն իրականացվել է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի «Հանրությանը մատուցվող ծառայությունների մասնակցային մոնիտորինգ և սոցիալական հաշվետվողականության խթանում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության կողմից:

Ծրագիրը ներառում էր նախադպրոցական հաստատությունների մոնիտորինգ թիրախ համայնքներում՝ համայնքային բնակչության մասնակցությամբ: Մոնիտորինգի նպատակն էր ուսումնասիրել թիրախ համայնքների ՆԴՀ-ների կողմից մատուցվող հիմնական ծառայությունների որակը և ներառականության բաղադրիչը՝ համապատասխան բարելավումների առաջարկներով հանդես գալու և ՏԻՄ ու պատասխանատու մարմիններին ուղղելու համար: Մոնիտորինգի ընթացքում թիրախ համայնքների նախադպրոցական հաստատությունների ծառայություններից օգտվող ծնողների մասնակցությամբ տեղեկատվություն հավաքագրվեց օրենքով սահմանված չափորոշիչներին ՆԴՀ-ների պայմանների և ծառայությունների համապատասխանության վերաբերյալ: Ի լրումն չափորոշիչների համաձայն հավաքագրված տեղեկատվությանը, ծրագրի շրջանակներում ֆոկուս-խմբային (ՖԽ) քննարկումների միջոցով նպատակ դրվեց նաև բացահայտել ՆԴՀ ծառայություններից օգտվող ծնողների կարծիքները, մտահոգություններն ու առաջարկները նախադպրոցական հաստատությունների ծառայությունների վերաբերյալ: Հայաստանում նախադպրոցական կրթության ընդհանուր իրավիճակը, առկա խնդիրներն ու իրավական բացերը բացահայտելու նպատակով, ի լրումն ընտրված ՆԴՀ-ների մոնիտորինգի, հավաքագրվեցին ոլորտում աշխատող տեղական, պետական ու միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների փորձագիտական կարծիքները:

Սույն զեկույցը ներկայացնում է ծրագրի ընթացքում հավաքագրված տեղեկատվության վերլուծությունը և դրա հիման վրա մշակված առաջարկությունները ոլորտի պատկան մարմիններին, ինչպես նաև նախադպրոցական կրթության հիմնական իրավական հիմքերը ու ոլորտում առկա պետական, տեղական ու միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերը:

# ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## Մոնիտորինգային ծրագրի նկարագիր

«Մասնակցային գործընթացը կրթության հիմքերում» ծրագրի նպատակն է նպաստել Արարատի և Վայոց Ձորի մարզերի նախադպրոցական հաստատություններում

երեխայակենտրոն ծառայությունների մատուցմանը՝ մասնակցային մոնիտորինգի և սոցիալական հաշվետվողականության խթանման միջոցով: Ծրագրի հիմնական բաղադրիչը ՆԴՀ մոնիտորինգն է, որին զուգահեռ աշխատանք է տարվել թիրախ համայնքների բնակչության ու ոլորտային դերակատարների իրավագիտակցության բարձրացման և համայնքի բնակչության կողմից մոնիտորինգի աշխատանքների հետագա շարունակմանն ու պատասխանատու մարմիններին ուղղված հաշվետվողականության պահանջի ուղղությամբ:

Որպես ծրագրի թիրախ ընտրվել են Արարատի և Վայոց Ձորի մարզերի 6 համայնքների 12 նախադպրոցական հաստատություններ: Մարզերի ընտրությունը պայմանավորված է ՄԶՀ ռազմավարական առաջնահերթություններով: Ինչ վերաբերում է համայնքների ընտրությանը, ծրագրում ընդգրկվել են թե՛ համայնքներ, որոնց հետ Մանկական զարգացման հիմնադրամը նախկինում աշխատել է, և թե՛ նոր համայնքներ: Համայնքների ընտրության ընթացքում հաշվի է առնվել նաև մանկապարտեզների առկայությունը, գյուղական և քաղաքային բնակավայր լինելը: Ըստ այդմ, ընտրվեցին երեքական գյուղական և քաղաքային համայնքներ, որոնցից երեքը՝ Արարատի և երեքը՝ Վայոց Ձորի մարզում: Յուրաքանչյուր համայնքից ծրագրում ընդգրկվել է մեկից երեք ՆԴՀ՝ կախված մանկապարտեզների առկայությունից, և, ընդհանուր առմամբ, ծրագրում ներառվել են 12 ՆԴՀ-ներ: Ընտրված համայնքները և մանկապարտեզները հետևյալն են.

*Արարատի մարզ*

1. Այնթապ (Այնթապի մսուր-մանկապարտեզ)
2. Նոր Խարբերդ (Արմենուհի և Մուշեղ Գյուլբենկյանների անվան մանկապարտեզ)
3. Արտաշատ (թիվ 5, 7 և 8 մանկապարտեզներ)

*Վայոց Ձորի մարզ*

4. Եղեգնաձոր (թիվ 1, 2 և 5 մանկապարտեզներ)
5. Վայք (թիվ 1 և 3 մանկապարտեզներ)
6. Մալիշկա (թիվ 1 և 2 մանկապարտեզներ)

Ընտրված համայնքներում հանդիպումներ են կազմակերպվել համայնքի ղեկավարի, ՆԴՀ տնօրենների ու աշխատակազմի և նախադպրոցական տարիքի երեխաների ծնողների հետ: Ծնողների հետ հանդիպումների ընթացքում ներկայացվել են ՆԴՀ վերաբերյալ առկա նորմատիվները և սոցիալական հաշվետվողականության հնարավորությունները, հանդիպումների մասնակիցների կազմից ներգրավվել են այն ծնողները, որոնք ցանկություն են հայտել ծրագրում մասնակցել որպես մոնիտորներ:

## Մոնիտորինգի մեթոդները

Մոնիտորինգի ընթացքում օգտագործվել են տվյալների հավաքագրման հետևյալ մեթոդները՝

1. **Փաստաթղթերի վերլուծություն**, որի ընթացքում ուսումնասիրվել են նախադպրոցական կրթության ոլորտը կարգավորող իրավական ակտերը և ոլորտին առնչվող հետազոտությունները:
2. Օրենքով սահմանված չափորոշիչներին թիրախ ՆԴՀ-ների պայմանների և ծառայությունների համապատասխանության վերաբերյալ **մոնիտորինգ**, որն

իրականացվել է տեղական մոնիտորների խմբի կողմից՝ ըստ մոնիտորինգի քարտի, դիտարկման ու հարցման միջոցով:

3. **Ֆոկուս-խմբային քննարկումների կազմակերպում** ծնողների կարծիքներն ու առաջարկները հավաքագրելու նպատակով:

4. Փորձագիտական կարծիքներն ու առաջարկները հավաքագրելու նպատակով **փորձագիտական հարցազրույցների իրականացում**՝ ոլորտի փորձագետների և հիմնական դերակատարների, մարզպետարանների և ՏԻՄ ներկայացուցիչների հետ:

Մոնիտորինգի համար ընտրված չափորոշիչները, ըստ որի կազմվել է մոնիտորինգի քարտը, ներառում են հետևյալ ոլորտները.

- Խմբերի խտությունը և ՆԴՀ հաստիքացուցակը,
- Մաքրությունը և հիգիենան,
- Տարածքը և պայմանները (լուսավորություն, տաք ջրամատակարարում, ջեռուցում և օդափոխություն, երեխաների զբոսանքը մաքուր օդում),
- Սննդամթերքի և սննդի պատրաստման վերաբերյալ կանոնները,
- Տարիքին համապատասխան զարգացման պայմանները,
- Կրթական ծրագրերին ներկայացվող պահանջները, ուսումնական պարապմունքների քանակը և տևողությունը:

Այս չափորոշիչները առավել մանրամասն նկարագրված են Հավելված 2-ում և հիմնված են հետևյալ իրավական ակտերի վրա.

- ՀՀ Կրթության և գիտության նախարարի 26.01.2007թ. «ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները հաստատելու մասին» թիվ 29-Ն հրամանը[1],
- ՀՀ Կրթության և գիտության նախարարի 30.03.2011թ. «Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 257-Ն հրամանը[2],
- ՀՀ Առողջապահության նախարարի 20.12.2002թ. «Նախադպրոցական կազմակերպությունների (հիմնարկների)» N 2.III.1 սանիտարական նորմերը և կանոնները հաստատելու մասին» թիվ 857-Ն հրամանը[3]:

Մոնիտորինգի քարտերի միջոցով հավաքագրված տվյալները վերլուծվել են ըստ վերոնշյալ նորմատիվներին դրանց համապատասխանության:

Մոնիտորինգի գործընթացի վերաբերյալ նախապես իրականացվել է համայնքների մոնիտորների թիմի վերապատրաստում՝ մասնակցային մոնիտորինգի սկզբունքներին ծանոթանալու և ՆԴՀ մոնիտորինգի գործիքով աշխատելու նպատակով: Ինչպես նշվեց, մոնիտորները հավաքագրվել են կամավոր հիմունքներով՝ ծրագրի վերաբերյալ համայնքային իրազեկման հանդիպումներին մասնակցած ծնողների խմբից: Ընդհանուր առմամբ, մոնիտորինգային աշխատանքներում որպես մոնիտոր ընդգրկվեցին 45 ծնողներ: Մոնիտորների

[1] ՀՀ Կրթության և գիտության նախարարի 26.01.2007թ. թիվ 29-Ն հրամանը
[2] ՀՀ Կրթության և գիտության նախարարի 30.03.2011թ. թիվ 257-Ն հրամանը
[3] ՀՀ Առողջապահության նախարարի 20.12.2002թ. թիվ 857-Ն հրամանը

աշխատանքը կազմակերպելու նպատակով ընտրվել է խմբի համակարգող, որն ի մի է բերել հավաքագրված տեղեկատվությունը և կապ պահպանել ՄԶՀ ծրագրային թիմի հետ: Մոնիտորների խմբերի կողմից յուրաքանչյուր ՆԴՀ համար լրացվել է մեկ մոնիտորինգային քարտ: ՄԶՀ թիմը մշտական կապի մեջ է եղել մոնիտորների խմբերի համակարգողների հետ և համապատասխան խորհրդատվական ու գործնական աջակցություն ցուցաբերել մոնիտորինգի աշխատանքներում:

Ֆոկուս-խմբային քննարկումները իրականացվել են ՄԶՀ թիմի կողմից՝ մոնիտորների խմբի ներկայացուցիչների աջակցությամբ: Յուրաքանչյուր համայնքում իրականացվել է մեկ ֆոկուս-խմբային քննարկում, ընդգրկելով տվյալ համայնքի թիրախ ՆԴՀ-ներից օգտվող 8-ից 13 ծնող:

Փորձագիտական հարցազրույցներն իրականացվել են հետևյալ հաստատությունների և կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝

- ՀՀ կրթության և գիտության նախարարության Կրթության ազգային ինստիտուտ (ԿԱԻ)
- Մարզպետարանների և ՏԻՄ աշխատակազմի կրթության վարչություն/բաժին
- Նախադպրոցական կրթության ոլորտում աշխատող միջազգային և տեղական կազմակերպություններ

Ընդհանուր առմամբ, իրականացվել է յոթ փորձագիտական հարցազրույց:

Մոնիտորինգի քարտերի տվյալները մուտքագրվել են մոնիտորների խմբերի կողմից և ստուգվելուց հետո ներառվել տվյալների ընդհանուր բազայում: Ֆոկուս-խմբային քննարկումների և փորձագիտական հարցազրույցների արդյունքները ենթարկվել են որակական վերլուծության:

### Մոնիտորինգի սահմանափակումները

Մինչ հետազոտության արդյունքները ներկայացնելը, հարկ է նշել հետազոտության մի շարք սահմանափակումների մասին:

Մոնիտորինգի ծրագիրը պիլոտային բնույթ է ունեցել. ծրագրի շրջանակներում ընտրված համայնքները և ՆԴՀ-ները սահմանափակ քանակ են կազմում և չեն կարող ներկայացնել հանրապետության ՆԴՀ-ների իրավիճակը: Այնուամենայնիվ, փորձագիտական հարցազրույցները օգնել են համադրել ստացած տվյալները ոլորտում աշխատող կազմակերպությունների ներկայացուցիչների փորձի ու կարծիքների հետ, և ստացած պատկերը առնվազն վերհանում է այն առաջնային խնդիրները, որ առկա են նախադպրոցական կրթության ոլորտում:

Մոնիտորինգի քարտերի միջոցով ստացված տեղեկությունները հիմնված են ծնողների կողմից հավաքագրված տվյալների վրա, որոնց մի մասը նրանք ստացել են ՆԴՀ աշխատակազմի հարցման միջոցով: Տվյալների լիարժեքության և ճշգրտության վրա, այսպիսով, ազդել է առնվազն երկու գործոն՝ (1) տվյալների հավաքագրման աշխատանքներում ծնողների մասնագիտական հմտությունների և փորձի պակասը և (2) ՆԴՀ ներկայացուցիչների կողմից հարցերի տարատեսակ ընկալումը և իրականության դրական կողմը կամ ցանկալի իրավիճակը ներկայացնելու ցանկությունը: Տվյալների հավաքագրման գործում ծնողների հմտությունները հնարավորինս բարելավելու համար իրականացվել են մոնիտորների դասընթացներ, որոնք կարճաժամկետ բնույթ են կրել:

# ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐԸ

## Նախադպրոցական կրթության իրավական հիմքերը

Նախադպրոցական կրթությունը տարրական ընդհանուր կրթությանը նախապատրաստող, նախադպրոցական կրթական ծրագրով իրականացվող կրթություն է, որն իրականացվում է մինչև երեխայի վեց տարեկան հասակը: Երեխայի՝ նախադպրոցական կրթության ստանալու իրավունքն ամրագրված է և՛ միջազգային ակտերով, որոնք վավերացվել են ՀՀ կողմից, և՛ երկրի օրենսդրությամբ:

«Նախադպրոցական կրթության մասին» 15.11.2005թ. ՀՀ օրենքի[4] 5-րդ հոդվածով սահմանվում են նախադպրոցական կրթության իրականացման հետևյալ սկզբունքները՝

- յուրաքանչյուր երեխայի բազմակողմանի զարգացման, ունակությունների, հակումների, կարողությունների, ընդունակությունների, ձիրքերի դրսևորման համար պայմանների հավասարությունը,
- երեխաների զարգացման, դաստիարակության, ուսուցման և առողջարարական, վերականգնողական խնդիրներին միասնական մոտեցումը,
- ընտանիքի և նախադպրոցական ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների համադասվածությունը,
- նախադպրոցական և ընդհանուր կրթության հաջորդայնությունն ու շարունակականությունը,
- նախադպրոցական կրթության աշխարհիկ բնույթը,
- երեխայի անձնային զարգացման նպատակով անհատական մոտեցման ապահովումը,
- նախադպրոցական տարիքի երեխայի զարգացման առանձնահատկություններին և առողջական վիճակին նախադպրոցական կրթության բովանդակության, մակարդակի և ծավալի համապատասխանությունը:

Նույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանվում են նախադպրոցական կրթության նպատակները՝

ա) երեխայի ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանումն ու ամրապնդումը,

բ) նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը,

գ) դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

Ըստ «Նախադպրոցական կրթության մասին» 15.11.2005թ. ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի՝ ծնողները կամ նրանց օրինական ներկայացուցիչներն իրավունք ունեն՝

ա) ընտրելու նախադպրոցական ուսումնական հաստատությունը և երեխայի կրթություն ստանալու ձևը, այդ թվում՝ ուսուցումը ընտանիքում,

[4] «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք

բ) երեխաների զարգացման, դաստիարակության և ուսուցման հարցերով դիմելու կրթության կառավարման համապատասխան մարմիններ,

գ) համապատասխան պետական մարմիններում պաշտպանելու իրենց երեխաների օրինական շահերը,

դ) մասնակցելու նախադպրոցական կրթության գործընթացին:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունը երեխայի սոցիալականացման վաղ շրջանում կրթության իրավունքի կիրառման կարևոր սոցիալական ինստիտուտ է հանդիսանում: Այն կարևորվում է նաև երեխայի բնականոն զարգացման խթանման համար, քանի որ զարգացման առաջին տարիները հիմնաքարային են, և այս տարիքում ցանկացած ուղղորդում անդրադառնում է երեխայի հետագա սոցիալականացման վրա:

Ըստ «Նախադպրոցական կրթության մասին» 15.11.2005թ. ՀՀ օրենքի հոդված 26-ի՝ ՆԴՀ սաները, բացի խնամքից և դաստիարակությունից, ապահովվում են անվճար անընդհատ բժշկական սպասարկմամբ, որն իրականացնում է տվյալ համայնքը սպասարկող բժշկական կազմակերպությունը: Ըստ նույն օրենքի հոդված 27-ի՝ ուսումնական հաստատությունների հիմնադիրները[5] կազմակերպում են երեխաների սնունդը և պատասխանատվություն է կրում դրա համար: Երեխայի առօրյան կազմակերպվում է երեխայի կարիքներից ելնելով:

Ըստ «Նախադպրոցական կրթության մասին» 15.11.2005թ. ՀՀ օրենքի հոդված 15-ի Նախադպրոցական կրթության բնագավառի կառավարումն իրականացնում են կրթության պետական կառավարման լիազորված մարմինը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, և տեղական ինքնակառավարման մարմինները:

«Տեղական ինքնակառավարման մասին» 07.05.2002թ. ՀՀ օրենքի[6] 46-րդ հոդվածի համաձայն՝ կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում համայնքի ղեկավարը, ի թիվս այլ գործողությունների, իրականացնում է հետևյալ լիազորությունները.

1) կազմակերպում է նախադպրոցական և արտադպրոցական կրթության իրականացումը համայնքի տարածքում,

2) կազմակերպում և կառավարում է համայնքային ենթակայության դպրոցների, մանկապարտեզների, ակումբների, մշակույթի տների, երիտասարդական կենտրոնների, գրադարանների, կրթական, մշակութային և երիտասարդական այլ հիմնարկների ու կազմակերպությունների գործունեությունը, դրանց շահագործման և նորոգման աշխատանքները:

Այսինքն, նախադպրոցական հաստատության գործունեության անմիջական կազմակերպումը և կառավարումը ՏԻՄ լիազորությունների շրջանակներում է:

Ի հավելումն նշենք, որ «Տեղական ինքնակառավարման մասին» 07.05.2002թ. օրենքում ամրագրված՝ տեղական ինքնակառավարման սկզբունքներից են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հաշվետվողականությունը, հրապարակայնությունն ու

---

[5] Համայնքի ֆինանսավորման ներքո գտնվող և համայնքային ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ ունեցող ՆԴՀ-ների հիմնադիրը համայնքն է՝ ի դեմս ՏԻՄ-ի:

[6] «Տեղական ինքնակառավարման մասին» 07.05.2002թ. ՀՀ օրենք

թափանցիկությունը և տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցությունը[7]: Այսպիսով, համայնքի բնակիչները կարող են մասնակից լինել նախադպրոցական կրթության գործընթացին՝ հետևելով ՆԴՀ-ների կողմից մատուցվող ծառայությունների բովանդակությանը և որակին, հաշվետվողականություն ու թափանցիկություն պահանջելով ՏԻՄ-ից և համապատասխան առաջարկներ ներկայացնելով լիազոր մարմիններին ու կառույցներին: Մասնակցության ձևերից մեկը նախադպրոցական հաստատությունների ծառայությունների մոնիտորինգի միջոցով ծառայությունների որակի մասին տեղեկատվության հավաքագրումն է՝ համապատասխան մարմիններին ներկայացնելու և բարելավման քայլեր ձեռնարկելու նպատակով:

Բացի «Նախադպրոցական կրթության մասին» 15.11.2005թ. և «Տեղական ինքնակառավարման մասին» 07.05.2002թ. օրենքներից, նախադպրոցական կրթության ոլորտը կարգավորվում է ՀՀ կրթության և գիտության ու ՀՀ առողջապահության նախարարների համապատասխան հրամաններով: Մասնավորապես, իրենց լիազորությունների շրջանակներում նրանք ստորագրել են համապատասխան հրամաններ, նախատեսել նախադպրոցական կրթության մի շարք չափորոշիչներ: Այսպես, ՀՀ կրթության և գիտության նախարարի 26.01.2007թ. թիվ 29-Ն հրամանով հաստատվել է ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները, իսկ ՀՀ կրթության և գիտության նախարարի 30.03.2011թ. թիվ 257 հրամանով՝ խմբերի տեսակներն ըստ տարիքի, կրթական ծրագրերին ու զարգացման պայմաններին ներկայացվող պահանջները և երեխաների զարգացման և կրթական չափորոշիչները: ՀՀ առողջապահության նախարարի 20.12.2002թ. «Նախադպրոցական կազմակերպությունների (հիմնարկների)» N 2.III.1 սանիտարական նորմերը և կանոնները հաստատելու մասին» թիվ 857 հրամանով հաստատվել են նախադպրոցական կազմակերպությունների (հիմնարկների) սանիտարական նորմերը և կանոնները:

## Ընդհանուր իրավիճակ

Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2015թ. ՆԴՀ հաճախել է 3-5 տարեկան երեխաների 51,4 տոկոսը[8]: 2017թ. հրապարակված «Հայաստանում նախադպրոցական կրթության մատչելիության հետազոտության» արդյունքները ցույց են տալիս, որ նախադպրոցական կրթության համակարգում 3-6 տարեկան երեխաների չընդգրկվածության ցուցանիշը 32,7 տոկոս է, ընդ որում, գյուղաբնակ երեխաներն ավելի շատ են դուրս մնում ծառայություններից, քան քաղաքաբնակները[9]:

2016թ. մշակվեց Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2016-2025թթ. պետական ծրագիրը, որը սակայն մինչ օրս հաստատված չէ օրենքով: Այս ծրագրով սահմանված նպատակներից է՝ մինչև 2025թ. ապահովել 3-6 տարեկան բոլոր երեխաների համար հավասար հասանելի և որակյալ նախադպրոցական կրթության մատչելիություն: Այսինքն, նախադպրոցական կրթության զարգացման հիմնական գերակայություններն են

[7] «Տեղական ինքնակառավարման մասին» 07.05.2002թ. ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետ

[8] Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2016, էջ 156

[9] «Հայաստանում նախադպրոցական կրթության մատչելիության հետազոտություն», վերլուծական հաշվետվություն, էջ 16, Մեդիա մոդել, Սեյվ դը չիլդրեն, Երևան, 2017

նախադպրոցական կրթության մատչելիության և հասանելիության ապահովումը և կրթության որակի բարձրացումը:

ՀՀ կառավարության 2012թ. գործողությունների ծրագրով նախատեսվել է նախադպրոցական կրթության հասանելիության ապահովումը, որի իրականացման համար ՆԴՀ չունեցող համայնքում ներդրվել է նախակրթարանների համակարգը[10]: Համաշխարհային բանկի վարկային ծրագրի շրջանակներում իրականացվում է «Դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում» ենթածրագիրը, որի շրջանակներում տարբեր համայնքներում, գերազանցապես գյուղական բնակավայրերում, դպրոցների նյութատեխնիկական բազայի հիման վրա ստեղծվում են 5-6 տարեկան երեխաների նախակրթարաններ: Ծրագիրը ներառում է նաև նախակրթարանների տնօրենների ու մանկավարժների վերապատրաստում, մոնիտորինգ ու մենթորական աջակցություն՝ Համաշխարհային բանկի «Կրթության որակ և համապատասխանություն» ծրագրի շրջանակներում[11]:

Փորձագետներն ընդհանուր առմամբ որոշակի առաջընթաց են արձանագրում ոլորտային քաղաքականության, վերապատրաստումների, ներառականության հետ կապված ընկալումների ոլորտում:

> *«Հիմա թվաքանակը մեծացել է լավ մանկապարտեզների, հիմա գոնե հասկանում են, որ չի կարելի նստացնել այդպես երեխաներին պասիվ դիրքով ու բան կարդալ ու չնայել այդ երեխային, […] այսինքն այդ խաղային մեթոդները ավելի շատ են կիրառվում»* (հասարակական կազմակերպության ներկայացուցիչ):

Փորձագետները նշում են, որ իրավական կարգավորումների առումով խնդիրները այնքան շատ չեն, որքան օրենքի կիրառման ոլորտում:

Առանձին համայնքներում իրականացված քննարկումների ընթացքում ծնողները, ընդհանուր առմամբ, բարձր են գնահատել նախադպրոցական հաստատության դերը երեխայի կրթության և զարգացման գործում: Մասնավորապես, կարևորվել են հասակակիցների հետ շփման, հասարակության մեջ ինտեգրման, խոսքի զարգացման և ինքնուրույնության ձեռքբերման գործոնները: Ծնողները նշում են նաև կարգապահության, օրվա ռեժիմի պահպանման կարևորության, քաղաքավարության կանոնները սովորելու մասին: Մանկապարտեզ հաճախելը ընդլայնում է երեխաների հետաքրքրությունները, բազմաբովանդակ և հագեցած դարձնում նրանց առօրյան: Կարևորվում է դաստիարակների մասնագիտական մոտեցումը՝ երեխայի դաստիարակությանը, վարքային խնդիրներին արձագանքելիս:

Եղեգնաձորի մանկապարտեզներից մեկում ուսուցումն իրականացվում է «Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամի մշակած ծրագրով, որը ծնողները բարձր են գնահատում, գտնելով, որ այն մեծ դեր ունի երեխային դպրոցին պատրաստելու գործում: Մալիշկայի մանկապարտեզների ծնողները գնահատում են ծնողների հետ հարաբերությունների կարևորումը մանկապարտեզում, դաստիարակի կողմից ծնողին հետադարձ կապի տրամադրումը: Առանձին մանկապարտեզներում ծնողների կողմից գնահատվում է նաև երեխաների ֆիզիկական զարգացման բաղադրիչը: Նոր Խարբերդում առավել բարձր են

[10] ՀՀ կառավարության 18.06.2011թ. N 730-Ա որոշման հավելված, ՀՀ կառավարության ծրագիր, էջ 8

[11] Աղբյուր՝ ԿԳՆ Կրթական ծրագրերի կենտրոն ծրագրերի իրականացման գրասենյակի կայքէջ

գնահատում անձնակազմի բարձր մասնագիտական պատրաստվածությունը և մարդկային հատկանիշները: Եղեգնաձորում նշում են, որ տնօրեններն ու դաստիարակները պատրաստակամ են անգամ իրենց միջոցները ներդնել տարբեր խնդիրների լուծման համար, մասնավորապես դաստիարակները դիդակտիկ նյութերի պակասի պայմաններում կարողանում են իրենց միջոցներով և ձեռքի աշխատանքի միջոցով պատրաստել նյութերը:

Միևնույն ժամանակ, փորձագետների ու ծնողների կողմից խնդիրներ են արձանագրվում թե՛ ուսուցման ու զարգացման ոլորտում, թե՛ ընդհանուր նյութատեխնիկական զինվածության, շենքային պայմանների և ուսուցման ու զարգացման պարագաների առկայության առումով: Այս խնդիրները կարտացոլվեն վերլուծության հետագա համապատասխան բաժիններում:

### Խմբերի խտություն

Նախադպրոցական հաստատությունների խմբերի գերբեռնվածությունը հաճախակի քննարկվող խնդիր է Հայաստանում: 2015թ. իր զեկույցում ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձել է այս խնդրին՝ ընդգծելով, որ Երևանում նախադպրոցական հաստատությունների գերբեռնվածությունը հիմնականում դրսևորվել է թե՛ մանկապարտեզ հաճախել ցանկացող հերթագրված երեխաների թվաքանակի աճով, թե՛ անմիջապես մանկապարտեզի խմբերում, հակառակ օրենքի պահանջի, երեխաների առավելագույն քանակի գերազանցմամբ[12]:

Մոնիտորինգի արդյունքները ցույց են տալիս, որ այս խնդիրն առկա է ոչ միայն Երևանում: Մասնավորապես, Նոր Խարբերդում և Այնթապում ծնողների ՖԽ քննարկումների ընթացքում բացահայտվեց, որ մանկապարտեզում տարածքի և խմբերի անբավարար քանակը հնարավորություն չի տալիս ՆԴՀ-ում ընդգրկել համայնքի բազմաթիվ երեխաների: Նոր Խարբերդում, օրինակ, ՆԴՀ-ում ընդգրկված էր հերթագրված երեխաների մոտ կեսը:

Որպես հետևանք, համայնքներից շատերում խնդիր է մանկապարտեզների խմբերի գերբեռնվածությունը: Տասներկու մանկապարտեզներից միայն երկուսն էին (Եղեգնաձոր համայնքում), որ պահպանել էին ՀՀ կրթության և գիտության նախարարի 26.01.2007թ. թիվ 29-Ն հրամանով[13] նախատեսված երեխաների քանակի նորմատիվները խմբերում՝ մեկ խմբում ընդգրկելով 25-30 երեխա: Մյուս համայնքներում երեխաների առավելագույն թիվը խմբում տատանվում է 33-ից մինչև 42 հոգի (երեխաների առավելագույն քանակը գրանցվել է Այնթապի մանկապարտեզի կրտսեր խմբում):

Փորձագետները ևս անդրադառնում են մանկապարտեզների ցածր հասանելիության՝ այսինքն, ՆԴՀ-ներում համայնքում բնակվող հնարավորինս շատ երեխաներ ընդգրկելու սահմանափակ հնարավորությունների ու արդյունքում խմբերի գերբեռնվածության խնդրին:

> *«Տարբեր են պատճառները հասանելիության խնդրի, եթե խոսում ենք ֆիզիկական հասանելիության մասին՝ հին մանկապարտեզները փակվել են, իսկ նորերը չեն ստեղծվել, կամ եթե իրենք գյուղական վայրերում ավելի շատ սեզոնային բնույթ են կրում, որովհետև ի վիճակի չի տեղական համայնքը պահել մանկապարտեզը, հոգալ այդ ծախսերը, վերջացրած նրանով, որ քաղաքներում, հատկապես Երևանում, մանկապարտեզները ծանրաբեռնված են և չեն*

---

[12] Տարեկան հաղորդում 2015թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին, Երևան 2016, էջ 205:
[13] ՀՀ Կրթության և գիտության նախարարի 26.01.2007թ. թիվ 29-Ն հրաման, հավելված 2՝ «ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների խմբերի խտությունը և նորմատիվները»

*կարողանում ընդունել երեխաներին»* (միջազգային կազմակերպության փորձագետ):

Հասանելիության խնդիրը Երևանում պայմանավորված է նաև պետական մանկապարտեզների մասնավորեցման գործընթացով, որն ընթանում է մինչ այժմ:

*«Մանկապարտեզի կեսը պետականից դարձրել են մասնավոր, ըստ օրենքի նման բան չի կարելի, բայց արվում է քանի մանկապարտեզում, ասում է՝ տեղ չկա, թող ծնողը բերի մասնավոր»* (պետական կառույցի ներկայացուցիչ):

Մանկապարտեզների խմբերի մեծ խտությունը մասնավորապես դժվարացնում է երեխայակենտրոն ուսուցման, անհատական մոտեցման կիրառումը: Բնականաբար, կրթության և զարգացման չափորոշիչները ետին պլան են մղվում նման ծանրաբեռնվածության պայմաններում:

*«Երևանում խմբերում 45-50 հոգի են լինում, ըստ չափորոշիչի 25-30 պետք ա լինի, բնականաբար, մեկ մանկավարժը չի կարողանում դայակի հետ միասին ապահովել այդ երեխաների խնամքը, էլ ի՞նչ խոսք է գնում դաստիարակության և կրթության մասին»* (միջազգային կազմակերպության ներկայացուցիչ):

*«Մի հերթի դաստիրակը աշխատում է միջինը 35 երեխայի հետ, իսկ չափորոշիչները պահանջում են, որ այդ երեխայի զարգացման ամեն մի փուլը դիտարկվի հենց չափորոշիչների հիման վրա, [հնարավոր չէ] նույն մարդը և՛ երեխաների հետ զբաղվի, և՛ պարապմունք անցկացնի, և այդ պարագաները ապահովի ու միաժամանակ դիտարկի»* (պետական կառույցի ներկայացուցիչ):

Խմբերի հագեցվածությունը, մեկ դաստիարակին բաժին ընկնող՝ անգամ չափորոշիչներով նախատեսված սաների թիվը, ծնողների կողմից ևս դիտարկվում է որպես խնդիր, որը դաստիարակի լարվածության պատճառ է հանդիսանում և դժվարացնում է երեխաների անհատական կարիքների հասցեագրումը:

ՖԽ մասնակից ծնողները, մասնավորապես Եղեգնաձորում և Նոր Խարբերդում, խնդիր են համարում 2-3 տարեկանների խմբի բացակայությունը, քանի որ նման հնարավորության բացակայության պատճառով մայրերը չեն կարողանում աշխատել մինչև երեխայի 3 տարեկանը լրանալը: Ուսումնասիրված մանկապարտեզներից մսուրային խումբ կար միայն Այնթապի մսուր-մանկապարտեզում:

Ծրագրում ընդգրկված մանկապարտեզների մի մասը հավաքագրել են տարբեր տարիքային կազմով խմբեր, նպատակ ունենալով օպտիմալացնել խմբերի քանակը և համապատասխանաբար՝ մանկավարժների հաստիքաքանակը: Այդպիսի խմբեր կային բոլոր թիրախ համայնքներում, բացի Այնթապից: Ըստ քննարկումներին մասնակցած ծնողների՝ այս հանգամանքը ևս խնդրահարույց է երեխաների զարգացման տեսանկյունից, քանի որ տարբեր տարիքային խմբերի համար տարբեր տևողության ու բովանդակության պարապմունքներ են նախատեսված, և թե՛ պարապմունքները համատեղ անցկացնելու դեպքում, թե՛ երեխաներին նույն խմբասենյակում խմբերի բաժանելիս կրթական գործընթացը տուժում է:

*«Պարապմունքները անցկացնելը կրկնակի անգամ բարդանում է, որովհետև երեք տարեկան երեխան նստում է չորս ու կես տարեկան երեխայի հետ և չի կարելի, որ նրանք նույն տեղեկությունը ստանան»* (Եղեգնաձորի քննարկման մասնակից ծնող):

Մալիշկայում ծնողները հատկապես շեշտում էին կրտսեր տարիքի երեխաներին ավելի մեծերի հետ մեկ խմբում ներառելու խնդիրը, քանի որ փոքրերի կարիքները ավելի շատ խնամքի հետ են կապված, և որպես հետևանք՝ դժվարանում է մեծերի հետ կրթական աշխատանքը, փոխվում է նաև ընդհանուր մթնոլորտը:

### Հաստիքացուցակ

Մանկապարտեզների մեծ մասում հաստիքացուցակը չի համապատասխանում ԿԳՆ թիվ 29 հրամանով սահմանված օրինակելի հաստիքացուցակին (օրինակելի հաստիքացուցակը ներկայացված է Հավելված 2-ում): Մասնավորապես, ուսումնասիրված 12 մանկապարտեզներից մեկում բացակայում է գլխավոր հաշվապահը, երկուական մանկապարտեզում՝ մեթոդիստը, խոհարարի օգնականը, օժանդակ բանվորը, երեքում՝ շենքերը սպասարկող և նորոգող բանվորը, չորսում՝ տնտեսվարը, հինգում՝ դերձակը, յոթում՝ հաշվետար-գանձապահը, ութում՝ գործավարը: Հաստիքների պակասի տեսանկյունից հատկապես խնդրահարույց է վիճակը Եղեգնաձորի և Արտաշատի մանկապարտեզներում: Մյուս կողմից, առանձին մանկապարտեզներում հատուկ մասնագետների հաստիքներ են ներառված, որոնք պարտադրված չեն չափորոշիչներով, սակայն անհրաժեշտ՝ հատկապես հատուկ կարիքներով երեխաների ներառման դեպքում: Մասնավորապես, Արտաշատի թիվ 8 մանկապարտեզում, որտեղ հաճախում են մտավոր խնդիրներ ունեցող 7 երեխա, առկա է հոգեբան, իսկ թիվ 5-ում աշխատում է լոգոպեդ, որը շրջում է նաև քաղաքի մյուս մանկապարտեզներում: Հոգեբանի հաստիք կա նաև Այնթապի մսուր-մանկապարտեզում, իսկ Վայքի մանկապարտեզներից մեկում կես դրույքով աշխատում է սոցիալական աշխատող: Հարկ է նշել, որ հաստիքացուցակի վերաբերյալ որոշումը կայացվում է ՏԻՄ կողմից՝ սահմանված չափորոշիչների շրջանակներում և տնօրենի կամ ՏԻՄ պատասխանատու աշխատակազմի առաջարկի հիման վրա:

Ծնողները շատ են կարևորել հատուկ մասնագետների առկայությունը մանկապարտեզում: Համայնքային հանդիպումների ընթացքում բացահայտվեց, որ բազմաթիվ երեխաներ կան, որոնք խոսքի զարգացման, կրթության առանձնահատուկ պայմանների, հոգեբանական կամ ֆիզիկական առողջության հետ կապված խնդիրներ ունեն, և դաստիարակների՝ անգամ բարձրորակ մասնագիտական հմտությունները չեն կարող օգնել հասցեագրել այդ երեխաների կարիքները՝ անհրաժեշտ են հատուկ մասնագետներ: Փորձագետները ևս ընդգծում են, որ հատկապես «կրթություն բոլորի համար» սկզբունքով գործող ու տարբեր խնդիրներով երեխաներին ներառող մանկապարտեզներ ունենալու համար հարկավոր է բազմամասնագիտական խմբերի ապահովումը ՆԴՀ-ներում: Որոշ ՏԻՄ-եր կարողացել են ապահովել այդ հաստիքները, օրինակ՝ Արտաշատի քաղաքապետարանը երկու լոգոպեդի և երկու սոցիալական մանկավարժի հաստիք է տրամադրել յոթ մանկապարտեզների համար, որը, սակայն, ըստ հետազոտության մասնակիցների, ևս բավարար չի լինում, քանի որ անելիքները շատ են: Խնդիր կա նաև մարզերում լավ մասնագետներ գտնելու առումով. այսպես, Արտաշատի քաղաքապետարանի ներկայացուցիչը պատրաստակամություն հայտնեց հոգեբանի հաստիք կցել մանկապարտեզներին, եթե համայնքում լավ մասնագետ լինի:

Հաստիքացուցակի հետ կապված մեկ այլ խնդիր վերաբերում է մանկապարտեզների աշխատանքային ժամերին: Մասնավորապես, ուսումնասիրված մանկապարտեզների մեծ մասը աշխատում են ժամը 9:00-ից մինչև 17:00-ն, և մանկավարժները ընդգրկված են մեկ դրույքով: Մինչդեռ աշխատող ծնողների համար այդ ժամերը խնդրահարույց են, քանի որ նրանք դժվարանում են համապատասխանեցնել մանկապարտեզների աշխատանքային ժամերը իրենց

աշխատանքի ժամերի հետ, որոնք, որպես կանոն, սահմանված են 9:00-ից 18:00-ն: Որոշ մանկապարտեզներ, ծնողներին ընդառաջելով, ոչ պաշտոնապես ավելի շուտ են սկսում աշխատանքը, որը, սակայն, խնդրի համակարգային լուծում չէ: Մանկապարտեզի աշխատանքային ժամերը երկարացնելու համար անհրաժեշտ է ավելացնել մանկավարժի հաստիքը, որի համար ՏԻՄ-երը համապատասխան ֆինանսավորում չեն տրամադրում:

## Տարածքը և պայմանները

Թե՛ փորձագետների, թե՛ ֆոկուս խմբերի մասնակից ծնողների կողմից նշվել է մանկապարտեզների **շենքային պայմանների** խնդիրը:

> *«Որ մտնում ես մանկապարտեզների շենք, պետական մանկապարտեզը վերցնենք, ոչ թե մասնավորը, այդ մաշվածությունը, այդ պոկված բռնակները, այդ զուգարանակոնքերը, որոնց վրա չկա համապատասխան նստատեղը… Ի վերջո, եթե խոսում ենք կրթության որակի մասին, ֆիզիկական պայմանները կրթության որակի կարևոր մասն են կազմում: Այդ ուսուցման միջավայրը շատ կարևոր է, ու բազմաթիվ-բազմաթիվ հետազոտություններ կան, որ ապացուցում են դրանց կարևորությունը»* (միջազգային կազմակերպության ներկայացուցիչ):

Թեև առանձին ծրագրեր ու վերանորոգումներ արվում են, այս ոլորտում դեռևս շատ անելիքներ կան: Հետազոտության մեջ ընդգրկված մանկապարտեզների մի մասը բարվոք վիճակում է գտնվում, ինչպես օրինակ Այնթապի մանկապարտեզը, որը հիմնավոր վերանորոգված, լայնարձակ միջանցքով ու խմբասենյակներով տարածք ունի: Մի շարք մանկապարտեզներ, սակայն, վերանորոգման խիստ կարիք ունեն: Օրինակ՝ անբավարար շենքային պայմանները բազմիցս մատնանշվում են Եղեգնաձորի թիվ 2 մանկապարտեզի ծնողների կողմից, ըստ որոնց՝ մանկապարտեզի շենքը վթարային վիճակում է:

> *«Պարտեզների շենքային վիճակը, ես կասեի բացարձակապես վտանգավոր է, որովհետև դաստիարակները ամբողջությամբ պլակատներով ծածկում են թերությունները, մի գուցե ծնողների աչքին չի երևում, բայց եթե բաց անենք՝ ահավոր վիճակ է»* (Եղեգնաձորի քննարկման մասնակից ծնող):

Մալիշկայում նույնպես նշում են շենքային վատ պայմանների մասին, մասնավորապես թիվ 1 մանկապարտեզում, որը ստեղծվել է այլ նպատակով կառուցված շենքի բազայի վրա, իսկ թիվ 2 մանկապարտեզում, չնայած վերջերս իրականացված վերանորոգմանը, մնացել են չվերանորոգված սենյակներ:

Նոր Խարբերդի մանկապարտեզում հիմնական խնդիրը տարածքի պակասն է. խմբերից մեկը տեղակայված է դահլիճում, որը հարմարեցվել է որպես խմբասենյակ: Վայքի մանկապարտեզներում տարածքի սահմանափակությունը ևս խնդիր է:

ԿԳՆ թիվ 257 հրամանով երեխաների զարգացման պայմանների շարքում նախատեսված է երաժշտական դահլիճ, մարզադահլիճ, առանձին տարածք օտար լեզվի պարապմունքների համար, առանձին տարածք կենդանի բնության համար (ձմեռային այգի, կենդանական անկյուն և այլն), բակում և տարածքում՝ պայմաններ երեխաների ֆիզիկական զարգացման համար, բակում, հողամասում՝ խաղային սարքավորումներ (զարգացման պայմանների ամբողջական ցուցակը տե՛ս Հավելված 2-ում):

Թվարկվածներից առավել քիչ են ապահովված օտար լեզվի պարապմունքների, ինչպես նաև՝ կենդանի բնության համար առանձին տարածքները, որոնք առկա են 12 մանկապարտեզներից երեքում: Սակայն քննարկումների ժամանակ այս խնդիրները չեն կարևորվել ծնողների կողմից, փոխարենը մի քանի մանկապարտեզներում քննարկվել է դահլիճի և բակում խաղահրապարակի բացակայությունը: Այսպես, Եղեգնաձորի և Մալիշկայի որոշ մանկապարտեզներում չկա երաժշտական դահլիճ, իսկ մանկապարտեզների մեծամասնությունում չկա առանձին մարզադահլիճ՝ ֆիզկուլտուրայի պարապմունքների համար: Եղեգնաձորի, Մալիշկայի, Վայքի մանկապարտեզներում ծնողները որպես խնդիր նշել են բակում խաղահրապարակի բացակայությունը կամ չափազանց փոքր տարածքը, ինչպես նաև գույքի պակասը կամ բացակայությունը խաղահրապարակում:

Խմբասենյակի ու ննջասենյակների պարագայում հիմնական խնդիրը այդ երկու սենյակների համակցումն է, որը տարածքի պակասից է բխում:

> *«Պետական մեր սովետական ստանդարտներով տարածքի խնդիր չունեինք, կար առանձին քնելու սենյակ, կար առանձին ուտելու սենյակ, կար առանձին պարապմունքների սենյակ, հիմա փորձել են միավորել, նույն սենյակում է ամեն ինչ տեղի ունենում, որպեսզի սենյակ ավելացնեն մասնավոր մանկապարտեզին»* (միջազգային կազմակերպության ներկայացուցիչ):

Մոնիտորինգի արդյունքները ցույց են տալիս, որ Եղեգնաձորի թիվ 1, Մալիշկայի թիվ 1, Վայքի թիվ 1 մանկապարտեզների բոլոր խմբասենյակներում, ըստ ծնողների գնահատականների, տարածքը չի համապատասխանում երեխաների թվին և շարժունակության պահանջներին, իսկ Եղեգնաձորի թիվ 2, Մալիշկայի թիվ 2, Վայքի թիվ 3 մանկապարտեզներում՝ մասամբ է համապատասխանում, հիմնականում պայմանավորված երեխաների մեծ թվով: Եղեգնաձորի թիվ 1 և Վայքի թիվ 1 մանկապարտեզներում ննջասենյակների մահճակալների քանակը երեխաների թվին չի համապատասխանում ավագ խմբում, Մալիշկայի թիվ 1 մանկապարտեզում նույնպես նշում են ննջասենյակների անհամապատասխան պայմանների մասին: Մյուս մանկապարտեզներում խմբասենյակների ու ննջասենյակների տարածքի հետ կապված խնդիրներ չեն նշվել:

**Լուսավորության** ու ջեռուցման հետ կապված խնդիրները համեմատաբար քիչ են: Ըստ ԱՆ թիվ 857-Ն հրամանի 4.1 կետի, խմբասենյակներում, ննջարաններում, բժշկական սենյակում, մեկուսարանում, հիվանդասենյակում, դահլիճներում բնական լուսավորության գործակիցը պետք է լինի 1,5%-ից ոչ պակաս: Արտաշատի թիվ 7 մանկապարտեզի մոնիտորինգի արդյունքները ցույց են տալիս, որ ննջարաններում և դահլիճում պատուհան չկա, և բնական լուսավորությունը ապահովվում է դեպի այդ սենյակներ բացվող խմբասենյակների և խոհանոցի պատուհանների միջոցով: Ծրագրի տեխնիկական հնարավորությունները թույլ չեն տվել գնահատել մանկապարտեզներում լուսավորության գործակիցը՝ նորմատիվներին համապատասխանությունը գնահատելու համար:

Ծրագրում ընդգրկված մանկապարտեզներում **ջեռուցումը** հիմնականում ապահովվում է կենտրոնացված ջեռուցման (լոկալ ջեռուցման համակարգի) միջոցով՝ համաձայն ԱՆ թիվ 857-Ն հրամանի 5.2 կետի: Բացառություն են կազմում Եղեգնաձորի թիվ 1 և 2 մանկապարտեզները, որտեղ ջեռուցումն իրականացվում է փայտի և էլեկտրական վառարանների միջոցով, և Մալիշկայի թիվ 1 մանկապարտեզը, որտեղ օգտագործվում է էլեկտրական վառարան: Այս մանկապարտեզները հիմնականում սեզոնային սկզբունքով են աշխատում: Ըստ ԱՆ վերոնշյալ

հրամանի, սակայն, վառարանային ջեռուցումը թույլատրվում է մինչև 50 երեխա ունեցող մեկ հարկանի գյուղական մանկապարտեզներում միայն, այն էլ՝ միջանցքներում և երեխաների բացակայությամբ։ Եղեգնաձորի թիվ 1 մանկապարտեզի կրտսեր խմբերում, սակայն, առկա են ցանկապատված փայտե վառարաններ, իսկ ջերմամեկուսացման նպատակով այս խմբերում պատուհանները ցելոֆանապատված են, որը խոչընդոտում է բնական լուսավորությանը և օդափոխությանը։ Եղեգնաձորի թիվ 2 մանկապարտեզում փայտի վառարանից զատ, ձմռանը սանհանգույցներում օգտագործվում է էլեկտրական վառարան, որը նույնպես չի համապատասխանում նորմերին և վտանգ է պարունակում երեխաների համար։ Այս երեք մանկապարտեզներում էլ ձմռանը մանկապարտեզների աշխատանքը մեծ մասամբ ընդհատվում է և վերսկսվում եղանակի տաքանալու հետ։

Ինչ վերաբերում է **տաք ջրամատակարարմանը**, այստեղ խնդիրները շատ են։ Թեև ԱՆ թիվ 857-Ն հրամանի 5.1 կետով նախատեսված է տաք ջրամատակարարում խոհանոցում, լվացքատանը, բոլոր խմբերի բուֆետային մասում և սանհանգույցներում, մանկապարտեզներից միայն չորսն են կարողանում ապահովել այս դրույթը։ Այսպես, տաք ջուր չկա Արտաշատի, Եղեգնաձորի ու Վայքի գրեթե բոլոր մանկապարտեզների սանհանգույցներում (բացառություն է միայն Եղեգնաձորի թիվ 5 մանկապարտեզը), Մալիշկայի թիվ 2 մանկապարտեզի խոհանոցում և լվացքատանը, Եղեգնաձորի թիվ 2 և Վայքի երկու մանկապարտեզների լվացքատներում։ Որոշ մանկապարտեզներում անգամ հոսող ջրի խնդիր կա. Այնթապի ծնողներն, օրինակ, նշում են, որ մանկապարտեզում չկա պահեստավորված ջուր, որը հնարավոր լիներ օգտագործել ջրամատակարարման դադարեցման դեպքում։

ԱՆ թիվ 857-Ն հրամանի 8.1 կետով պարտադիր է ամենօրյա երկկողմանի **օդափոխությունը**՝ երեխաների բացակայության ժամանակ, իսկ երեխաների ներկայությամբ թույլատրվում է միակողմանի օդափոխություն։ Սակայն մոնիտորինգի տվյալները ցույց են տալիս, որ ոչ միշտ է կատարվում երկկողմանի օդափոխություն, իսկ ձմռան սեզոնին որոշ մանկապարտեզներում ընդհանրապես օդափոխություն չի կատարվում։ Մանկապարտեզները թերանում են նաև երեխաներին օրական երկու անգամ զբոսանքի տանելու հարցում, որը պարտադիր է ըստ ԱՆ թիվ 857-Ն հրամանի 8.4 կետի։ Որոշ դեպքերում խնդիրը բակային տարածքի բացակայության կամ անհարմարության հետ է կապված։ Ձմռան սեզոնին մանկապարտեզների մեծ մասում երեխաներին դուրս են տանում օրական մեկ անգամ կամ ընդհանրապես չեն տանում։ Բնականաբար, ջեռուցման խնդիրների և երեխաների մեծ քանակի առկայության պարագայում օդափոխության ու զբոսանքի տանելու հետ կապված խնդիրներ կարող են առաջանալ, որով և կարելի է բացատրել այս նորմատիվների հարցում մանկապարտեզների թերացումները։

ՖԽ քննարկումների ընթացքում իրականացված հարցման տվյալներով որոշ համայնքներում ծնողները մանկապարտեզների տարածքը և պայմանները զգալիորեն ավելի ցածր են գնահատել, քան ծառայությունները (Գծապատկեր 1)։

**Գծապատկեր 1. Ընդհանուր առմամբ որքանո՞վ եք բավարարված մանկապարտեզի տարածքով և պայմաններով (միջին գնահատական ըստ համայնքների)[14]**




Կարելի է ենթադրել, որ համեմատաբար ցածր գնահատականները պայմանավորված են Եղեգնաձորում շենքային պայմանների ու ջեռուցման խնդիրներով, որոնք նկարագրված են վերը, իսկ Վայքի և Նոր Խարբերդի մանկապարտեզներում՝ տարածքի սահմանափակությամբ: Մանկապարտեզների միջին միավորները դիտարկելիս պարզ է դառնում, որ տարածքի ու պայմանների գնահատականը համեմատաբար ցածր է Արտաշատի թիվ 5 (միջին գնահատական՝ 3,6) և Մալիշկայի թիվ 1 (միջին գնահատական՝ 3) մանկապարտեզներում: Ինչպես նշվել է վերը, Մալիշկայի թիվ 1 մանկապարտեզը վերանորոգման և ջեռուցման կարիք ունի: Ինչ վերաբերում է Արտաշատի թիվ 5 մանկապարտեզին, մոնիտորինգի ընթացքում այստեղ բացահայտված խնդիրը սանհանգույցներում տաք ջրամատակարարման բացակայությունն էր, որն էլ, հնարավոր է, ցածր գնահատականի է հանգեցրել, սակայն դժվար է հստակ եզրահանգում կատարել այդ մասին:

## Մաքրություն և հիգիենա

Ընդհանուր առմամբ, մաքրության և հիգիենայի առումով մանկապարտեզները հիմնականում պահպանում են ԱՆ թիվ 857-Ն հրամանով սահմանված պահանջները[15]՝ ապահովելով անհրաժեշտ սանիտարահիգիենիկ վիճակը: Հասկանալի է, որ պետական մարմինների պարբերական ստուգումները ևս նպաստել են օրենքի պահանջների հնարավորինս խստիվ պահպանմանը: Առանձին խնդիրներ են նկատվել Վայքում, որտեղ խաղալիքների լվացումը ամեն օրվա փոխարեն իրականացվում է շաբաթական մեկ անգամ, ինչպես նաև մի շարք մանկապարտեզներում՝ պատուհանների լվացման ամսական հաճախականության փոխարեն տարեկան մի քանի անգամ լվանալու հետ կապված: Հստակ չի պահպանվում նաև սպիտակեղենի փոխարինման նորմատիվը. ըստ ԱՆ թիվ 857-Ն հրամանի 7.1 կետի՝ փոխարինումը պետք է կատարվի ոչ ուշ, քան շաբաթը մեկ անգամ, մինչդեռ մի քանի մանկապարտեզներում փոխարինումը կատարվում է 10-15 օրը մեկ: Հարկ է նշել, որ մաքրության և հիգիենայի հետ

[14] Գնահատականը տրվել է 1-5 սանդղակով, որտեղ 1-ը նշանակում է բոլորովին բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ:

[15] ՀՀ Առողջապահության նախարարի 20.12.2002թ. թիվ 857-Ն հրաման, գլուխ 7

կապված տվյալներում առավել հնարավոր է սուբյեկտիվ գործոնի ազդեցությունը, քանի որ դիտարկման դժվարության պայմաններում այս հարցերը մոնիտորների կողմից պարզաբանվել են աշխատակազմի հարցման միջոցով, հետևապես հնարավոր է, որ պատասխանները տրվել են ըստ նախատեսված նորմատիվների, այլ ոչ թե իրողության հիման վրա:

Քննարկումների մասնակից ծնողները մաքրության հետ կապված խնդիրներ գրեթե չեն նշել: Միակ խնդիրը, որի մասին բարձրաձայնել են Եղեգնաձորում, մանկական մահճակալների ներքնակների հնությունն է, որը, ըստ ծնողների, հիգիենայի առումով վտանգ է պարունակում: Ծնողները նշում են, որ որքան էլ սպիտակեղենը հաճախ փոխեն, ներքնակները չեն փոխվում՝ տասնյակ տարիների հնություն ունեն և լավագույն դեպքում ախտահանվում են արևի տակ: Արտաշատում հիգիենայի խնդիրների շարքում ծնողները բարձրաձայնել են նույն բաժակից երեխաներին ջուր տալու մասին: Այս խնդրի մասին նշում են նաև փորձագետները՝ որպես բազմաթիվ մանկապարտեզներում կիրառվող պրակտիկա: Որպես լուծում ծնողների կողմից առաջարկվել է մեկանգամյա բաժակների օգտագործումը, թեև մյուս մանկապարտեզներում կիրառվում է նաև անվանական բաժակների պրակտիկան:

Ըստ ՖԽ քննարկումների ընթացքում իրականացված հարցման արդյունքների՝ ծնողները մանկապարտեզների մաքրությունը և հիգիենան գնահատել են հետևյալ կերպ (Գծապատկեր 2):

**Գծապատկեր 2. Ընդհանուր առմամբ որքանո՞վ եք բավարարված մանկապարտեզի ծառայություններով հետևյալ առումներով՝ մաքրություն և հիգիենա** (միջին գնահատականը ըստ համայնքների)[16]




Թեև բոլոր համայնքներում ծնողները միջին հաշվով հիմնականում կամ լիովին բավարարված են մաքրության և հիգիենայի պահպանմամբ, համեմատաբար ցածր գնահատական է տրվել Մալիշկայի մանկապարտեզներում: Հնարավոր է, որ այս մանկապարտեզներում խնդիրը կապված են տարածքի ոչ բարվոք վիճակի հետ (որի մասին նշվել է վերը), ինչպես նաև պայմանավորված է սպիտակեղենի փոխարինման ոչ բավարար հաճախականությամբ, որը բացահայտվել է մոնիտորինգի ընթացքում:

[16] Գնահատականը տրվել է 1-5 սանդղակով, որտեղ 1-ը նշանակում է բոլորովին բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ:

### Սննդամթերք և սնունդ

Ինչպես սանիտարահիգիենիկ պայմանների դեպքում, սննդի մշակման ու պատրաստման հետ կապված կանոնների հարցում ևս մանկապարտեզներն ավելի զգոն են: Ըստ մոնիտորինգի տվյալների՝ այս կանոնները հիմնականում պահպանվում են մանկապարտեզների կողմից: Բոլոր մանկապարտեզներում կիրառվում են սննդամթերքի առանձնացման, սեղանների ու դանակների մակնշման հետ կապված կանոնները, արգելված սննդի ցանկից որևէ սննդատեսակ չի ներառվում ճաշացանկում: Տվյալ օրվա համար նախատեսվող սննդամթերքի ցուցակը փակցվում է գրեթե բոլոր մանկապարտեզներում, բացառությամբ Մալիշկայի մանկապարտեզների:

Ըստ ԱՆ թիվ 857-Ն հրամանի 13 կետի՝ ճաշացանկը պետք է կազմի 7 կամ 10 օրվա համար: Սակայն ոչ բոլոր մանկապարտեզներն են կարողանում համապատասխան բազմազանություն ապահովել ճաշացանկում: Առհասարակ, մանկապարտեզների վարիչներն ընդգծում են, որ նախատեսված գումարի սահմաններում սննդի նորմատիվների պահպանումը՝ կալորիականության ու սպիտակուցների անհրաժեշտ չափաքանակի հետ միասին, բավականին մեծ մարտահրավեր է: Մանկապարտեզներից շատերում ճաշատեսակները կրկնվում են 3, 4 կամ 5 օրը մեկ:

Հարցման արդյունքների համաձայն, ծնողները հիմնականում բավարարված են մանկապարտեզների սննդով (Գծապատկեր 3):

**Գծապատկեր 3. Ընդհանուր առմամբ որքանո՞վ եք բավարարված մանկապարտեզի ծառայություններով հետևյալ առումներով՝ սնունդ** (միջին գնահատականը ըստ համայնքների)[17]




Առավել … ւքար ցածր՝ Վայքի թի … վոր): Բացի ճաշացանկի կրկնման հաճախականությունից, այս գնահատականի վրա հավանաբար ազդել է նաև սննդի որակի գործոնը, սակայն մոնիտորինգի շրջանակներում սննդի որակի ուսումնասիրություն, որպես այդպիսին, չի կատարվել:

### Կրթություն և զարգացում

Փորձագետների կողմից ոլորտի ձեռքբերումների շարքում հատկապես կարևորվում է կրթության ու զարգացման չափորոշիչների ներդրումը մանկապարտեզներում և

[17] Գնահատականը տրվել է 1-5 սանդղակով, որտեղ 1-ը նշանակում է բոլորովին բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ:

մանկավարժների մեթոդական պատրաստվածությունը: Վերապատրաստման ոլորտում ձեռքբերումները կապված են «Քայլ առ քայլ» հիմնադրամի և Կրթության ազգային ինստիտուտի կողմից 2010-2014թթ. իրականացված «Քայլ առ քայլ» վերապատրաստման ծրագրի հետ, որին աջակցել է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը, ՀՀ ԿԳՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակը[18]: Այդ ծրագրերի միջոցով դաստիարակներին մատուցվում են նախադպրոցական կրթության ժամանակակից մեթոդները, կրթության ու զարգացման չափորոշիչների գործնական կիրառումը: Բացի վերապատրաստման դասընթացներից, «Քայլ առ քայլ» հիմնադրամը նաև հետագա երկարաժամկետ աջակցություն, այդ թվում՝ մոնիտորինգ է տրամադրում տարբեր մանկապարտեզներում հիմնված վերապատրաստման կենտրոնների միջոցով, քանի որ միայն վերապատրաստումը չի կարող հասցեագրել այն բոլոր հարցերը, որոնք առաջանում են հետագա աշխատանքային գործընթացում:

Ըստ հարցման արդյունքների, ծնողները մանկապարտեզների կրթության ու զարգացման ծառայությունները հիմնականում բարձր են գնահատել (Գծապատկեր 4):

**Գծապատկեր 4. Ընդհանուր առմամբ որքանո՞վ եք բավարարված մանկապարտեզի ծառայություններով հետևյալ առումներով՝ կրթություն և զարգացում** (միջին գնահատականը ըստ համայնքների)[19]




Արտաշատի թիվ 7, Մալիշկայի թիվ 1 և Եղեգնաձորի թիվ 2 մանկապարտեզներում այս ցուցանիշը միջինում 4 միավոր է: Այս գնահատականների բացատրությունը մասամբ կարելի է գտնել հետագա շարադրանքում, որտեղ կներկայացվեն ուսուցման ծրագրերի, ուսուցողական և զարգացման նյութերի, դաստիարակների հմտությունների ու մոտեցումների հետ կապված այն խնդիրները, որոնք բացահայտվել են մոնիտորինգի ընթացքում, նշվել են ծնողների հետ քննարկումների ժամանակ և կամ ներկայացվել հետազոտության փորձագետների կողմից:

[18] «Քայլ առ քայլ»հիմնադրամի վերապատրաստման ծրագրերի մասին ավելի մանրամասն տե՛ս [հիմնադրամի կայքում](#):

[19] Գնահատականը տրվել է 1-5 սանդղակով, որտեղ 1-ը նշանակում է բոլորովին բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ:

**Ուսուցման ծրագրեր**

Ըստ մոնիտորինգի արդյունքների՝ ուսումնասիրված ՆԴՀ-ներում պարապմունքների շաբաթական քանակը հիմնականում համապատասխանում է ԱՆ թիվ 857-Ն հրամանով նախատեսված նորմատիվներին[20]: Կրտսեր խմբերի պարապմունքների քանակի ու տևողության վերաբերյալ ԱՆ նորմատիվներով չեն առանձնացված առաջին և երկրորդ կրտսեր խմբերը: Ըստ այդմ, փոքրերի համար նախատեսված է 10-15 րոպե տևողությամբ շաբաթական 10 պարապմունք: Սակայն մանկապարտեզների մեծ մասում կրտսեր խմբի պարապմունքները տևում են 15-20, իսկ մեկում՝ անգամ 20-25 րոպե (Մալիշկայի թիվ 1 մանկապարտեզ): Մանկապարտեզների ղեկավարները պարապմունքների այս տևողությունը հիմնավորում են Կրթության ազգային ինստիտուտի կողմից մշակված կրթական ծրագրով: Կրթության ազգային ինստիտուտի ներկայացուցիչը իր հերթին նշում է, որ կրտսեր երկրորդ խմբի դեպքում կարող են նախատեսվել 10-12 պարապմունք, իսկ պարապմունքների տևողությունը ըստ ծրագրի 15-20 րոպե է սահմանված: Այսինքն, տվյալ դեպքում ՀՀ առողջապահության նախարարության նորմատիվներում հարկ է տարբերակել առաջին և երկրորդ կրտսեր խմբերի պարապմունքների քանակն ու տևողությունը և համապատասխանություն հաստատել նորմատիվների ու կրթական ծրագրի միջև:

Միջին և ավագ խմբերում պարապմունքների տևողությունը համապատասխանում է նորմատիվին, բացառությամբ Մալիշկայի թիվ 2 մանկապարտեզի, որտեղ ավագ խմբի երեխաների պարապմունքը 25 րոպեի փոխարեն տևում է 15-20 րոպե: Առանձին մանկապարտեզներում պարապմունքների միջև ընկած ընդմիջումը չափազանց կարճ է տևում, 10-12 րոպեի փոխարեն՝ 5-10 րոպե՝ Եղեգնաձորի թիվ 1 մանկապարտեզում և 5 րոպեից սկսած՝ Վայքի թիվ 3 մանկապարտեզում:

Ծնողները բարձր են գնահատում մանկապարտեզից ստացած գիտելիքները, կառուցողական նյութերով աշխատանքը, ծեփը, պատկերների հետ աշխատանքը: Անձնային զարգացման առումով ծնողների կողմից առավել կարևորվում է հավասարակշռվածությունը և ինքնուրույնությունը, որ երեխաները ձեռք են բերում մանկապարտեզում: Նշվում է նաև խոսքի հմտությունների զարգացման մասին՝ երեխաները սովորում են ձևակերպել իրենց խոսքը, խոսել գրագետ հայերենով, հաղորդակցվել հասակակիցների հետ: Կարևորվում են երաժշտական ուսուցման, մշակութային դաստիարակության տարրերը: Ըստ ծնողների՝ կրթական ծրագրերում առանձին կարևորություն է տրվում տոներին, նշվում են նաև եկեղեցական տոները: Մանկապարտեզներում երբեմն կազմակերպվում են թատերական ներկայացումներ՝ շրջիկ թատերախմբերի մասնակցությամբ:

Այն մանկապարտեզներում, որտեղ օտար լեզվի ուսուցում չկա, ծնողներից մի քանիսը օտար լեզուների ուսուցման ցանկություն են հայտնել, օրինակ՝ Նոր Խարբերդում, Եղեգնաձորի որոշ մանկապարտեզներում: Մալիշկայի մանկապարտեզում գնահատում են ռուսաց լեզվի և անգլերենի ուսուցումը, մասնավորապես խաղային մեթոդների կիրառումը օտար լեզուների ուսուցման մեջ:

Ուսուցման բաղադրիչներից երբեմն թերի է մնում երեխայի շարժողական զարգացումը: Օրինակ Եղեգնաձորի մանկապարտեզներից մեկում նշվում է ֆիզիկական զարգացման հնարավորությունների պակասի մասին:

[20] ԱՆ թիվ 857-Ն հրաման, կետ 12.1

*«Չմոռանանք նաև, որ գեղարվեստականի հետ նաև ֆիզիկական կուլտուրան պետք է զարգացնել, ես կասեի, որ բոլոր պարտեզներում էլ այդ կուլտուրայի զարգացման համար գրեթե ոչինչ չկա»* (Եղեգնաձորի քննարկման մասնակից ծնող):

Մասնավորապես, պակասում են համապատասխան պարագաները, դաստիարակների կողմից նպատակաուղղված պարբերական պարապմունքները: Ծնողները նաև նշում են, որ այս բաղադրիչի համար անհրաժեշտ է հատուկ մասնագետ, որը կտիրապետի երեխաների մկանային զարգացման առանձնահատկություններին և ճիշտ լուծում կտա խնդիրներին: Փորձագետները ևս նշում են շարժողական զարգացման երկրորդ պլան մղվելու մասին:

*«Իրենք ֆիքսվում են միայն բովանդակային, միայն կոգնիտիվ ոլորտի վրա, իմացական ոլորտի վրա»* (միջազգային կազմակերպության ներկայացուցիչ):

Փորձագետներից մեկը խնդրահարույց է համարում մանկապարտեզներում կիրառվող կրթական ծրագրերը, նշելով, որ ծրագրերը հարմարեցված չեն այդ տարիքի երեխաներին, մասնավորապես տառուսուցման բաղադրիչը դպրոցական տարիքի համար է: Ընդ որում, տառուսուցման բաղադրիչը կրթական ծրագրում, կարծես թե, պահանջվածից ավելի է կիրառվում հենց մանկապարտեզների նախաձեռնությամբ: Փոխարենը տուժում է սոցիալական և հուզական զարգացման ոլորտը, որը նախատեսված է ԿԳՆ 30.03.2011թ. թիվ 257-Ն հրամանում շարադրված՝ մինչև 6 տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչներով:

*«Այսօր հինգից վեց տարեկանները պետական մանկապարտեզների տառուսուցումն են անցնում, դա ես որպես մանկավարժ չեմ ընդունում….պետական մանկապարտեզի տառուսուցումը եկել է փոխարինելու խաղին, ինչը որ չի կարելի, նույնիսկ դպրոցի առաջին դասարանը պետք է խաղի միջոցով լինի»* (միջազգային կազմակերպության ներկայացուցիչ):

*«Հիմնական շեշտը դնում են հինգից վեց տարեկան, որ դպրոց պետք է գնան, հաշվել, տառեր ճանաչել, նույնիսկ այդ պահանջվող չափորոշիչները, իրենք դրանից ավելի [են անում], ըստ չափորոշիչների տրված է, որ երեխաները բոլոր տառերը չպիտի անցնեն մանկապարտեզում, իրանք ուղղակի պիտի ծանոթանան»* (հասարակական կազմակերպության ներկայացուցիչ):

Պետական կառույցի փորձագետները գտնում են, որ մանկապարտեզների ծանրաբեռնվածության պայմաններում անհատական կրթական մոտեցումների կիրառումը իրատեսական չէ:

*«Իրենք վերցնում են արտասահմանի որոշ ծրագրերից, մոդելներ են վերցնում և տեղայնացնում են, բայց մոռանում են, որ [այնտեղ] յոթ-ութ երեխայի հետ երեք-չորս հատուն մարդիկ են աշխատում, սոցիոլոգ, հոգեբան, էնտեղ տարբեր-տարբեր մասնագետներ են, կարծեմ երկու երեխային մի մասնագետ է ընկնում, իսկ մեզ մոտ երեսունհինգին»* (պետական կառույցի ներկայացուցիչ):

**Ուսուցողական նյութեր և զարգացման հնարավորություններ**

Որոշ մանկապարտեզներում ՖԽ քննարկման մասնակից ծնողները նշում են դիդակտիկ նյութերի պակասի մասին: Հաճախ է նշվում նաև մարզական գույքի, զարգացնող խաղալիքների, տարբեր պարագաների պակասի մասին, իսկ որոշ մանկապարտեզներում դրանք հնացած են: Մյուս կողմից, նմանատիպ պարագաները կարևորվում են երեխաների զարգացման համար.

օրինակ՝ Նոր Խարբերդի մանկապարտեզում երեխաները հնարավորություն են ունեցել խաղալ կինետիկ ավազով, որը մեծ ոգևորություն էր առաջացրել նրանց շրջանում և այդ մասին նշվեց քննարկման ընթացքում։

Փորձագետները ևս նշում են, որ դիդակտիկ նյութերի պակասը, որը հիմնականում պայմանավորված է ֆինանսական ռեսուրսների պակասով, մեծապես խոչընդոտում է պատշաճ ուսուցողական գործընթացի իրականացմանը։

> *«Այդ սպառվող նյութերը, ասենք ջրաներկը և այլն, չունեն իրենք, շատ քիչ քանակով են, բայց դա իրենց առօրյա ուսուցման գործիքներն են, ռեսուրսներն են, որոնց վրա իրանք շատ խնայողություն են անում, ընդ որում ամեն պիտույք պիտի տարիքին համապատասխան լինի»* (հասարակական կազմակերպության ներկայացուցիչ)։

Առանձին մանկապարտեզներում նյութերի ձեռքբերման հարցով դիմում են ծնողներին, օրինակ՝ պլաստիլին, ջրաներկ, վրձին, ալբոմ գնելու համար։ Դիդակտիկ նյութերի պակասը նաև փոխհատուցվում է դաստիարակների կողմից պատրաստված նյութերով, երբեմն այդ աշխատանքներում ներգրավում նաև ծնողներին։ Կրթության ազգային ինստիտուտի ներկայացուցիչը նշում է, որ սահմանափակ ռեսուրսների պայմաններում ձեռքի աշխատանքը լուծում կարող է լինել։

> *«Հիմա գիտեք մենք ոնց ենք օգնում, մենք վերապատրաստումների ժամանակ ձեռքի աշխատանքներ ենք սովորեցնում, թե ինչպես կարող են, մաթեմատիկայի պարապմունքների համար, խոսքի զարգացման, թատրոնի համար, բաներ ենք պատրաստում, որ գոնե այդպես [ունենան]»* (պետական կառույցի ներկայացուցիչ)։

Մոնիտորինգի գործընթացում ՆԴՀ-ներում ԿԳՆ թիվ 257 հրամանով նախատեսված՝ երեխաների զարգացման պայմաններին ներկայացվող պահանջներին համապատասխանության ուսումնասիրության արդյունքում, բացի դիդակտիկ նյութերի պակասից, բացահայտվեց նաև խաղերի, տարբեր տիպի կոնստրուկտորների, գեղարվեստագեղագիտական, ֆիզիկական, թատերական և երաժշտական զարգացման պայմանների, բնության անկյունների պակաս։ Զարգացման պայմանների նախատեսված նորմատիվներին համապատասխանության առումով առավել խնդրահարույց են Մալիշկայի թիվ 1 և թիվ 2 մանկապարտեզները, որտեղ զարգացման պայմանների վերաբերյալ 64 դրույթից առկա էին համապատասխանաբար 26-ը և 29-ը, ինչպես նաև Վայքի թիվ 1 մանկապարտեզը, որտեղ 64 դրույթից առկա էր 34-ը։ Ծրագրում ընդգրկված մյուս մանկապարտեզներում համապատասխան պայմանները մեծ մասամբ ապահոված էին, իսկ զարգացման պայմանների առկայության լավագույն ցուցանիշները մոնիտորների կողմից գրանցվել են Այնթապի, Նոր Խարբերդի, Արտաշատի թիվ 8 և Եղեգնաձորի թիվ 5 մանկապարտեզներում։

Ծնողներն առաջարկել են մանկապարտեզները հագեցնել համապատասխան տեխնիկական ռեսուրսներով, որպեսզի մանկավարժները հնարավորություն ունենան տեղում փնտրել, տպել և բազմացնել տարբեր ուսուցողական նյութեր երեխաների զարգացման խաղերի ու աշխատանքների համար։ Փորձագետներն իրենց հերթին կոչ են անում պատկան մարմիններին չանտեսել կրթության ու զարգացման կարևորությունը և համապատասխան գումար նախատեսել ոչ միայն մանկապարտեզների կոմունալ ծախսերն ու աշխատակիցների աշխատավարձերը հոգալու, այլև կրթության ու զարգացման պայմանները ապահովելու համար։

*«Իրենք պետք է հասկանան, որ դա պետք է լինի գումար՝ մանկապարտեզը զարգացնելու, …երեխան եկել է մանկապարտեզ ոչ միայն քնելու, այլ նաև բան սովորելու, որակյալ խաղալիքներով, որակյալ նյութերով խաղալու, ամեն տարի իրենք բյուջեում ինչ-որ նյութ պիտի ավելացնեն, նախ սպառվում է, հետո ամեն տարի մի հատ նոր նյութ է դուրս գալիս»* (հասարակական կազմակերպության ներկայացուցիչ):

**Դաստիարակների հմտություններն ու մոտեցումները**

Դաստիարակների մասնագիտական հմտությունները որոշիչ դեր ունեն երեխաների պատշաճ կրթության ու զարգացման հարցում: Ըստ միջազգային կառույցների փորձագետների՝ մասնագիտական աշխատանքի հետ կապված խնդիրներ կան թե՛ մարդկային ռեսուրսների պատրաստվածության, թե՛ ծրագրերի ու մոտեցումների տեսանկյունից: Ցածր որակը, ի թիվս այլ պատճառների, պայմանավորված է ոլորտում աշխատավարձերի ցածր մակարդակով և դաստիարակի մասնագիտության հեղինակության պակասով:

*«Շատ ցածր է մեր մանկավարժների աշխատանքի որակը, որովհետև էն հին սովետական մոտեցումներ են, չկան նորարարություններ»* (միջազգային կազմակերպության ներկայացուցիչ):

*«Մանկավարժական բուհերում սովորում են ամենաթույլ կադրերը…. իհարկե հետաքրքրությունը կմեծանա, եթե հենց մանկավարժի մասնագիտության վերանայում լինի, բարձրացում լինի…: Նա, ով որ ավարտեց, ստանում է մանկավարժի որակավորում, ոչ մի երկրում նման բան չկա, մենք թեստ չենք անում, տեսնենք՝ նա ունի՞ երեխեքի հետ աշխատելու ունակություն»* (միջազգային կազմակերպության ներկայացուցիչ):

Դաստիարակների աշխատանքի որակը հաճախ կախված է նրանց բարեխիղճ ու նվիրված մոտեցումից, այլ ոչ թե բխում է ոլորտի կարգավորումից ու համակարգումից:

*«Մեկուկես դրույք աշխատում են, մեկ դրույքով վարձատրվում՝ հիմա էլ պիտի գա ինչ-որ մեկը որակ պահանջի՞, հասկանու՞մ եք, այսինքն մանկավարժի խղճի վրա է մնում, կարող է ընդհանրապես ոչինչ չանել, ժամ սպանել: Ավելի շատ իրենք են պահանջատեր, քան իրենցից են պահանջում»* (միջազգային կազմակերպության ներկայացուցիչ):

Դաստիարակների ցածր աշխատավարձը և համապատասխանաբար մոտիվացիայի պակասը, խմբում երեխաների մեծաքանակության հետ միասին, հանդիսանում է նաև անհատական մոտեցման ցուցաբերման խոչընդոտ:

*«Ցանկացած երեխայի ընկալելու ունակությունը, արտաբերելու ունակությունը և զարգացման ունակությունները տարբեր են, լինում են պասիվ, գիպերակտիվ երեխաներ, լինում են տարբեր զարգացման աստիճանով երեխաներ, և էստեղ ամեն երեխային մի սանրով սանրելը սխալ է, պետք է անհատական մոտեցում լինի, որն, ըստ ինձ, մոտակա տաս-տասնհինգ տարվա մեջ էլի չի լինի … և՛ քանակի հարց կա, և՛ մանկավարժի գիտելիքի և մոտիվացիայի, որովհետև էն աշխատավարձը, որ էսօր ստանում են, ինքը ուղղակի մոտիվացված չի, որ ամեն երեխային անհատական մոտեցում ցույց տա, կամ այդ քանակի երեխաների թվաքանակը խմբում ուղղակի ռեալ չի»* (միջազգային կազմակերպության ներկայացուցիչ):

Փորձագետների կողմից հատկապես կարևորվում է նորավարտ կամ նոր վերապատրաստված մանկավարժներին հետագա գործնական մենթորային աջակցության տրամադրումը:

> *«Բազմաթիվ կազմակերպությունների կողմից բազմատեսակ վերապատրաստումներ են արվում ու այդպես թողնում ենք այդ մարդկանց ու գնում են, բայց հետո չեն գնում ու չեն նայում՝ ինչպես են իրականացնում, [պետք է] օգնել այդ մարդկանց իրենց գիտելիքները իրագործել պրակտիկայում»* (միջազգային կազմակերպության ներկայացուցիչ):

> *«Չունենք այդ մենտորի դպրոցը, որ առաջին գոնե մեկ տարին այդ induction թրեյնինգը լինի, որ համադասավանդում լինի, այդ պրակտիկան, բացի այն, որ չկա և ձևական բնույթ է կրում այդ մեկ ամսվա պրակտիկան, մտնում են, աշխատում են, չկա էդ ավագը, որ ուղղորդի իրեն սովորացնելու նպատակով»* (միջազգային կազմակերպության ներկայացուցիչ):

Նշվում է նաև մոնիտորինգի պատշաճ համակարգի բացակայության մասին:

> *«Կա ինչ-որ բան, դաստիարակի [աշխատանքի] նկարագրություն, բայց չափելի չեն, …եթե նույնիսկ խոսում ենք 5-6 տարեկան երեխաների մասին, դպրոցի նախապատրաստվելու, կա մի գործիք, որ ստեղծված է նախարարության կողմից և պարունակում է 60-ից ավել հարցեր, որոնք որ, էլի եմ ասում, շատ բարդ են, որ դաստիրակը պետք է գնահատի, ու դաստիարակները վերապատրաստում էլ չեն անցնում դրա վերաբերյալ, թե ինչպես պետք է այդ կատարողականը գնահատեն»* (միջազգային կազմակերպության ներկայացուցիչ):

Մոնիտորինգի տվյալները բնականաբար լիարժեք չեն կարող ցույց տալ դաստիարակների պատրաստվածության մակարդակը: Երեք մանկապարտեզներում՝ Այնթապում, Եղեգնաձորի թիվ 1 և Վայքի թիվ 1 մանկապարտեզներում, մոնիտորինգի ընթացքում նշվել էր, որ վերջին տարիներին մանկավարժները որևէ վերապատրաստում չեն անցել:

Քննարկումների ընթացքում ծնողները նշել են, որ դաստիարակների մոտեցումը կարևոր է երեխաներին մանկապարտեզ ինտեգրելու, դրական մթնոլորտ ստեղծելու հարցում: Մի քանիսը նկատել են հատուկ վերաբերմունք «էլիտար» ընտանիքների երեխաների նկատմամբ, սակայն հիմնականում ծնողները խտրականություն չեն նկատել: Ծնողներից մի քանիսը ընդգծել են նաև, որ ծնողի վստահությունը դաստիարակի մասնագիտական որակների նկատմամբ շատ կարևոր է:

Առանձին մանկապարտեզներում ծնողները գոհունակություն են հայտնում դաստիարակների՝ մեծ խմբերում յուրաքանչյուր երեխային ուշադիր լինելու և անհատական հմտությունները զարգացնելու կարողությունների համար: Հատուկ ընդգծվում է առանձին դաստիարակների ջանասիրությունը, սերը երեխաների նկատմամբ, մասնավորապես՝ Նոր Խարբերդի մանկապարտեզում:

Ծնողների հարցումն առանձին անդրադարձել է դաստիարակների մասնագիտական հմտություններին, որտեղ ծնողների գնահատականները հիմնականում բարձր են (Գծապատկեր 5):

Այս ցուցանիշները հիմնականում արտացոլում են քննարկումների ընթացքում հնչած գնահատականները: Մանկապարտեզները դիտարկելիս առավել բարձր ցուցանիշներ են

գրանցվել Այնթապի, Նոր Խարբերդի, Եղեգնաձորի թիվ 1 և թիվ 5, Վայքի թիվ 3 մանկապարտեզներում (միջին միավորը՝ 5), իսկ առավել ցածր՝ Մալիշկայի թիվ 1, Արտաշատի թիվ 7 և Եղեգնաձորի թիվ 2 մանկապարտեզներում (միջին միավորը՝ 4):

**Գծապատկեր 5.** Խնդրում ենք գնահատել դատողությունը՝ ըստ ձեր համաձայնության աստիճանի. «**Մեր մանկապարտեզի դաստիարակներն ունեն երեխաների անհատական զարգացման և կրթության համար անհրաժեշտ մասնագիտական հմտությունները**» (միջին գնահատական ըստ համայնքների) [21]




### Աշխատանք ծնողների հետ

ՆԴՀ-ների տարբեր ուղեցույցներում[22] նշված է ծնողների հետ աշխատանքի անհրաժեշտության մասին, որը, սակայն, ըստ փորձագետների, բավարար չափով չի արվում: Մինչդեռ ծնողի հետ կապը շատ է կարևորվում փորձագետների կողմից՝ երեխայի դաստիարակության ու կարիքների հանդեպ տանը և մանկապարտեզում միանման մոտեցում ապահովելու և երեխայի հատուկ կարիքներին ճիշտ արձագանքելու համար:

*«Ծնողի հետ աշխատանքը, ես ինչքան գիտեմ, միայն այդ ծնողական ժողովների, հավաքների, դրամահավաքներ այդ ուղղությամբ է [կատարվում], էստեղ էլ շատ մեծ բաց կա, որովհետև շատ կարևոր է այ այդ ծնողական կրթության համակարգը ներդնել, քանի որ ընտանիքից է սկսվում դաստիրակությունը, և շատ ժամանակ*

[21] Գնահատականը տրվել է 1-5 սանդղակով, որտեղ 1-ը նշանակում է բոլորովին համաձայն չեմ, 5-ը՝ լիովին համաձայն եմ:

[22] http://www.aniedu.am/index.php/gradaran/

*ծնողները կանգնում են այդ խոչընդոտի առջև»* (միջազգային կազմակերպության ներկայացուցիչ):

Հաճախ ծնողների հետ աշխատանքը սահմանափակվում է ծնողական ժողովների կազմակերպմամբ, որոնք կրթական նշանակություն չեն ունենում, թեև ուսումնական պլանի համաձայն պետք է նախատեսվեն ուսուցողական զեկուցումներ երեխայի զարգացման այս կամ այն թեմայի վերաբերյալ: Յուրաքանչյուր մանկապարտեզ իր հայեցողությամբ է կազմակերպում ժողովները և որոշում դրանց բովանդակությունը: «Քայլ առ քայլ» հիմնադրամի ներկայացուցիչը նշում է, որ իրենց կողմից վերապատրաստված մանկապարտեզներում ավելի ակտիվ են աշխատում ծնողների հետ:

*«Իրենք ունեն երեխաների թղթապանակ, տարեկան գործընթացի մեջ է դա մտնում, տարեկան երկուսից երեք անգամ քննարկում են ծնողի հետ, այսինքն ծնող-երեխա-ուսուցիչ կարող է հանդիպում լինել, կամ ծնող-ուսուցիչ»* (հասարակական կազմակերպության ներկայացուցիչ):

Մյուս կողմից, ըստ փորձագետների, շատ մանկապարտեզներում ծնողների մուտքը խմբասենյակներ չի թույլատրվում, և ծնողները հնարավորություն չեն ունենում ավելի մոտիկից ծանոթանալ մանկապարտեզի առօրյային և հետևել իրենց երեխաների վարքին մանկապարտեզում:

ՖԽ քննարկումներից պարզ է դառնում, որ ծնողական ժողովներ ոչ բոլոր մանկապարտեզներում են լինում: Առանձին մանկապարտեզներում լինում են բաց դասեր, որպեսզի ծնողները հնարավորություն ունենան ծանոթանալ դաստիարակի աշխատանքի հետ: Ծնողները հիմնականում նշում են, որ խնդիրների դեպքում հնարավորություն են ունենում դիմել տնօրինությանը, առաջարկել լուծումներ: Միևնույն ժամանակ, ակնհայտ է դառնում, որ ծնողների հետ առանձին աշխատանք չի տարվում՝ երեխայի խնամքի, դաստիարակության ու զարգացման խնդիրների քննարկման և ուղղորդման նպատակով: Ծրագրի շրջանակներում կազմակերպված համայնքային հանդիպումների ու դասընթացների ընթացքում ծնողները մեծ հետաքրքրություն էին ցուցաբերել այս հարցերի հանդեպ և նշել, որ իրենց հուզող հարցերի շուրջ քննարկումների և մասնագիտական կարծիք լսելու կարիք ունեն: Փորձագետները ևս նշել են, որ ծնողների կողմից պահանջարկ կա ծնողական կրթության, փորձի փոխանակման հարթակների, երեխաների զարգացման առանձնահատկությունների վերաբերյալ տեղեկատվության:

*«Իրենք ծարավ են, ծարավ են գիտելիքի, ու ինձ թվում էր ավելի շատ գյուղական վայրերի, քան Երևանի ծնողները ...բայց բոլոր ծնողները շատ-շատ հարցեր են ունենում, որոնք հուզում են իրենց, ուզում են խոսել դրա մասին, [իսկ] ծնողական կրթությունը ստեղծում է հարթակ, երբ բոլոր ծնողները հավաքվում են և կիսում են իրենց փորձը և խնդիրները, հատկապես ներառականությանը վերաբերող: Եթե խմբում կա հատուկ կարիքներով երեխա, ինքը զգում է, որ մենակ չի, որ ունի նման խնդիրներով երեխա, ծնողներ կան, որ նման խնդիրների են բախվում»* (միջազգային կազմակերպության ներկայացուցիչ):

Առանձին ծրագրերով ստեղծված նախակրթարաններում, վերապատրաստման կենտրոններում ծնողական կրթության ծրագրեր ու նախաձեռնություններ են իրականացվում, որոնք հաջողված փորձ կարելի է համարել, և այդ փորձը տարածել պետական ՆԴՀ-ներում: Առկա է նաև Կրթության ազգային ինստիտուտի կողմից երաշխավորված ծնողական կրթության

ձեռնարկ՝ «Այնքան ծանոթ և այնքան անծանոթ երեխան», որը մշակվել է «Քայլ առ քայլ հիմնադրամի կողմից և կարող է օգտագործվել մանկապարտեզներում ծնողական կրթության կազմակերպման նպատակով:

### Ներառման հնարավորությունները

ՀՀ կրթության զարգացման 2016-2025թթ. պետական ծրագրի նախագծում նպատակներից մեկը 3-6 տարեկան բոլոր երեխաների համար հավասար հասանելի և որակյալ նախադպրոցական կրթության մատչելիության ապահովումն է[23]: Մասնավորապես, նախատեսվում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառման համար համապատասխան պայմաններ ստեղծել: Միաժամանակ, նախադպրոցական կրթության ոլորտում ներառականության վերաբերյալ կարգավորումները, վերապատրաստման փաթեթները, ծրագրերը պետական մարմինների ուշադրության կենտրոնում չեն, ի տարբերություն հանրակրթական համակարգի, որտեղ վերջին տարիներում որոշակի առաջընթաց է նկատվում ներառականության սկզբունքների կիրառման առումով: Ըստ հետազոտության փորձագետների՝ նախադպրոցական կրթության ներառականության խնդիրները առաջնային չեն համարվում նախ և առաջ այն պատճառով, որ նախադպրոցական կրթությունը պարտադիր կրթություն չի Հայաստանում:

ՆԴՀ-ում ներառականության ապահովման հարցում կան խնդիրներ թե՛ մասնագիտական բազայի ապահովման, թե՛ ենթակառուցվածքների և թե՛ ծնողների վերաբերմունքի, հանրային մտածելակերպի առումով: Խնդիրներ ունեցող երեխաների ծնողներից շատերը չեն էլ փորձում երեխաներին ներառել նախադպրոցական հաստատություններում, իսկ մարզային համայնքներում անգամ հակված են թաքցնելու երեխաների խնդիրները մինչ դպրոցական տարիքի հասնելը: Մյուս ծնողներն էլ իրենց հերթին դեմ են լինում ներառական կրթական համակարգին:

> *«Մենք առնչվել ենք այն խնդրի հետ, որ ծնողները առողջ երեխաների չեն ցանկանում, որ իրենց երեխաները սովորեն միասին»* (միջազգային կազմակերպության ներկայացուցիչ):

ՖԽ մասնակիցների շրջանակներում, սակայն, ընդգծված բացասական վերաբերմունք չի նկատվել զարգացման խնդիրներ ունեցող երեխաների ներառման նկատմամբ: Առանձին ծնողներ մտահոգություն են հայտնում անվտանգության հարցերի վերաբերյալ:

> *«Պարտեզն ուրիշ է, դպրոցն ուրիշ է, չէ որ փոքր են, նրանք ավելի անզիտակից են և կարող են ավելի շուտ վնասել կողքիններին, ինձ թվում է համապատասխան մասնագետի խումբ պետք է լինի, որը որոշի այդ երեխային կարելի է այդ տարիքում պարտեզում ներառել, թե ոչ»* (Եղեգնաձորի քննարկման մասնակից ծնող):

Մյուս կողմից, ծնողները նշում են, որ հենց մեկուսացումն է սրում երեխայի խնդիրները և խոչընդոտում հետագայում դպրոցում և հասարակությունում ինտեգրվելու գործընթացին:

---

[23] «Հայաստանի հանրապետության կրթության զարգացման 2016-2025 թվականների պետական ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ, Հավելված՝« ՀՀ կրթության զարգացման 2016-2025թթ. պետական ծրագիր», կետ 17

*«Եթե դպրոցում կամ մանկապարտեզում լինի, ավելի լավ կլինի տվյալ երեխայի համար, տվյալ հիվանդ երեխայի համար, որ ինքը դուրս գա, շփվի իր հասակակիցների հետ, ոչ թե մեկուսանա տանը ըտենց»* (Մալիշկայի քննարկման մասնակից ծնող):

Փորձագետները ևս միանշանակ կարծիք չունեն խնդիրներով երեխաների ներառման հարցում: Փորձագետներից մեկն, օրինակ, նշում է, որ հնարավոր է երեխաների մոտ լինեն խնդիրներ, որոնք կխոչընդոտեն մյուս երեխաների խնամքի ու զարգացման գործընթացին:

*«Բոլորը չէ, որ պետք է ներառվեն, օրինակ՝ ագրեսիվ վարքի տեր երեխային ինչպե՞ս կարող ես բերել ընդհանուր խումբ, կամ թեթև մտավոր հետամնաց (դե ֆիզիկականի մասին չեմ խոսում, որովհետև, ընդհանրապես տարբերություն չպետք է դնել, հենաշարժողական), կամ լսողության, տեսողության խնդիրներով, չնայած այսօր ներառվում են նաև այդպիսի երեխաներ, որովհետև հիմա հարց է դրվում նույն այդ այբուբենը, որ շոշափելով են սովորում, թող տրամադրեն, բայց թող երեխան լինի նույն իր միջավայրում, իր հասակակիցների հետ»* (պետական կառույցի ներկայացուցիչ):

ՆԴՀ-ների ներառականության վերաբերյալ հստակ կարգավորումներ չկան, և բոլոր մանկապարտեզները, ըստ էության, պետք է կարողանան ընդունել ցանկացած երեխա, սակայն, ինչպես նշվեց վերը, և ընդգծվում է բոլոր փորձագետների կողմից, մանկապարտեզներում չկան համապատասխան պայմաններ հատուկ կարիքներ ունեցող երեխաների խնամքի և ուսուցման համար:

*«Տնօրենները չեն կարող մերժել, դե շատ ժամանակ իրանք ասում են, որ մենք չենք կարող ընդունել, ինքը ծանր երեխա է, բայց պատրաստ չի, համակարգը պատրաստ չի՝ սկսած շենքային պայմաններից վերջացրած կրթական համակարգով»* (միջազգային կազմակերպության ներկայացուցիչ):

Քանի որ նախադպրոցական հաստատություններն առանց այն էլ ծանրաբեռնված են, հատուկ կարիքներ ունեցող երեխաների ներառումը և անհատական մոտեցումը գրեթե անհնար է դառնում 30-35 երեխաներ ունեցող խմբերում: Մտահոգություն է արտահայտվում նաև դաստիարակների հմտությունների վերաբերյալ:

*«Շատ են երեխաները, և անգամ այդ կարիքներին չեն կարողանում արձագանքել, ասեմ ձեզ, որ երեխայի զարգացման անհատական պլանը պետք է լինի, ու դա չի վերաբերվում միայն ներառականին, դա վերաբերվում է ցանկացած երեխային, ցանկացած այցելող երեխա պետք է գնահատվի, և անհատական զարգացման պլանով [աշխատեն նրա հետ], որովհետև երեխաները տարբեր են, նույնիսկ չենք խոսում հատուկ կարիքների մասին»* (միջազգային կազմակերպության ներկայացուցիչ):

*«Բայց եթե դաստիարակը սովորական երեխաների հետ չի կարողանում աշխատել, ո՞նց պետք է այդպիսի երեխաների հետ աշխատի: Առաջին հերթին կարևոր է, որ իրենք, որպես ուսուցիչ, կայացած լինեն, տիրապետեն այդ երեխայակենտրոն ուսուցմանը, եթե դա չունենան, ներառականը կլինի շատ ձևական»* (հասարակական կազմակերպության ներկայացուցիչ):

Փորձագետներից մեկն էլ շեշտում է, որ միայն բազմաֆունկցիոնալ թիմ ունենալու դեպքում մանկապարտեզը կկարողանա պատշաճ խնամք ու զարգացում ապահովել հատուկ կարիքներով երեխաների համար, այսինքն՝ ինչպես ներառական դպրոցների դեպքում, այստեղ էլ պետք է

համապատասխան մասնագետների առկայության պահանջ դրվի: Մանկապարտեզների հաստիքացուցակների վերաբերյալ բաժնում արդեն իսկ նշվեց, որ ծնողները շատ են կարևորում հատուկ մասնագետների առկայությունը մանկապարտեզում, որոնք կարող են հասցեագրել ոչ միայն զարգացման խնդիր ունեցող երեխաների, այլ բոլոր երեխաների խնդիրները: Օրինակ, ծնողները հոգեբանի աջակցության կարիք ունեն դաստիարակության հարցերում:

> *«Լինեն մեկ հաստիք, որը կշրջեր մի քանի մանկապարտեզներով: Խնդիր ինձ թվում է չէր լինի աշխատանքի հագեցվածության, մի աշխատողը կկարողանա: Մենք իմանայինք, որ ինքը կցված է տվյալ մանկապարտեզին ու կարողանայինք դիմել իրեն երեխայի հետ կապված, չեմ ասում շատ մեծ խնդիրներ կլինեն, բայց փոքր խնդրի դեպքում, երբ որ հոգեբանի [հետ] խոսում են, բավականին մեծ արդյունք է տալիս»* (Եղեգնաձորի քննարկման մասնակից ծնող):

Հատուկ մասնագետները կօգնեն նաև վաղ տարիքի երեխաների խնդիրների բացահայտմանը, որը ներկայումս արդիական խնդիր է և շատ է կարևորվում մասնագետների կողմից:

Ըստ փորձագետների, ներառականության սկզբունքի իրացմանը խոչընդոտում է նաև նախադպրոցական կրթության ոլորտում միջգերատեսչական համագործակցության պակասը, որի մասին ավելի մանրամասն կներկայացվի հաջորդ բաժնում:

ՖԽ քննարկման մասնակիցների հարցման ընթացքում տրված հարցերից մեկը վերաբերում էր բոլոր երեխաների համար զարգացման անհրաժեշտ հնարավորությունների առկայությանը մանկապարտեզում: Ստացած գնահատականները հիմնականում դրական են (Գծապատկեր 6):

**Գծապատկեր 6.** Խնդրում ենք գնահատել դատողությունը՝ ըստ ձեր համաձայնության աստիճանի. «**Մեր մանկապարտեզում բոլոր երեխաները ունեն իրենց զարգացման համար անհրաժեշտ հնարավորությունները՝ անկախ իրենց հոգեկերտվածքից, ֆիզիկական և մտավոր հնարավորություններից»** (միջին գնահատական ըստ համայնքների)[24]:

[24] Գնահատականը տրվել է 1-5 սանդղակով, որտեղ 1-ը նշանակում է բոլորովին համաձայն չեմ, 5-ը՝ լիովին համաձայն եմ:




Ինչպես երևում է գծապատկերից, այս հարցում համեմատաբար ցածր գնահատական են դրել Եղեգնաձորի մանկապարտեզների ծնողները, մասնավորապես թիվ 2 և թիվ 5 մանկապարտեզներում, որոնք մեկնաբանություններում նշել են մանկապարտեզներում շենքային պայմանների ու տեխնիկական խնդիրների, խաղահրապարակի ու սարքավորումների բացակայության մասին:

### Համագործակցություն պետական մարմինների հետ

Թեև նախադպրոցական կրթության ոլորտում աշխատող միջազգային ու տեղական հասարակական կազմակերպություններն ակտիվ համագործակցում են համապատասխան պետական գերատեսչությունների հետ, փորձագետները նշում են, որ երբեմն դժվար է լինում որևէ խնդրի մասին բարձրաձայնել և համակարգային լուծման հասնել:

> *«Այսօր մեր պետությունը ամեն ինչին [ընդառաջ է գնում], նոր բաներ կազմակերպությունը հատկապես որ անում է, [բայց] մենք շատ բարդությունների առաջ ենք կանգ առնում, երբ փորձում ենք դա ներդնել համակարգում, որովհետև ասում են՝ «հա, լավ է, քո ծրագիրը արա», … բայց եթե ուզում ես դա ներդնել համակարգ և ասես՝ լավ բան է, եկե՛ք փորձենք դա անել պետական համակարգում, արդեն սկսում են քննադատել…, լա՛վ, փորձենք միասին դա իրականացնել, ասելով այսպես չի աշխատի՝ դա մոտեցում չի»* (միջազգային կազմակերպության ներկայացուցիչ):

Նշվում է նաև միջգերատեսչական համագործակցության խնդիրների մասին: Քանի որ ՆԴՀ-ների գործունեությունը վերահսկվում է մի շարք նախարարությունների, մասնավորապես ԿԳՆ, ԱՆ, ՏԿԶՆ կողմից, իսկ տեղական մակարդակով՝ մարզպետարանների ու ՏԻՄ կողմից, որոշ հարցերի կարգավորումը շարունակ վերահասցեագրվում է տարբեր կառույցներ, այդպես էլ պատշաճ լուծում չստանալով:

> *«Մեծ բաց է միջգերատեսչական համագործակցության ոլորտում, որովհետև նախադպրոցական խնդիրը միայն մի գերատեսչության խնդիրը չի, հատկապես եթե ներառականի մասին ենք խոսում, դա և՛ կրթության ու գիտության, և՛ տարածքային*

*նախարարությունն է, և՛ սոցապ. նախարարությունն է, և՛ առողջապահության նախարարությունն է, և էստեղ շատ կարևոր է ստեղծել մի հարթակ, որտեղ այդ բոլոր նախարարությունները գան նստեն մի սեղանի շուրջ, նստեն մի նպատակի համար, որովհետև մեր փորձը ցույց տվեց, իրենք շատ ժամանակ չեն խոսում ու չեն համակարգում այդ խնդիրը»* (միջազգային կազմակերպության ներկայացուցիչ):

Համահունչ մոտեցման պակասը արտացոլվում է նաև նախադպրոցական կրթության որակի վրա:

*«Բովանդակային հարցերում միասնականություն է պետք բոլոր օղակների կազմակերպությունների միջև, որպեսզի չապակողմնորոշվեն, մոտեցումը նույնը լինի, մեկը գնում է՝ մի տեսանկյունից է հարցը ներկայացնում, մյուսը մի ուրիշ պահանջ է դնում, բոլորս գիտենք, որ նախադպրոցական կրթությունը ամենաիրատապ խնդիրներից է, յուրաքանչյուրն ինչ-որ չափով ուզում է նախաձեռնություն ցուցաբերել այդ ոլորտում, բայց բացակայում է միասնականությունը, որպեսզի մի հունով ուղղորդվի բոլորի կատարված աշխատանքը, որպեսզի արդյունքը երևա»* (պետական կառույցի ներկայացուցիչ):

Նշվում է նաև ինստիտուցիոնալ շահերը քաղաքական շահերին ենթարկելու ընդհանուր խնդրի մասին:

*«Կրթության ոլորտը չունի տեսլական, ամեն նախարարի հետ մոտեցումները փոխվում են»* (միջազգային կազմակերպության ներկայացուցիչ):

Հաճախ պետական մարմինները ոլորտային խնդիրները կապում են ֆինանսավորման պակասի հետ, սակայն, ըստ փորձագետների, խնդրի լուծումը հնարավոր է գտնել գերակայությունների ճիշտ սահմանման ու բյուջեի համապատասխան բաշխման միջոցով:

*«Խնդիրը բյուջեի մեջ չի, այլ բյուջեի բաշխման, պրիորիտետների»* (միջազգային կազմակերպության ներկայացուցիչ):

Միաժամանակ, մանկապարտեզների ֆինանսավորման հիմնական բեռն ընկած է տեղական ինքնակառավարման մարմինների վրա, որոնք իրենց ունեցած ռեսուրսների շրջանակներում չեն կարողանում տեղավորվել ԿԳՆ և ԱՆ սահմանած չափորոշիչների պահանջների շրջանակում:

Այսպիսով, միջգերատեսչական և առհասարակ բոլոր շահագրգիռ կողմերի համագործակցությունը ավելի արդյունավետ դարձնելու դեպքում բազմաթիվ խնդիրներ կարող են լուծում ստանալ:

## ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Ամփոփելով՝ կարելի է առանձնացնել նախադպրոցական կրթության ոլորտի հետևյալ հիմնական խնդիրները.

**Նախադպրոցական կրթության հասանելիություն խնդիրը** բազմաբաղադրիչ է և ընդգրկում է թե՛ առանձին համայնքներում ՆԴՀ-ների բացակայության, թե՛ առկա ՆԴՀ-ների՝ համայնքի

նախադպրոցական տարիքի բոլոր երեխաների ընդգրկման հնարավորության բացակայության և սահմանափակ տարածքի խնդիրները։

**Խմբերի գերբեռնվածության խնդիրն** ուղղակիորեն կապված է հասանելիության խնդրի հետ, քանի որ խմբերում երեխաների մեծ թվի ընդգրկումը պայմանավորված է բավարար քանակի խմբերի, այսինքն՝ տարածքային ու մարդկային ռեսուրսների պակասով, այս հիմնախնդիրը նաև այլ տեսանկյունից է դիտարկվում ուսումնասիրութան ընթացքում: Մասնավորապես, ծնողները և փորձագետները նշում են, որ անգամ 25-30 երեխաներ ընդգրկող խմբերը բարենպաստ միջավայր չեն ստեղծում անհատական մոտեցման կիրառմամբ արդյունավետ ուսուցման ու զարգացման համար, մինչդեռ, ինչպես հայտնի է, բազմաթիվ ՆԴՀ-ներում խմբերում ընդգրկվող երեխաների թիվն անցնում է նշված նորմայից, իսկ շատ մանկապարտեզներում կիրառվում է տարբեր տարիքի երեխաներին մեկ խմբում համադրելու պրակտիկան։

Ինչպես բացահայտվեց մոնիտորինգի ընթացքում, բազմաթիվ մանկապարտեզներ չեն կարողանում ապահովել չափորոշիչներով նախատեսված և իրենց անհրաժեշտ **հաստիքները**։ Մանկապարտեզների տնօրենների կողմից հատկապես խնդրահարույց է համարվել գործավարի հաստիքի պակասը։ Ֆինանսական միջոցների սղության պատճառով մանկապարտեզները չեն կարողանում նաև ավելի երկար աշխատանքային ժամեր ապահովել՝ առանց խախտելու դաստիարակների ու դայակների աշխատանքային իրավունքը։ ՆԴՀ-ների աշխատանքային ժամերը 9:00-ից 17:00-ն սահմանելը, մյուս կողմից, խոչընդոտում է ծնողների, աշխատանքային իրավունքի իրացմանը, քանի որ նրանք չեն կարողանում ժամանակին ներկայանալ աշխատանքի և ստիպված են կես դրույքով աշխատանք փնտրել կամ այլընտրանքային լուծումներ գտնել երեխաներին մանկապարտեզ տանելու ու շուտ վերցնելու համար։

Մոնիտորինգը բացահայտեց նաև **շենքային անբավարար պայմանների խնդիրը**, որն առկա է բազմաթիվ մանկապարտեզներում։ Մասնավորապես, կան տարածքի սահմանափակության, խաղերի ու պարապմունքների համար նախատեսված պայմանների բացակայության և ջեռուցման խնդիրներ։

Մոնիտորինգի ընթացքում առավել մեծ ուշադրություն է հատկացվել **նախադպրոցական կրթության որակի խնդիրներին**։ Այս ոլորտում առկա խնդիրներն են՝ ուսուցման ու զարգացման պարագաների պակասը, ներառականության համար նախադրյալների պակասը, միջգերատեսչական համագործակցության ցածր արդյունավետությունը։ Բացի այդ, թեև նախադպրոցական կրթությունը ոչ միայն ՆԴՀ-ների, այլև ծնողների խնդիրն է, այսօր ծնողները որևէ համակարգային կրթություն կամ աջակցություն չեն ստանում՝ ծնողավարման հմտությունները զարգացնելու, ծագած հարցերի պատասխանները գտնելու, մասնագետների աջակցությունն ստանալու ուղղությամբ։

Բազմաթիվ մանկապարտեզներ չունեն **ուսուցման ու զարգացման անհրաժեշտ բոլոր պարագաները**։ Այս խնդիրը հիմնականում պայմանավորված է սահմանափակ ֆինանսական ռեսուրսներով։ Մյուս կողմից, խնդիրը նաև առաջնահերթությունների սահմանման մեջ է։ ՏԻՄ-երը հաճախ հիմնական ուշադրությունը դարձնում են մանկապարտեզների հաստիքների, ընթացիկ ծախսերի ֆինանսավորման խնդիրներին և երկրորդական համարում ուսումնական ու զարգացման պարագաների ձեռքբերումը։ Սակայն այդ պարագաները և առհասարակ զարգացնող առարկայական միջավայրը կենտրոնական դեր ունեն երեխաների արդյունավետ ուսուցման ու զարգացման տեսանկյունից, իսկ դրանց բացակայությունը խոչընդոտում է մանկավարժների աշխատանքը ու չի նպաստում մոտիվացնող ուսումնական միջավայրին։

Հետազոտությունը ցույց տվեց, որ համայնքներում **զարգացման տարբեր խնդիրներ ունեցող բազմաթիվ երեխաներ** կան, որոնք նախադպրոցական կրթություն ստանալու իրավունք ունեն, սակայն մանկապարտեզները չեն կարողանում ապահովել անհրաժեշտ պայմանները: Խնդիրները բազմաթիվ ու բազմատեսակ են՝ սկսած խմբերում երեխաների մեծ թվից, ինչը գրեթե անհնար է դարձնում անհատական մոտեցման կիրառում երեխաների հանդեպ, վերջացրած հատուկ մասնագետների պակասով: Ընդ որում, հատուկ մասնագետները անհրաժեշտ են ոչ միայն խնդիրներ ունեցող երեխաների, այլև բոլոր երեխաների կարիքները հասցեագրելու համար, քանի որ նախադպրոցական տարիքի բոլոր երեխաներն էլ անհատական մոտեցման ու խնդիրների վաղ բացահայտման կարիք ունեն:

## ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Հետազոտության բացահայտումների հիման վրա ներկայացնենք մի շարք առաջարկներ՝ ուղղված մանկապարտեզների ղեկավարությանը և ՏԻՄ-երին, պետական պատկան մարմիններին և ոլորտում աշխատող կազմակերպություններին:

**Մանկապարտեզների հասանելիության** բարելավման համար ՏԻՄ-երին առաջարկվում է՝

- Լրացուցիչ տարածք հատկացնել ՆԴՀ-ներին՝ համայնքում նախադպրոցական տարիքի բոլոր երեխաներին հնարավորություն տալով ընդգրկվել նախադպրոցական կրթության համակարգում:
- Ուսումնասիրել հովանավորներից անհրաժեշտ միջոցների հայթայթման, համայնքի բնակչության նյութական և աշխատուժի տեսքով ներդրումների հնարավորությունները:
- Ուսումնասիրել նախկինում օտարված մանկապարտեզների շենքերը վերադարձնելու հնարավորությունը:

Որպես այլընտրանքային լուծում՝ այն համայնքներում, որտեղ չկան նախակրթարաններ և ապահովված չէ նախադպրոցական տարիքի բոլոր երեխաների ընդգրկումը ՆԴՀ-ներում առաջարկվում է՝

- Կազմակերպել կարճատև (օրինակ՝ օրական կամ շաբաթական մի քանի ժամ) ուսումնական ծրագրեր համայնքի նախադպրոցական տարիքի երեխաների համար՝ նրանց ուսուցումն ապահովելու նպատակով:

Առաջարկվում է նաև լրացուցիչ միջոցներ հատկացնել մսուրային խմբերի ստեղծման համար՝ վաղ տարիքի երեխաների խնամքն ու զարգացումն ապահովելու նպատակով:

Հասանելիության խնդիրը լուծելուն զուգահեռ՝ **խմբերի գերբեռնվածության** խնդրի լուծման ուղղությամբ առաջարկվում է՝

- ՏԻՄ-երին և մանկապարտեզներին՝ նվազեցնել խմբերի բեռնվածությունը և խառը խմբերը տրոհել առանձին տարիքային խմբերի:
- Հասանելիության խնդրի լուծման համար միջոցառումներ ձեռնարկելուց հետո՝ ԿԳՆ կողմից փոփոխել համապատասխան չափորոշիչները՝ խմբում առավելագույնը 20-25 երեխա ընդգրկելու համար, որը սակայն ներկա պայմաններում էլ ավելի կարող է սահմանափակել նախադպրոցական կրթության հասանելիությունը:

Որպես **հաստիքների պակասի** խնդրի լուծում, ՏԻՄ-երին առաջարկվում է՝

- Քաղաքային համայնքներում առնվազն մեկ մանկապարտեզ նախատեսել՝ ավելի երկար աշխատանքային ժամերով, որպեսզի աշխատող ծնողները կարողանան օգտվել այդ մանկապատեզի ծառայություններից: Մանկավարժների համար լրացուցիչ դրույքաչափի, ինչպես և մյուս հաստիքների ապահովման համար ֆինանսական ռեսուրսներ են հարկավոր, հետևապես առաջարկվում է ՏԻՄ-երին վերանայել բյուջեի համապատասխան հատկացումները:

Աշխատող ծնողների համար մանկապարտեզում երեխայի խնամքի ավելի **երկար ժամանակահատված** նախատեսելու համար՝ մանկապարտեզներին առաջարկվում է

- Կազմակերպել երկարօրյա խմբեր՝ ըստ անհրաժեշտության որոշակի վարձավճար սահմանելով ծնողների համար:

Մանկապարտեզները և ՏԻՄ-երը պետք է պատշաճ **շենքային պայմաններ** ապահովեն երեխաների խնամքի ու զարգացման համար: Մասնավորապես, անհրաժեշտ է՝

- Նախատեսել բավարար տարածք երեխաների խաղի ու հանգստի համար, երաժշտական ու մարզական պարապմունքների համար՝ դահլիճ, իսկ բակում՝ խաղահրապարակ՝ իր անհրաժեշտ պարագաներով:
- Ապահովել տաք ջրամատակարարում մանկապարտեզում՝ ըստ նախատեսված չափորոշիչների:

**Օդափոխության ու զբոսանքի** խնդիրները լուծելու համար ծնողներին առաջարկվում է՝

- Պահանջել համապատասխան նորմատիվների կատարումը ՆԴՀ-ների կողմից:

**Նախադպրոցական կրթության որակի** հետ կապված խնդիրների լուծման ուղղությամբ ԿԳՆ-ին առաջարկվում է՝

- Առաջնային ուշադրություն հատկացնել մանկավարժների վերապատրաստմանը և մշակված գործիքների պատշաճ կիրառմանը, որը խնդրահարույց է լինում՝ հատկապես հաշվի առնելով անհատական մոտեցման ու երեխաների կատարողականի գնահատման դժվարությունները:
- Մշակել մանկավարժների աշխատանքի մոնիտորինգի, աջակցության, խրախուսման պատշաճ մեխանիզմներ, ընդ որում, մոնիտորինգը չպետք է վերածվի վերահսկողության, այլ աջակցող բնույթ կրի:
- Ներդնել մենթորինգի ինստիտուտը, այսինքն՝ ավելի փորձառու մանկավարժները որոշ ժամանակ աջակցեն և ուղղորդեն նորավարտ կամ վերապատրաստված մանկավարժներին, մինչ վերջիններս բավարար փորձ ձեռք կբերեն երեխաների հետ մշակված մեթոդիկայով աշխատելու համար: Այդ նպատակով յուրաքանչյուր մարզում կարելի է ստեղծել մենթորների խմբեր:
- Ատեստավորման համակարգ կիրառել, ինչպես դպրոցական կրթության ոլորտում, քանի որ նախադպրոցական կրթության ոլորտում ևս գիտելիքների ու հմտությունների պարբերական ստուգման, նոր միտումների ու փոփոխությունների հետ ծանոթանալու կարիք կա:

- Ֆինանսական միջոցներ ապահովել մանկավարժների մասնագիտական զարգացման միջոցառումների մասնակցության համար:
- Վերապատրաստման համար օգտագործել տեղեկատվական նոր միջոցները, օրինակ վերապատրաստման առցանց դասընթացներ իրականացնել, ուսուցողական նյութեր տարածել, օգտագործել հաշվառման, խնդիրների քարտեզագրման էլեկտրոնային միջոցներ:
- Բարելավել կրթության որակը նախադպրոցական կրթության ոլորտի մանկավարժներ պատրաստող բուհերում, մասնավորապես զարգացնելով գործնական ուսուցման բաղադրիչը և ընդգրկելով ներառականության թեմաները, կազմակերպելով դասախոսական կազմի վերապատրաստումներ ու արդիական մոտեցումներ ինտեգրելով ուսումնական ծրագրերում:

**Ծնողական կրթության** ներդնումը ևս կարևոր քայլ կլինի երեխաների ուսուցման ու զարգացման բարենպաստ միջավայրի ապահովման ուղղությամբ: Ըստ այդմ, ԿԳՆ-ին առաջարկվում է՝

- Դպրոցական ու բուհական ծրագրերում ներառել ծնողավարման հմտությունների թեման:

ՆԴՀ-ներին առաջարկվում է՝

- Ծնողների համար իրականացնել պարբերական դասընթացներ կամ սեմինարներ, մանկավարժների ավելի սերտ աշխատանք ապահովել ծնողների հետ:

Ներառականության վերաբերյալ հանրային վերաբերմունքը և մասնավորապես զարգացման խնդիրներ ունեցող ծնողների ընկալումը փոխելու համար ծնողական կրթության միջոցառումներին անհրաժեշտ է անդրադառնալ **ներառականության հարցերին**: Հարկ է նաև ուշադրություն դարձնել երեխայի **հուզական և սոցիալական զարգացման** թեմաներին, որպեսզի ծնողները զարգացման այս ոլորտներին ֆիզիկական ու կոգնիտիվ զարգացմանը համարժեք կարևորություն տան:

ՏԻՄ-երի սահմանափակ բյուջեի պարագայում **ուսուցման ու զարգացման պարագաների** խնդրի լուծման համար ԿԳՆ-ին առաջարկվում է՝

- Առանձին բյուջետային միջոցներ նախատեսել ՆԴՀ-ները ուսուցման և զարգացման պարագաներով համալրելու համար:

ՏԻՄ-երին ու ՆԴՀ-ներին առաջարկվում է՝

- Ուսուցման ու զարգացման պարագաների հայթայթման այլընտրանքային միջոցներ փնտրել, մասնավորապես՝ համագործակցելով բարեգործական կազմակերպությունների ու մասնավոր ընկերությունների հետ:

**Նախադպրոցական կրթության ներառականությունն** ապահովելու համար ԿԳՆ-ին առաջարկվում է՝

- Չափորոշիչներում ներառել հետևյալ պարտադիր հաստիքները՝ հոգեբան, լոգոպեդ, հատուկ մանկավարժ, ֆիզիկական դաստիարակության մասնագետ:
- Շարունակել աշխատանքները ներառական նախադպրոցական կրթության իրավական կարգավորումների սահմանման ուղղությամբ:

**Միջգերատեսչական համագործակցության** խնդիրը լուծելու համար առաջարկվում է՝

- Միջգերատեսչական հատուկ մարմին ստեղծել ՆԴՀ-ների հարցերով զբաղվելու համար, ինչպես նաև հարթակներ՝ ոլորտում աշխատող բոլոր տեղական ու միջազգային կազմակերպությունների ներգրավմամբ, որը կնպաստի ոլորտում իրականացվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության փոխանակմանը և ջանքերի օպտիմալացմանը:

Որպես ընդհանուր առաջարկ՝ ԿԳՆ-ին և մյուս պատկան մարմիններին առաջարկում ենք կանոնավոր հիմքերի վրա դնել ՆԴՀ մոնիտորինգը և չափորոշիչներին համապատասխանության գնահատումը:

Մոնիտորինգի արդյունքները ներկայացնելու և բացահայտված խնդիրների լուծումները ջատագովելու նպատակով ՄԶՀ-ն կազմակերպել է համայնքային քննարկումներ՝ համայնքի շահագրգիռ կողմերի՝ ՏԻՄ, ՆԴՀ տնօրենների ու ծնողների մասնակցությամբ: Հանդիպումների արդյունքում ծրագրի թիրախ համայնքներում գործողությունների պլաններ մշակվեցին ՆԴՀ հիմնախնդիրների լուծման վերաբերյալ: Թիրախ համայնքներում իրականացվող իր գործունեության շրջանակներում ՄԶՀ-ն հետևողական կլինի գործողությունների ծրագրերի իրականացմանը հետևելու և հնարավոր աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ: Իր հետագա աշխատանքներում ՄԶՀ-ն կհամագործակցի նաև պետական մարմինների՝ մասավորապես ԿԳՆ հետ, ինչպես նաև ոլորտում ներգրավված տեղական ու միջազգային կազմակերպությունների հետ՝ իրավական մակարդակում բացահայտված խնդիրները լուծելու և վերը շարադրված առաջարկների իրագործումը ջատագովելու նպատակով:

## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. Նախադպրոցական կրթության ոլորտի իրավական ակտերի ցանկ

Հավելված 2. Նախադպրոցական կրթության վերաբերող իրավական փաստաթղթերի հիման վրա մշակված մշտադիտարկման գործիքի ցուցիչներ

Հավելված 3. Նախադպրոցական կրթական ծառայությունների մոնիտորինգի քարտ

Հավելված 4. Փորձագիտական հարցազրույցների մասնակիցների ցանկ

Հավելված 5. Փորձագիտական հարցազրույցի հարցաշար

Հավելված 6. Ֆոկուս-խմբային քննարկման հարցաշար

Հավելված 7. Ֆոկուս-խմբային քննարկումների մասնակից ծնողների հարցաթերթ

Հավելված 8. Ըստ համայնքների ՆԴՀ ծառայությունների՝ չափորոշիչներին համապատասխանության ամփոփ աղյուսակ

## Հավելված 1. Նախադպրոցական կրթության ոլորտի իրավական ակտերի ցանկ

1. «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը, ընդունված 29.05.1996թ., ուժի մեջ է մտել 27.06.1996թ.,
2. «Կրթության մասին» ՀՀ օրենքը, ընդունված 14.04.1999թ., ուժի մեջ է մտել 14.05.1999թ.,
3. «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքը, ընդունված 15.11.2005թ., ուժի մեջ է մտել 01.01.2006թ.,
4. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, ընդունված 07.05.2002թ., ուժի մեջ մտած 21.06.2002թ.,
5. ՀՀ կրթության և գիտության նախարարի 26.01.2007թ. թիվ N 29-Ն հրամանը «ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները հաստատելու մասին»,
6. ՀՀ կրթության և գիտության նախարարի 30.03.2011թ. թիվ 257-Ն հրամանը «Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչները հաստատելու մասին»,
7. ՀՀ առողջապահության նախարարի 20.12.2002թ. թիվ 857-Ն հրամանը «Նախադպրոցական կազմակերպությունների (հիմնարկների) N2.III.1 սանիտարական նորմերը և կանոնները հաստատելու մասին»:

## Հավելված 2. Նախադպրոցական կրթությանը վերաբերող իրավական ակտերով սահմանված հիմնական չափորոշիչներ

ՀՀ կրթության և գիտության նախարարի 26.01.2007թ. թիվ 29-Ն հրամանով նախատեսված է ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, որի համաձայն հաստիքներն ունեն հետևյալ բաշխվածությունը՝

| № | Պաշտոնի անվանումը | Հաստիքային միավորների քանակը՝ կախված խմբերի թվից | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2 խումբ | 3 խումբ | 4 խումբ | 5 խումբ | 6 խումբ | 7 խումբ | 8 խումբ | 9 խումբ | 10 խումբ | 11 խումբ | 12 խումբ |
| 1. | Տնօրեն | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 2. | Մեթոդիստ ուս.գծով տնօրենի տեղակալ | - | - | 0,5 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1,25 | 1,25 | 1,25 |
| 3. | Բուժքույր | 0,5 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1,5 | 1,5 | 1,5 | 1,5 | 1,5 |
| 4. | Գլխ. հաշվապահ | 0,5 | 0,5 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 5. | Հաշվետար-գանձապահ | 0,5 | 0,5 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 6. | Տնտեսվար | 0,5 | 0,5 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 7. | Պահեստապետ | - | - | - | - | - | - | - | - | 1 | 1 | 1 |
| 8. | Գործավար | 0,5 | 0,5 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 9. | Շեֆ խոհարար | - | - | - | - | - | - | -- | - | 1 | 1 | 1 |
| 10. | Խոհարար | 1 | 1 | 1 | 1 | 1 | 2 | 2 | 2 | 1 | 1 | 2 |
| 11. | Խոհարարի օգնական | 0,5 | 0,5 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 12. | Օժանդակ բանվոր | 0,5 | 0,5 | 0,5 | 0,5 | 1 | 1 | 1 | 1 | 2 | 2 | 2 |
| 13. | Շենքերի, սարքավորումների սպասարկող և նորոգող բանվոր | - | - | 0,5 | 0,5 | 0,5 | 0,5 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 14. | Դերձակ | - | 0,5 | 0,5 | 0,5 | 0,5 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 15. | Լվացարար (շուրջօրյա հաճախում ունեցող մանկապարտեզում) | 0,75 | 1 | 1 | 1,5 | 2 | 2,25 | 2,5 | 2,5 | 2,5 | 3 | 3 |
| 16. | Լվացարար (շուրջօրյա հաճախում չունեցող մանկապարտեզում) | 0,75 | 1 | 1 | 1,25 | 1,75 | 1,75 | 2 | 2 | 2,5 | 2,5 | 2,5 |
| 17. | Հավաքարար | - | - | - | 0,5 | 0,5 | 0,5 | 1 | 1 | 1 | 1 | 1 |

Նույն հրամանով նախատեսված է նախադպրոցական ուսումնական հաստատությունների հետևյալ խտությունը՝

| Չափորոշիչ | Քանակական կամ որակական ցուցանիշ |
|---|---|
| Խմբերի խտություն | մինչև 1 տարեկան՝ 10-15<br>1-ից 3 տարեկան՝ 15-20<br>3-ից 6 տարեկան՝ 25-30[25] |

[25] Հիմնադրի կողմից կարող են սահմանվել երաշխավորվածից ցածր խտությամբ դաստիարակչական խմբեր՝ հիմնադրի կողմից լրացուցիչ բյուջետային միջոցների առկայության դեպքում: Սահմանամերձ գոտում, գյուղական, բարձրադիր և հեռավոր վայրերում տեղական ինքնակառավարման մարմինների

| | |
|---|---|
| Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների խմբերի խտություն<br>այդ թվում՝ խոսքի ծանր խանգարումով, լսողության խանգարումով, մտավոր հետամնաց երեխաների համար | մինչև 5 երեխա<br><br>մինչև 7 երեխա |
| Ազգային փոքրամասնության երեխաներով խմբերի գործարկումը թերկոմպլեկտավորված համակազմի խտությամբ | 8-10 երեխա |

ՀՀ կրթության և գիտության նախարարի 30.03.2011թ. թիվ 257-Ն հրամանով նախատեսված են նախադպրոցական ուսումնական հաստատությունների խմբերի տեսակներն ըստ տարիքի և կրթական ծրագրերին ու զարգացման պայմաններին ներկայացվող հետևյալ պահանջները՝

| | |
|---|---|
| Խմբերի տեսակներն ըստ տարիքի՝<br>- վաղ տարիքի առաջին խումբ<br>- վաղ տարիքի երկրորդ խումբ<br>- կրտսեր առաջին խումբ<br>- կրտսեր երկրորդ խումբ<br>- միջին խումբ<br>- ավագ խումբ | - 2 ամսականից մինչև 1 տարեկան,<br>- 1 տարեկանից մինչև 2 տարեկան,<br>- 2 տարեկանից մինչև 3 տարեկան,<br>- 3 տարեկանից մինչև 4 տարեկան,<br>- 4 տարեկանից մինչև 5 տարեկան,<br>-5 տարեկանից մինչև 6 տարեկան. |
| Կրթական ծրագրերին ներկայացվող պահանջները | 1) համապատասխանությունը նախադպրոցական կրթության չափորոշչին.<br>2) կրթության աշխարհիկ բնույթը.<br>3) երեխաների հետ մեծերի փոխգործունեության անհատակողմնորոշիչ (անձնակողմնորոշիչ) սկզբունքի ապահովումը.<br>4) ազգային ավանդույթների և համամարդկային արժեքների զուգորդումը.<br>5) կրթության բովանդակության մեջ երեխայի խոսքի, տրամաբանության, մտավոր, ֆիզիկական, գեղարվեստագեղագիտական զարգացման, բնագիտության հիմունքներին ծանոթացման ներառումը: |
| 3-ից մինչև 6 տարեկան երեխաների զարգացման պայմանների առկայություն | 1) սարքավորումներ և դիդակտիկ միջոցներ երեխաների համակողմանի զարգացման համար. |

կողմից թույլատրվում է խմբերի համալրման կարգում կիրառել տարբերակված մոտեցում՝ ելնելով բնակչության պահանջարկի հաշվարկից և համայնքի բյուջեի հնարավորություններից:

| | |
|---|---|
| | 2) տեսալսողական միջոցներ.<br>3) ալբոմներ, գեղարվեստական գրականություն և այլ նյութեր երեխաների տպավորությունները հարստացնելու համար.<br>4) պայմաններ մարդու, պատմության, մշակույթի մասին երեխաների պատկերացումների զարգացման համար. խմբասենյակում առկա են դիդակտիկ խաղեր (լոտո, դոմինո, նկարների հավաքածուներ), տարբեր սյուժետային խաղային հավաքածուներ, լեգոներ և խաղալիքներ՝ տարաբնույթ գործունեության ժամանակ երեխաների զարգացման համար.<br>5) խաղեր երեխաների ինտելեկտուալ զարգացման համար (դոմինո, շաշկի, շախմատ և այլն).<br>6) խաղալիքներ և սարքավորումներ սենսորային զարգացման համար.<br>7) դիտողական, նկարազարդ նյութեր.<br>8) պայմաններ երեխաների անհատական և համատեղ ակտիվության դրսևորման համար.<br>9) պայմաններ երեխաների առողջության պահպանման և ամրապնդման համար.<br>10) բժշկական սարքավորումներ երեխաների բուժկանխարգելիչ միջոցառումների համար.<br>11) հատուկ տարածքներ երեխաների հետ տարվող շտկողական աշխատանքների համար (հոգեբանի, լոգոպեդի, այլ հատուկ մանկավարժի համար).<br>12) պայմաններ երեխաների գեղարվեստագեղագիտական զարգացման համար.<br>13) հատուկ սարքավորումներ գեղարվեստական ստուդիայի համար.<br>14) տարածքի գեղագիտական ձևավորումներ՝ ուղղված երեխաների գեղարվեստական զարգացմանը (նկարներ, վերատպություններ, ժողովրդական ստեղծագործության նմուշներ, երեխաների, մեծերի աշխատանքների ցուցահանդեսներ և այլն).<br>16) պայմաններ երեխաների թատերական գործունեության զարգացման համար.<br>17) օժանդակ հարմարություններ թատերական գործունեության կազմակերպման համար.<br>18) թատրոնների տարաբնույթ տեսակներ (ստվերային, ստվարաթղթային, սեղանային և այլն).<br>19) թատերական բեմականացումների համար ատրիբուտներ. |

| | |
|---|---|
| | 20) պայմաններ երեխաների երաժշտական գործունեության զարգացման համար.<br>21) երաժշտական դահլիճ.<br>22) երաժշտական գործիքներ.<br>23) մանկական երաժշտական գործիքներ.<br>24) երաժշտադիդակտիկ խաղեր և պիտույքներ.<br>25) երաժշտական անկյուններ.<br>26) երաժշտական գործիքներ.<br>27) երաժշտական միջավայր (երաժշտությունն ուղեկցվում է պարապմունքների, ռեժիմային պահերի ժամանակ).<br>28) պայմաններ երեխաների կոնստրուկտիվ (կառուցողական) գործունեության զարգացման համար.<br>29) մանր (սեղանային) և խոշոր (հատակի) կառուցողական նյութեր.<br>30) տարբեր տիպի կոնստրուկտորներ՝ փայտե, մետաղական, պլաստմասսայի դետալների տարբեր միացումներով.<br>31) մոզաիկաներ, թանգրամներ, կտրվածքներով նկարներ.<br>32) բնական նյութեր գեղարվեստական կառուցումների համար.<br>33) պայմաններ երեխաների էկոլոգիական կուլտուրայի զարգացման համար.<br>34) դիտողական պիտույքներ, պատկերազարդ նյութեր երեխաների էկոլոգիական կուլտուրայի զարգացման համար.<br>35) կանաչապատման անկյուններ (սենյակային բույսեր).<br>36) կենդանիներ, թռչուններ, ձկներ, կրիա և այլն.<br>37) պայմաններ բույսերի խնամքի և աճեցման համար (այգի, բանջարանոց, ծաղկանոց և այլն).<br>38) առանձին տարածք կենդանի բնության համար (ձմեռային այգի, կենդանական անկյուն և այլն).<br>39) հողամասում՝ էկոլոգիական արահետ.<br>40) պայմաններ մարդու, պատմության, մշակույթի մասին երեխաների պատկերացումների զարգացման համար.<br>41) անկյուն պետական խորհրդանիշների համար (դրոշ, զինանշան, օրհներգ). |

| | |
|---|---|
| | 42) ազգային, ժողովրդական կենցաղի առարկաների նմուշներ.<br><br>43) ազգային և այլազգի տարազներով տիկնիկներ.<br><br>44) գեղարվեստական համապատասխան գրականություն.<br><br>45) սեղանային տպագիր և դիդակտիկ խաղեր և խաղալիքներ, որոնք ծանոթացնում են երթևեկության կանոններին.<br><br>46) պայմաններ երեխաների ֆիզիկական զարգացման համար.<br><br>47) մարզադահլիճ, դեկորատիվ կամ իսկական լողավազան.<br><br>48) երեխաների ֆիզիկական ակտիվության համար անհրաժեշտ սարքավորումներ, մարզական գույք.<br><br>49) բակում և տարածքում՝ պայմաններ երեխաների ֆիզիկական զարգացման համար.<br><br>50) պայմաններ երեխաների մաթեմատիկական պատկերացումների ձևավորման համար.<br><br>51) ցուցադրական և բաշխիչ նյութեր հաշվի, քանակի, առարկաների մեծության և ձևերի վերաբերյալ երեխաների պատկերացումների զարգացման համար.<br><br>52) նյութեր և սարքավորումներ՝ թվի, մեծության մասին երեխաների պատկերացումների ձևավորման համար (թվանշաններ, կշեռքներ, չափման միավորներ և այլն).<br><br>53) նյութեր երեխաների տարածական և ժամանակային պատկերացումների զարգացման համար (գրատախտակ, օրացույց, ժամացույց. ավազի, արևային ժամացույց և այլն).<br><br>54) համակարգչի առկայություն՝ համակարգչային խաղերով.<br><br>55) նյութեր և սարքավորումներ երեխաների փորձարարական աշխատանքների ցուցադրման համար (գլոբուս, քարտեզ, մակետներ, նկարների հավաքածուներ, մագնիս, սեղանային տպագիր խաղեր և այլն).<br><br>56) պայմաններ երեխաների խոսքի զարգացման համար.<br><br>57) մանկական գրադարան.<br><br>58) առանձին տարածքներ օտար լեզուների ուսուցման համար.<br><br>59) ծրագրամեթոդական գրականության անկյուն աշխատողների և ծնողների համար. |

| | |
|---|---|
| | 60) նկարների հավաքածուներ և սեղանային տպագիր խաղեր խոսքի զարգացման ուղղությամբ.<br>61) առանձին տարածք խաղերի համար.<br>62) բակում, հողամասում՝ խաղային սարքավորումներ.<br>63) խաղեր և խաղալիքներ տարբեր տեսակի խաղերի համար. սյուժետաղերային, շարժուն, մարզական, դիդակտիկ և այլն.<br>64) նյութեր, որոնք կարող են հիմք ծառայել՝ որպես փոխարինիչ առարկաներ օգտագործելու համար: |
| Մինչև 6 տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչներ | Այս չափորոշիչների բազմազան և մեծածավալ լինելու պատճառով դրանք ներկայացվում են Հավելված 3-ով: |

ՀՀ առողջապահության նախարարի 20.12.2002թ. թիվ 857-Ն հրամանով հաստատվել են նախադպրոցական կազմակերպությունների սանիտարական նորմերը և կանոնները, որոնք ներառում են հետևյալ չափորոշիչները՝

| | |
|---|---|
| Բնական լուսավորում | Խմբասենյակներում, ննջարաններում, բժշկական սենյակում, մեկուսարանում, հիվանդասենյակում, մարմնամարզական և երաժշտական պարապմունքների դահլիճներում բնական լուսավորության գործակիցը (ԲԼԳ) պետք է լինի 1,5%-ից ոչ պակաս: |
| Երկրորդ լույսով լուսավորում | Թույլատրվում է միայն սանհանգույցում, ընդունարանում, հանդերձարանում: |
| Տաք ջրամատակարարում | Խոհանոցում, լվացքատանը, վաղ հասակի երեխաների (1-ին խումբ) խաղասենյակներում, բոլոր խմբերի բուֆետային մասում և սանհանգույցներում՝ ծորակ-խառնիչների առկայությամբ: |
| Ցնցուղներին և լվացարաններին միացվող տաք ջուր | Ջուրը պետք է լինի 37⁰-ից ոչ բարձր: |
| Կենտրոնացված ջեռուցման և օդափոխության համակարգեր | Բոլոր տեղերում: Որպես ջեռուցիչ սարքեր կարող են օգտագործվել խողովակային տաքացուցիչները, տեղադրված բետոնե պանելների մեջ, ջեռուցիչներ, ինչպես նաև ծածկոցներով (տաք օդ մղող) կոնվեկտորներ: Այրվածքներից ու վնասվածքներից խուսափելու համար անհրաժեշտ է ջեռուցման սարքերը արտաքինից ծածկել փայտյա ցանցաճաղով:<br>Գյուղական բնակավայրերում մեկ հարկանի մսուր-մանկապարտեզների շենքերում (50 տեղից ոչ ավելի) թույլատրվում է վառարանային ջեռուցում: Վառարանի բացվածքը փակվում է հերմետիկ դռնով, տեղադրվում է միջանցքում և ոչ թե այն տարածքում, որտեղ երեխաներն են: Վառարանները վառվում են երեխաների բացակայությամբ և մարվում են երեխաների գալուց 1,5-2 ժամ առաջ: |

| | |
|---|---|
| Հատակը պետք է -<br><br>Կահույքը, պատուհանի գոգերը, ջեռուցիչները սրբել խոնավ շորով, մանկական զգեստապահարանները պետք է<br>- Երաժշտական և մարմնամարզական պարապմունքների սենյակները պետք է -<br>Տարածքների լիարժեք մաքրումը պետք է - | - լվանալ օրը 2 անգամից ոչ պակաս, 1 անգամը պարտադիր կահույքի տեղաշարժով:<br>- սրբել ամեն օր, իսկ շաբաթը 1 անգամ լվանալ:<br><br>- մաքրել յուրաքանչյուր պարապմունքից հետո:<br><br>- կատարվի ամեն ամիս և համաճարակային ցուցումով՝ հատակի լվացում, լուսատուների, պատուհանների, դռների, պատուհանների լվացում մաքրող և վարակազերծող նյութերով: |
| Խաղալիքների մաքրություն | Բոլոր ձեռք բերված խաղալիքները (բացառությամբ փափուկ խաղալիքների) մինչև խմբերին հանձնելն անհրաժեշտ է 15 րոպե լվանալ հոսող ջրի տակ ($37^0$ C) օճառով, իսկ հետո չորացնել բացօթյա: Ռետինե, փրփրալատեքսային և այլ նմանատիպ խաղալիքները լվացման ընթացքում պետք է ամուր քամել:<br><br>Հետագայում վաղ հասակի 1-ին խմբի խաղալիքներն անհրաժեշտ է լվանալ օրը 2 անգամ տաք ջրով, խոզանակով, օճառով կամ 2%-ոց սննդային սոդայի լուծույթով, մակնշված թասերում, որից հետո լվանալ հոսող ջրի տակ ($37^0$ C) և չորացնել: Ավելի մեծահասակ երեխաների խաղալիքները՝ ամեն օր, օրվա վերջում: Տիկնիկների շորերը լվանալ, արդուկել ըստ անհրաժեշտության:<br><br>Կազմակերպված մանկական կոլեկտիվներում, մինչև 3 տ. երեխաներին և մեկուսարանների համար արգելվում է փափուկ և փրփրալատեքսային մազմզոտ խաղալիքների օգտագործումը: Նմանատիպ խաղալիքները խորհուրդ է տրվում օգտագործել միայն մեծերին, որպես դիդակտիկ միջոց:<br><br>Փափուկ խաղալիքներն ամեն օր օրվա վերջում վարակազերծվում են բակտերիոցիդ լամպերով, 40 րոպե, որը տեղակայվում է լամպից 25 սմ հեռավորության վրա: |
| Անկողնային սպիտակեղենի մակնանշում | ստորին անկյունում |
| Սպիտակեղենի և սրբիչների փոխարինում | Կատարվում է ելնելով աղտոտվածությունից, բայց ոչ ուշ, քան շաբաթը 1 անգամ: |
| Զուգարանների հատակը, նստակոնքերի մաքրությունը | Պետք է լվանալ օրը 2 անգամ հոսող տաք ջրով, օգտագործելով լվացող նյութեր: Նստակոնքը միզաթթվային աղերից ազատելու համար անհրաժեշտ է ամիսը 2 անգամ լվանալ Սանիտարական նյութով, դրա բացակայության դեպքում՝ աղաթթվի 2 %-ոց լուծույթով: Նշված մշակումից հետո նստակոնքերը լվացվում են առատ ջրով: Մսուրային |

| | |
|---|---|
| | խմբերում հատակը լվացվում է երեխաների յուրաքանչյուր գիշերանոթին նստելուց հետո |
| Խմբասենյակների սեղանների մաքրությունը | Խմբասենյակների սեղանները նախքան սնունդ ընդունելը և հետո լվացվում են տաք ջրով, օճառով, հատուկ լաթերով, որոնք լվացվում, չորացվում և պահվում են չոր վիճակում կափարիչով փակվող հատուկ ամանների մեջ: Աթոռներն ամեն օր սրբվում են տաք ջրով և օճառով: |
| Օդափոխությունը | Դադարեցվում է երեխաների խմբասենյակ վերադառնալուց 30 րոպե առաջ: Օդափոխությունը զուգարանների միջով չի թույլատրվում: Միակողմանի օդափոխությունը կատարվում է երեխաների ներկայությամբ: |
| Երեխաների զբոսանքը մաքուր օդում | Պետք է կատարվի ոչ պակաս, քան օրը 2 անգամ: |
| Առանձին պահվող սննդամթերք /1 սառնարանի դեպքում առանձին շարահարկերում/ | Միս, ձուկ, բանջարեղեն, կիսաֆաբրիկատներ, կաթ, կաթնամթերք, մինչև 1 տարեկան երեխաների սննդամթերքը և կերային խառնուրդը, |
| Սննդի պատրաստման ժամանակ պահպանման ենթակա կանոններ | - հում և եփած մթերքի մշակումը պետք է կատարել առանձին սեղանների վրա, մակնշված տախտակներին, մակնշված դանակներով,<br><br>- սալաթների հում լավ մշակված բանջարեղենից պատրաստումը պետք է կատարվի առանձին սեղանների վրա ԵԲ եփած բանջարեղեն մակնշված տախտակին,<br><br>- մթերքը մանրելու համար պետք է ունենալ 2-ից ոչ պակաս մսաղաց (1-ը սորուն, մյուսը եփածի համար),<br><br>- մսի և ձկան ֆարշից պատրաստված կոտլետները, բիտկիները պետք է տապակվեն 2 կողմից 10 ր. ոչ պակաս, որից հետո անհրաժեշտ է պահել ջեռոցում 5-8 ր., մինչև պատրաստվելը,<br><br>- եփած մսից ճաշատեսակ պատրաստելու ժամանակ կամ առաջին ճաշատեսակի հետ մատուցելու համար, մանրեցված կամ բաժին միսն անպայման պետք է ենթարկել կրկնակի թերմիկ մշակման (արգանակի, սոուսի մեջ եփել, տապակել ջեռոցում) 220-250$^0$ 10 ր. ընթացքում,<br><br>- թխվածքների և ձվածեղի պատրաստման ժամանակ անհրաժեշտ է եփելը ավարտել ջեռոցում, 5-8 ր. 250$^0$ պայմաններում,<br><br>- մինչև 1-ին և 2-րդ ճաշատեսակների մատուցումը, այն կարող է մնալ տաք սալիկի վրա՝ ոչ ավելի, քան 2-3 ժ,<br><br>- թթված կաթը կարելի է օգտագործել միայն խմորի համար: |
| Պատրաստման արգելման մթերք | Արգելվում է մածունի, կաթնաշոռի, ինչպես նաև մսով բլիթների (բլինչիկ), թխվածքաճաշի, մսա-մակարոնների, կրեմների, օշարակների, տապակած սննդամթերքի, դոնդողի, պաշտետների պատրաստումը: Կտրականապես արգելվում է սնկերի, բաքերով կաթի օգտագործումը առանց եռացնելու, |

| | |
|---|---|
| | ինչպես նաև կաթնաշոռի, թթվասերի օգտագործումը առանց թերմիկ մշակման, ձվի և մսի, ջրային թռչնի մսի օգտագործումը առանց անասնաբույժի կողմից ստուգման: Արգելվում է տնային պայմաններում պատրաստված պահածոների օգտագործումը: |
| Շաբաթվա ընթացքում ուսումնական պարապմունքների քանակությունը | - փոքր և միջին խմբերում - 10,<br>- ավագ խմբերում - 151,<br>- նախապատրաստականում - 19 |
| Մեկ պարապմունքի տևողությունը | - փոքրերի խմբերում - ոչ ավելի, քան 10-15 րոպե,<br>- միջին խմբերում՝ մինչև 20 րոպե,<br>- ավագ խմբերում՝ 20-25 րոպե,<br>- նախապատրաստականում՝ 25-30 րոպե |
| Պարապմունքների միջև եղած ընդմիջումները | 10-12 րոպե |
| Պարապմունքների ընթացքում անցկացվող մարմնամարզական վարժություն | բոլոր խմբերում 1.5-2 րոպե |
| Պարապմունքների դասացուցակը կազմելիս առաջարկվող ցուցիչներ | - պլանավորել ուսումնական ծանրաբեռնվածության հավասարաչափ բաժանում՝ ողջ օրվա, շաբաթվա և տարվա ընթացքում,<br>- ուսումնական շաբաթվա սկզբում և վերջում նախասիրությունը տալ ավելի թեթև՝ բովանդակությամբ և բարդությամբ պարապմունքներին,<br>- միջին խմբի երեխաներից սկսած ընձեռել արձակուրդներ, համաձայն մանկապարտեզներում ուսուցման և դաստիարակման տիպային ծրագրերի |
| Մենյուի տևողությունը | 7 կամ 10 օր |
| Երեխաների սնուցման համար նախատեսվող սննդամթերքի ցուցակի փակցումը | Պետք է փակցվի ամեն օր յուրաքանչյուր խմբում ծնողների համար |
| Երեխաների պատրաստի սննդամթերքի մատուցման թույլտվությունը | Սննդամթերքը պետք է մատուցել բուժաշխատողի կողմից համտեսելուց և խոտանիչ մատյանի մեջ գրանցելուց, ճաշատեսակի որակի գնահատումից ու բաժանելու թույլատվություն տալուց հետո |

ՀՀ կրթության և գիտության նախարարի 30.03.2011թ. թիվ 257-Ն հրամանով նախատեսված են նաև մինչև 6 տարեկան երեխաների զարգացման և կրթական հետևյալ չափորոշիչները:

## ԿՐՏՍԵՐ ՏԱՐԻՔԻ ԵՐԿՐՈՐԴ ԽՄԲԻ՝ ԵՐԵՔԻՑ ՄԻՆՉԵՎ ՉՈՐՍ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

## ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ՈԼՈՐՏ

**Խոշոր շարժողական**

1. Երեխան դրսևորում է խոշոր շարժումներով պայմանավորված հիմնական հմտությունները՝ ցուցաբերելով հավասարակշռության, կոորդինացիայի զարգացող ունակություններ կանգնելու, քայլելու, վազքի, ցատկելու, մագլցելու, աստիճաններով իջնելու և բարձրանալու ժամանակ:
2. Երեխան դրսևորում է գնդակով խաղալու տարբեր հմտություններ:

**Նուրբ (մանր) շարժումներ**

3. Երեխան ցուցաբերում է ձեռքի և մատների շարժումների կառավարման հմտություններ:
4. Երեխան դրսևորում է նկարելու հմտություններ:
5. Երեխան ցուցաբերում է մկրատով կտրտելու պարզ հմտություններ:
6. Երեխան կատարում է ինքնասպասարկմանն ուղղված առօրյա գործողություններ:

## ԽՈՍՔԻ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՈԼՈՐՏ

**Բանավոր խոսք**

**Խոսքի ընկալում և օգտագործում**

1. Երեխան ընկալում է իրեն ուղղված ուրիշի բանավոր խոսքը:
2. Երեխան բանավոր արտահայտում է իր մտքերն ու կարծիքը, զգացողություններն ու զգացմունքները:

**Խոսքի հնչյունաբանական և քերականական իմացություն**

3. Երեխան ճանաչում է մայրենի լեզվի հնչյունները և կարողանում դրանք ճիշտ արտասանել:
4. Երեխան ճիշտ օգտագործում է խոսքի տարբեր մասեր:

**Հաղորդակցում**

5. Երեխան արդյունավետորեն հաղորդակցվում է մեծահասակների, հասակակիցների և փոքրերի հետ:

**Գրավոր խոսք**

**Հետաքրքրություն գրքերի և գրվածքի նկատմամբ**

6. Երեխան հետաքրքրություն է ցուցաբերում գրքերի և ընթերցանության նկատմամբ:

**Հետաքրքրություն վաղ գրաճանաչության նկատմամբ**

7. Երեխան հասկանում է գրավոր խոսքի որոշ սկզբունքներ:
8. Երեխան ունի գրելու պարագաների օգտագործման պարզագույն հմտություններ:

## ԻՄԱՑԱԿԱՆ ՈԼՈՐՏ

**Մտածողություն և տրամաբանություն**

1. Երեխան հետազոտում և համեմատում է, առարկաները:
2. Երեխան հասկանում է իրադարձությունների հաջորդականությունը և պարզ պատճառահետևանքային կապերը:
3. Երեխան կարողանում է ընդհանրացումներ կատարել:

**Տարրական մաթեմատիկական գիտելիքներ**

5. Երեխան ունի մեծության, չափի, ձևի մասին գիտելիքներ, ճանաչում է գույները:
6. Երեխան ցուցաբերում է հաշվի, թվերի, թվանշանների իմացություն:

**Ուշադրություն, հիշողություն**

7. Երեխան դրսևորում է ուշադրության կենտրոնացում և պահպանում:
8. Երեխան մտապահում և վերարտադրում է որոշակի ինֆորմացիա:

**Երևակայություն և ստեղծագործական մտածողություն**

9. Երեխան դրսևորում է տարբեր նյութերի հետ աշխատելու տարրական հմտություններ:

10. Երեխան շարժումների, երաժշտության և պարի միջոցով արտահայտում է իր մտքերը, պատկերացումները, զգացմունքները:

**Կողմնորոշում տարածության և ժամանակի մեջ**

11. Երեխան ունի գիտելիքներ և իմացություն տարածության մեջ առարկաների դիրքի վերաբերյալ և կարողանում է կողմնորոշվել տարածության մեջ:
12. Երեխան կարողանում է կողմնորոշվել ժամանակի մեջ:

**Սոցիալ-մշակութային և կենցաղային կողմնորոշում**

13. Երեխան ունի գիտելիքներ (տեղեկացված է) իր անձի, սոցիալական դերերի, հարաբերությունների մասին:
14. Երեխան ունի գիտելիքներ շրջապատող միջավայրի և բնության վերաբերյալ:
15. Երեխան ճանաչում և կարողանում է կատարել մանկական բանաստեղծություններ, երգերի քառյակներ:
16. Երեխան գիտի իր ազգային մշակույթը:

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ՀՈՒԶԱԿԱՆ ԵՎ ԱՆՁՆԱՅԻՆ ՈԼՈՐՏ

**Սոցիալական զարգացում**

**Փոխհարաբերություններ մեծահասակների հետ**

1. Երեխան սկսում է շփվել ծանոթ մեծահասակների հետ և հաստատում է վստահության վրա հիմնված հարաբերություններ:

**Փոխհարաբերություններ հասակակիցների հետ**

2. Երեխան սկսում է շփվել իր հասակակիցների հետ:
3. Երեխան մասնակցում է խմբային գործունեությանը:
4. Երեխան լուծում է հասակակիցների հետ առաջացած վեճերը մեծահասակի օգնությամբ:

**Սոցիալական վարք**

5. Երեխան սկսում է համագործակցել հասակակիցների հետ:
6. Երեխան սկսում է ցուցաբերել ինքնակառավարման հմտություններ:

**Անձնային զարգացում**

7. Երեխան սկսում է ցուցաբերել իր անձի և ուրիշների մասին իմացություն:
8. Երեխան սկսում է դրսևորել ինքնավստահություն:
9. Երեխան սկսում է դրսևորել ինքնուրույնություն:

**Հուզական զարգացում**

10. Երեխան սկսում է ճանաչել հիմնական հույզերն ու զգացմունքները և իրավիճակին համապատասխան հույզեր դրսևորել:

## ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՄԱՆ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

**Ինքնասպասարկում**

1. Երեխան սկսում է դրսևորել առօրյա կյանքի ինքնասպասարկման հմտություններ:

**Առողջության պահպանում**

2. Երեխան հետևում և պահպանում է անձնական հիգիենայի որոշ կանոններ:
3. Երեխան սկսում է հասկանալ սնվելու և ատամները առողջ պահելու միջև գործող կապը:
4. Երեխան հետևում է առողջապահության հիմնական կանոններին մեծահասակի հիշեցումով:
5. Երեխան գիտակցում և արտահայտում է իր վերաբերմունքը սեփական անձի հետ կապված առողջապահական խնդիրների նկատմամբ:

**Անվտանգություն**

6. Երեխան հետևում է անվտանգության հիմնական կանոններին մեծահասակի հիշեցումով:

## ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ ՈԼՈՐՏ

**Հետաքրքրասիրություն**

1. Երեխան հետաքրքրասիրություն է ցուցաբերում նոր բաներ սովորելու և նոր փորձառությունների նկատմամբ:

**Նախաձեռնություն**

2. Երեխան նախաձեռնություն է ցուցաբերում:

**Մասնակցություն և հետևողականություն**

3. Երեխան մասնակցություն և հետևողականություն է ցուցաբերում իր տարիքին համապատասխան առաջադրանքների նկատմամբ:

## ՄԻՋԻՆ ԽՄԲԻ՝ ՉՈՐՍԻՑ ՄԻՆՉԵՎ ՀԻՆԳ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ

### ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ՈԼՈՐՏ

**Խոշոր շարժողական**

1. Երեխան դրսևորում է խոշոր շարժումներով պայմանավորված հիմնական հմտությունները՝ ցուցաբերելով հավասարակշռության, կոորդինացիայի զարգացող ունակություններ կանգնելու, քայլելու, վազքի, ցատկելու, մագլցելու, աստիճաններով իջնելու և բարձրանալու ժամանակ:
2. Երեխան մասնակցում է գնդակով տարբեր խաղերի:

**Նուրբ (մանր) շարժումներ**

1. Երեխան ցուցաբերում է ձեռքի և մատների շարժումների կառավարման հմտություններ:
2. Երեխան ցուցաբերում է գրի պարզագույն հմտություններ և նկարչական հմտություններ:
3. Ցուցաբերում է ծեփելու հմտություններ:
4. Երեխան ցուցաբերում է մկրատով կտրտելու հմտություններ:
5. Երեխան ցուցաբերում է ինքնասպասարկման որոշ հմտություններ:

### ԽՈՍՔԻ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՈԼՈՐՏ

**Բանավոր խոսք**

**Խոսքի ընկալում և օգտագործում**

1. Երեխան ընկալում է իրեն ուղղված ուրիշի բանավոր խոսքը:
2. Երեխան բանավոր արտահայտում է իր մտքերն ու կարծիքը,զգացողություններն ու զգացմունքները:

**Խոսքի հնչյունաբանական և քերականական իմացություն**

3.Երեխան ճանաչում է մայրենի լեզվի հնչյունները և կարողանում է տարանջատել դրանք:

4. Երեխան կազմում է բարդ նախադասություններ:

5.Երեխան ճիշտ օգտագործում է խոսքի տարբեր մասեր:

**Հաղորդակցում**

6. Երեխան արդյունավետ հաղորդակցվում է մեծահասակների,հասակակիցների և փոքրերի հետ:

**Գրավոր խոսք**

**Հետաքրքրություն գրքերի և գրավոր խոսքի նկատմամբ**

7.Երեխան արդյունավետ հաղորդակցվում է մեծահասակների և փոքրերի հետ:

**Հետաքրքրություն վաղ գրաճանաչության նկատմամբ**

8.Երեխան հասկանում է գրավոր խոսքի հիմնական սկզբունքները

### ԻՄԱՑԱԿԱՆ ՈԼՈՐՏ

**Մտածողություն և տրամաբանություն**

1. Երեխան համեմատում, հետազոտում է առարկաները և երևույթները:
2. Երեխան գտնում է տարբեր խնդիների լուծումներ:
3. Երեխան հասկանում է իրադարձությունների հաջորդականությունը և պարզ պատճառահետևանքային կապերը:
4. Երեխան կարողանում է ընդհանրացումներ կատարել:
5. Երեխան կարողանում է դասակարգել (տեսակավորել) առարկաները:

**Տարրական մաթեմատիկական գիտելիքներ**

6. Երեխան ցուցաբերում է հաշվի, թվերի, քանակի իմացություն:
7. Երեխան ունի մեծության, չափի, ձևի մասին գիտելիքներ:
8. Երեխան գիտի, ճանաչում է գույները:

**Կողմնորոշում տարածության և ժամանակի մեջ**

9. Երեխան ունի գիտելիքներ և իմացություն տարածության մեջ առարկաների դիրքի վերաբերյալ և կարողանում է կողմնորոշվել տարածության մեջ:
10. Երեխան կողմնորոշվում է ժամանակի մեջ:

**Ուշադրություն, հիշողություն**

11. Երեխան դրսևորում է ուշադրության տեղափոխելիություն, կենտրոնացում և պահպանում:
12. Երեխան մտապահում և վերարտադրում է որոշակի ինֆորմացիա:

**Երևակայություն և ստեղծագործական մտածողություն**

13. Երեխան փորձում է աշխատել տարբեր նյութերով:
14. Երեխան սկսում է հասկանալ և գնահատել արվեստը:
15. Երեխան արվեստի միջոցով արտահայտում է սեփական գիտելիքները, մտքերը և զգացմունքները:

**Սոցիալ-մշակութային և կենցաղային կողմնորոշում**

16. Երեխան ունի գիտելիքներ (տեղեկացվածություն) իր անձի, սոցիալական դերերի, հարաբերությունների մասին:
17. Երեխան ունի գիտելիքներ շրջապատող միջավայրի և բնության վերաբերյալ:
18. Երեխան հասկանում է շրջապատող աշխարհի և բնության երևույթների միասնականությունը և փոխկապակցվածությունը:
19. Երեխան ճանաչում և կատարում է մանկական ստեղծագործություններ:
20. Երեխան գիտի իր ազգային մշակույթը:

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ՀՈՒԶԱԿԱՆ ԵՎ ԱՆՁՆԱՅԻՆ ՈԼՈՐՏ

**Սոցիալական զարգացում**

**Փոխհարաբերություններ մեծահասակների հետ**

1. Երեխան հեշտությամբ շփվում է ծանոթ մեծահասակների հետ:
2. Երեխան ենթարկվում է մեծահասակների հետ շփման ընդունված նորմերին:

**Փոխհարաբերություններ հասակակիցների հետ**

3. Երեխան հեշտությամբ շփվում է իր հասակակիցների հետ:
4. Երեխան մասնակցում է խմբային աշխատանքների և խաղերի:

**Սոցիալական վարք**

5. Երեխան համագործակցում է հասակակիցների հետ:
6. Երեխան բանակցում է իր հասակակիցների հետ մեծահասակի օգնությամբ:
7. Երեխան ցուցաբերում է ինքնակառավարման հմտություններ:
8. Երեխան ցուցաբերում է իր տարիքին համապատասխան բարեկիրթ վարքագիծ մեծահասակների և հասակակիցների նկատմամբ:

**Անձնային զարգացում**

9. Երեխան ցուցաբերում է իր անձի և ուրիշների մասին իմացություն:
10. Երեխան դրսևորում է ինքնավստահություն:

11. Երեխան դրսևորում է ինքնուրույնություն մեծահասակի քաջալերանքով:

**Հուզական զարգացում**

12. Երեխան ճանաչում է հիմնական հույզերն ու զգացմունքները և իրավիճակին համապատասխան հույզեր է դրսևորում:
13. Երեխան դրսևորում է իրավիճակին համապատասխան հույզեր:

## ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՄԱՆ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

**Ինքնասպասարկում**

1. Երեխան դրսևորում է առօրյա կյանքի ինքնասպասարկման որոշ հմտություններ:

**Առողջության պահպանում**

2. Երեխան հետևում է անձնական հիգիենայի կանոններին:
3. Երեխան հետևում է առողջության պահպանման հիմնական կանոններին հազվադեպ հիշեցումով:
4. Երեխան գիտակցում է սնվելու և ատամները առողջ պահելու միջև գործող կապը:

**Անվտանգություն**

5. Երեխան հասկանում է անվտանգության հիմնական կանոնները և հազվադեպ հիշեցումով հետևում է դրանց:

## ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ ՈԼՈՐՏ

**Հետաքրքրասիրություն**

1. Երեխան հետաքրքրասիրություն է ցուցաբերում նոր բաներ սովորելու և նոր փորձառությունների նկատմամբ:

**Նախաձեռնություն**

2. Երեխան նախաձեռնություն է ցուցաբերում:

**Մասնակցություն և հետևողականություն**

3. Երեխան մասնակցում է և հետևողականություն է ցուցաբերում իր տարիքին համապատասխան առաջադրանքների կատարման հարցում:

## ԱՎԱԳ ԽՄԲԻ՝ ՀԻՆԳԻՑ ՄԻՆՉԵՎ ՎԵՑ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ

## ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ՈԼՈՐՏ

**Խոշոր շարժողական ոլորտ**

1. Երեխան քայլելիս, վազելիս, սողանցելիս, չորեքթաթ շարժվելիս, ցատկելիս կամ մագլցելիս դրսևորում է կոորդինացիայի, հավասարակշռության և վերահսկողության աճ:
2. Երեխան գնդակին հարվածելու, գնդակը բռնելու, նետելու ժամանակ դրսևորում է շարժումների կոորդինացիոն կարողությունների աճ:

**Մանր (նուրբ) շարժողական ոլորտ**

3. Երեխան կառուցողական մանր առարկաներից կառուցում է շինություններ:
4. Երեխան ցուցաբերում է գրի տարրական հմտություններ:
5. Երեխան ցուցաբերում է նկարչական հմտություններ:
6. Երեխան ցուցաբերում է ծեփելու հմտություններ:
7. Երեխան ցուցաբերում է մկրատով կտրատելու հմտություններ:
8. Երեխան ցուցաբերում է ձեռքի մատների շարժումների կատարելագործված հմտություններ:

## ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

**Ինքնասպասարկում**

1. Երեխան դրսևորում է առօրյա կյանքի ինքնասպասարկման հմտություններ:
**Անվտանգություն**
2. Երեխան զարգացնում է առողջության և կյանքի համար հնարավոր վտանգավոր գործոնների վերաբերյալ իր գիտելիքները:

## ՀՈՒԶԱԿԱՆ, ԱՆՁՆԱՅԻՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

**Սոցիալական զարգացում.փոխհարաբերություններ մեծահասակների հետ**
1. Երեխան իրեն շրջապատող մեծահասակների հետ կարողանում է կառուցել փոխադարձ վստահության և հարգալից վերաբերմունքի վրա հիմնված հարաբերություններ:
2.Երեխան անհրաժեշտության դեպքում դիմում է մեծահասակների օգնությանը
**Փոխհարաբերություններ հասակակիցների հետ**
3. Երեխան իր հասակակիցների հետ համագործակցային հարաբերություններ հաստատելու փորձեր է կատարում:
4.Երեխան համագործակցում է հասակակիցների հետ:
5. Երեխան կարողանում է բանակցել իր հասակակիցների հետ:
**Մասնակցություն և հետևողականություն**
6. Երեխան մասնակցություն և հետևողականություն է ցուցաբերում իր տարիքին համապատասխան առաջադրանքների նկատմամբ:
**Սոցիալական վարք**
7. Երեխան իր վարքի և դրա ազդեցության վերաբերյալ իմացություն է ցուցաբերում:
8. Երեխան տարբեր իրավիճակներում ցուցաբերում է համապատասխան վարք:
9. Երեխան մեծահասակների և հասակակիցների նկատմամբ ցուցաբերում է իր տարիքին համապատասխան բարեկիրթ վարքագիծ:

**Անձնային զարգացում**
**«Ես-ի կոնցեպցիան»**
10. Երեխան ցուցաբերում է իր /սեփական/ անձի մասին իմացություն:
11. Երեխան վերահսկում է իր զգացմունքները և հույզերը:
12. Երեխան ցուցաբերում է անձնական պատասխանատվություն:
13. Երեխան դրսևորում է ինքնագնահատման տարրական հմտություններ:
**Հուզական զարգացում**
14. Երեխան ճանաչում է հիմնական հույզերը և զգացմունքները, դրսևորում է իրավիճակին համապատասխան հույզեր:

## ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ

**Հետաքրքրասիրություն**
1. Երեխան հետաքրքրություն է ցուցաբերում նոր բաներ սովորելու և նոր փորձառությունների նկատմամբ:
**Նախաձեռնություն**
2. Երեխան նախաձեռնություն է ցուցաբերում:
**Մասնակցություն և հետևողականություն**
3. Երեխան մասնակցություն և հետևողականություն է ցուցաբերում իր տարիքին համապատասխան առաջադրանքների նկատմամբ:
**Ուշադրություն**
4. Երեխան դրսևորում է ուշադրության տեղափոխելիություն, կենտրոնացում և պահպանում:
**Հիշողություն**
5. Երեխան մտապահում և վերարտադրում է որոշակի ինֆորմացիա:
**Պրոբլեմների հիմնավորում և լուծում**

6. Երեխան դրսևորում է խնդրի լուծումը որոնելու ունակություն:
7. Երեխան կատարում է պարզ հիմնավորումներ:
8. Երեխան ուսումնասիրում է իրեն շրջապատող բնությունը և կենդանական աշխարհը:
9. Երեխան տեղեկություններ է հավաքում դիտարկումների, ուսումնասիրությունների և հետազոտությունների միջոցով:

## ԻՄԱՑԱԿԱՆ ՈԼՈՐՏ

**Տրամաբանություն և մտածողություն**

1. Երեխան կարողանում է համեմատել, հետազոտել երևույթները, առարկաները:
2. Երեխան գտնում է տարբեր խնդիրների լուծումներ:
3. Երեխան կարողանում է գտնել օրինաչափությունները:
4. Երեխան հասկանում է իրադարձությունների հաջորդականությունը և պարզ պատճառահետևանքային կապերը:
5. Երեխան կատարում է քննադատական վերլուծություն:

**Տարրական մաթեմատիկական գիտելիքներ**

6. Տիրապետում է համրանքի տարրական գիտելիքներին և հմտություններին:
7. Երեխան գիտելիքներ ունի մեծության, չափի և ձևի մասին:
8. Երեխան գիտելիքներ ունի տարածության մեջ առարկաների դիրքի վերաբերյալ և կարողանում է կողմնորոշվել տարածության մեջ:
9. Երեխաները կարողանում են կողմնորոշվել Ժամանակի մեջ:

**Երևակայություն և ստեղծագործական մտածողություն**

10. Երեխան դրսևորում է պատկերային մտածողություն և ստեղծագործունակություն՝ կրեատիվություն:
11. Երեխան կարողանում է երևակայությունը տարբերել իրականությունից:
12. Երեխան դրսևորում է արտահայտչականության և սիմվոլիկ մտածողության ունակություններ:

**Սոցիալ-մշակութային և կենցաղային կողմնորոշում**

13. Երեխան որոշակի գիտելիքներ և տեղեկություններ ունի սեփական անձի, իր սոցիալական դերերի, հարաբերությունների մասին:
14. Ունի գիտելիքներ շրջապատող միջավայրի և բնության մասին:
15. Ունի գիտելիքներ երաժշտական գործիքների մասին:
16. Ճանաչում և կատարում է մանկական երգեր, պարեր, գիտի ժողովրդական բանահյուսության նմուշներ, հեքիաթներ, հանելուկներ, ասացվածքներ:
17. Որոշ գիտելիքներ ունի ազգային և կրոնական ծեսերի, տոների, պետական խորհրդանիշների մասին:
18. Ունի գեղեցիկի, արվեստի մասին տարրական գեղագիտական գիտելիքներ, շրջապատող իրականության հանդեպ դրսևորում է հուզական վերաբերմունք, որոշակի գեղարվեստա-գեղագիտական կարողություններ:

## ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

**Բանավոր խոսքի ընկալում**

1. Երեխան լսածը օգտագործում է տարբեր նպատակներով:
2. Ճանաչում է լեզվական հասկացությունները, գիտի դրանց իմաստը:
3. Երեխան ունի իր տարիքին համապատասխան բառապաշար:

**Լեզու և հաղորդակցում**

4. Երեխան խոսքը օգտագործում է հաղորդակցվելու համար:

**Խոսքի քերականական և հնչյունաբանական իմացություն**

5. Երեխան դրսևորում է լեզվի տարբեր հնչյունների և քերականական հասկացությունների իմացություն:

**Հետաքրքրություն պատկերազարդ գրքերի նկատմամբ**

6. Երեխան հետաքրքրություն է ցուցաբերում գրքերի և ընթերցանության նկատմամբ:
**Վաղ գրաճանաչություն**
7. Երեխան հասկանում է տպագիր խոսքի հիմնական սկզբունքները:

## Հավելված 3․ Նախադպրոցական կրթության ծառայությունների մոնիտորինգի քարտ

**Լրացման ուղեցույց**

Քարտը լրացվում է մոնիտորների խմբի կողմից, նախապես կատարվում է աշխատանքի բաժանում՝ յուրաքանչյուր մոնիտոր կամ մոնիտորների խումբ (օրինակ, երկուսով) կարող է մեկ կամ մի քանի բաժին ստանձնել լրացման համար։

Քարտը լրացվում է մեկ կամ մի քանի անգամ մանկապարտեզ այցելելու միջոցով։ Նախապես անհրաժեշտ է պայմանավորվել տնօրինության հետ և զգուշացնել անձնակազմին, այցը կատարել մանկապարտեզի աշխատակազմին հարմար ժամանակ՝ առօրյա աշխատանքները չխոչընդոտելու նկատառումով։

Ըստ հնարավորության, տվյալները անհրաժեշտ է բացահայտել դիտարկման միջոցով։ Եթե դա հնարավոր չէ, համապատասխան հարցերն ուղղել համապատասխան աշխատակցին (օրինակ, սննդի պատրաստման հետ կապված՝ խոհարարին և խոհանոցի աշխատակիցներին, մաքրության վերաբերյալ՝ հավաքարարին, ուսումնական գործընթացի վերաբերյալ՝ մանկավարժին)։ Բացի պատասխանները ֆիքսելուց, նշումների մեջ ներառեք նաև ձեր դիտարկումները, նկատառումները, եթե առկա են՝ հակասող տվյալները։

Ըստ անհրաժեշտության օգտագործեք լրացուցիչ էջեր, էջի վրա նշելով քարտի բաժնի անվանումը, հարցի համարը, որպեսզի հետագայում հնարավոր լինի տվյալները համադրել և ամփոփել։

Քարտի լրացված մասը տրվում է խմբի համակարգողին, որը կազմակերպում է տվյալների մուտքագրումը համակարգիչ և ուղարկում «Մանկական զարգացման հիմնադրամի» ծրագրային թիմին։

**1. Համայնք**

| |
|---|
| |

**2. Մանկապարտեզ**

| |
|---|
| |

**3. Խմբերի և երեխաների քանակ**

| Խումբ | Խմբերի քանակ | Երեխաների քանակ | | Երեխաների տարիքը | | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|
| Ընդհանուր | | | | | | |
| որից՝ | | սկսած | մինչև | սկսած | մինչև | |
| Կրտսեր 1-ին | | | | | | |
| Կրտսեր 2-րդ | | | | | | |
| Միջին | | | | | | |
| Ավագ | | | | | | |
| Այլ | | | | | | |

**4. Հաստիքացուցակ**

| Պաշտոն | Դրույք | Նշումներ |
|---|---|---|
| Տնօրեն | | |
| Մեթոդիստ/ ուս.գծով տնօրենի տեղակալ | | |
| Գլխ. հաշվապահ | | |
| Հաշվետար-գանձապահ | | |
| Տնտեսվար | | |
| Հոգեբան | | |

| | | |
|---|---|---|
| Սոցիալական աշխատող | | |
| Լոգոպեդ | | |
| Գործավար | | |
| Պահեստապետ | | |
| Բուժքույր | | |
| Շեֆ խոհարար | | |
| Խոհարար | | |
| Խոհարարի օգնական | | |
| Օժանդակ բանվոր | | |
| Շենքերի, սարքավորումների սպասարկող և նորոգող բանվոր | | |
| Դերձակ | | |
| Լվացարար | | |
| Հավաքարար | | |
| Այլ (նշել) | | |
| Այլ (նշել) | | |

## 5. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների քանակ

| | Քանակ | Նշումներ |
|---|---|---|
| Ընդհանուր քանակ, որից | | |
| խոսքի խանգարումով | | |
| լսողության խանգարումով | | |
| մտավոր խնդիրներով | | |
| Այլ | | |
| Այլ | | |

## 6. Զարգացման պայմանների առկայություն

| Պայման | √ | Նշումներ |
|---|---|---|
| 1) սարքավորումներ և դիդակտիկ միջոցներ երեխաների համակողմանի զարգացման համար. | | |
| 2) տեսալսողական միջոցներ (ձայնագրիչ, հեռուստացույց). | | |
| 3) ալբոմներ, գեղարվեստական գրականություն և այլ նյութեր երեխաների տպավորությունները հարստացնելու համար. | | |
| 4) պայմաններ մարդու, պատմության, մշակույթի մասին երեխաների պատկերացումների զարգացման համար. խմբասենյակում առկա են դիդակտիկ խաղեր (լոտո, նկարների հավաքածուներ), տարբեր սյուժետային խաղային հավաքածուներ, լեգոներ և խաղալիքներ՝ տարաբնույթ գործունեության ժամանակ երեխաների զարգացման համար. | | |
| 5) խաղեր երեխաների ինտելեկտուալ զարգացման համար (դոմինո, շաշկի, շախմատ և այլն). | | |
| 6) խաղալիքներ և սարքավորումներ սենսորային զարգացման համար. | | |
| 7) դիտողական, նկարազարդ նյութեր. | | |

| | | |
|---|---|---|
| 8) պայմաններ երեխաների անհատական և համատեղ ակտիվության դրսևորման համար. | | |
| 9) պայմաններ երեխաների առողջության պահպանման և ամրապնդման համար (կոփիչ միջոցներ, հիգիենայի միջոցներ). | | |
| 10) բժշկական սարքավորումներ երեխաների բուժկանխարգելիչ միջոցառումների համար. | | |
| 11) հատուկ տարածքներ երեխաների հետ տարվող շտկողական աշխատանքների համար (հոգեբանի, լոգոպեդի, այլ հատուկ մանկավարժի համար). | | |
| 12) պայմաններ երեխաների գեղարվեստագեղագիտական զարգացման համար. | | |
| 13) հատուկ սարքավորումներ գեղարվեստական ստուդիայի համար. | | |
| 14) տարածքի գեղագիտական ձևավորումներ՝ ուղղված երեխաների գեղարվեստական զարգացմանը (նկարներ, վերատպություններ, ժողովրդական ստեղծագործության նմուշներ, երեխաների, մեծերի աշխատանքների ցուցահանդեսներ և այլն). | | |
| 16) պայմաններ երեխաների թատերական գործունեության զարգացման համար. | | |
| 17) օժանդակ հարմարություններ թատերական գործունեության կազմակերպման համար. | | |
| 18) թատրոնների տարաբնույթ տեսակներ (ստվերային, ստվարաթղթային, սեղանային և այլն). | | |
| 19) թատերական բեմականացումների համար ատրիբուտներ. | | |
| 20) պայմաններ երեխաների երաժշտական գործունեության զարգացման համար. | | |
| 21) երաժշտական դահլիճ. | | |
| 22) երաժշտական գործիքներ. | | |
| 23) մանկական երաժշտական գործիքներ. | | |
| 24) երաժշտադիդակտիկ խաղեր և պիտույքներ. | | |
| 25) երաժշտական անկյուններ. | | |
| 27) երաժշտական միջավայր (երաժշտությունն ուղեկցվում է պարապմունքների, ռեժիմային պահերի ժամանակ). | | |
| 28) պայմաններ երեխաների կոնստրուկտիվ (կառուցողական) գործունեության զարգացման համար. | | |
| 29) մանր (սեղանային) և խոշոր (հատակի) կառուցողական նյութեր. | | |
| 30) տարբեր տիպի կոնստրուկտորներ՝ փայտե, մետաղական, պլաստմասսայի դետալների տարբեր միացումներով. | | |
| 31) մոզաիկաներ, թանգրամներ, կտրվածքներով նկարներ. | | |
| 32) բնական նյութեր գեղարվեստական կառուցումների համար. | | |
| 33) պայմաններ երեխաների էկոլոգիական կուլտուրայի զարգացման համար. | | |

| | | |
|---|---|---|
| 34) դիտողական պիտույքներ, պատկերազարդ նյութեր երեխաների էկոլոգիական կուլտուրայի զարգացման համար. | | |
| 35) կանաչապատման անկյուններ (սենյակային բույսեր). | | |
| 36) կենդանիներ, թռչուններ, ձկներ, կրիա և այլն. | | |
| 37) պայմաններ բույսերի խնամքի և աճեցման համար (այգի, բանջարանոց, ծաղկանոց և այլն). | | |
| 38) առանձին տարածք կենդանի բնության համար (ձմեռային այգի, կենդանական անկյուն և այլն). | | |
| 39) հողամասում՝ էկոլոգիական արահետ. | | |
| 40) պայմաններ մարդու, պատմության, մշակույթի մասին երեխաների պատկերացումների զարգացման համար. | | |
| 41) անկյուն պետական խորհրդանիշների համար (դրոշ, զինանշան, օրհներգ). | | |
| 42) ազգային, ժողովրդական կենցաղի առարկաների նմուշներ. | | |
| 43) ազգային և այլազգի տարազներով տիկնիկներ. | | |
| 44) գեղարվեստական համապատասխան գրականություն. | | |
| 45) սեղանային տպագիր և դիդակտիկ խաղեր և խաղալիքներ, որոնք ծանոթացնում են երթևեկության կանոններին. | | |
| 46) պայմաններ երեխաների ֆիզիկական զարգացման համար. | | |
| 47) մարզադահլիճ, դեկորատիվ կամ իսկական լողավազան. | | |
| 48) երեխաների ֆիզիկական ակտիվության համար անհրաժեշտ սարքավորումներ, մարզական գույք. | | |
| 49) բակում և տարածքում՝ պայմաններ երեխաների ֆիզիկական զարգացման համար. | | |
| 50) պայմաններ երեխաների մաթեմատիկական պատկերացումների ձևավորման համար. | | |
| 51) ցուցադրական և բաշխիչ նյութեր հաշվի, քանակի, առարկաների մեծության և ձևերի վերաբերյալ երեխաների պատկերացումների զարգացման համար. | | |
| 52) նյութեր և սարքավորումներ՝ թվի, մեծության մասին երեխաների պատկերացումների ձևավորման համար (թվանշաններ, կշեռքներ, չափման միավորներ և այլն). | | |
| 53) նյութեր երեխաների տարածական և ժամանակային պատկերացումների զարգացման համար (գրատախտակ, օրացույց, ժամացույց. ավազի, արևային ժամացույց և այլն). | | |
| 54) համակարգչի առկայություն՝ համակարգչային խաղերով. | | |
| 55) նյութեր և սարքավորումներ երեխաների փորձարարական աշխատանքների ցուցադրման համար (գլոբուս, քարտեզ, մակետներ, նկարների հավաքածուներ, մագնիս, սեղանային տպագիր խաղեր և այլն). | | |
| 56) պայմաններ երեխաների խոսքի զարգացման համար. | | |
| 57) մանկական գրադարան. | | |

| | | |
|---|---|---|
| 58) առանձին տարածքներ օտար լեզուների ուսուցման համար. | | |
| 59) ծրագրամեթոդական գրականության անկյուն աշխատողների և ծնողների համար. | | |
| 60) նկարների հավաքածուներ և սեղանային տպագիր խաղեր խոսքի զարգացման ուղղությամբ. | | |
| 61) առանձին տարածք խաղերի համար. | | |
| 62) բակում, հողամասում՝ խաղային սարքավորումներ. | | |
| 63) խաղեր և խաղալիքներ տարբեր տեսակի խաղերի համար. սյուժետադերային, շարժուն, մարզական, դիդակտիկ և այլն. | | |
| 64) նյութեր, որոնք կարող են հիմք ծառայել՝ որպես փոխարինիչ առարկաներ օգտագործելու համար: | | |

### 7. Ֆիզիկական միջավայրի դիտարկում

| | Նշումներ |
|---|---|
| 1) Խմբասենյակներում երեխաների համար անվտանգ պայմանների ապահովում | |
| 2) Պարագաների մատչելիություն և հասանելիություն երեխաների համար (չափերին համապատասխանություն, օգտագործման հասանելիություն և այլն) | |
| 3) Խմբասենյակների հարմարավետություն, տարածքի համապատասխանություն երեխաների քանակին և շարժունակության պահանջներին | |
| 4) Ննջասենյակի հարմարավետություն, մահճակալների համապատասխանություն երեխաների քանակին | |

### 8. Լուսավորություն, ջրամատակարարում, ջեռուցում

ա) Բնական լուսավորություն

| | Առկա է | Նշումներ |
|---|---|---|
| 1) Խմբասենյակներում | | |
| 2) Ննջարաններում | | |
| 3) Բժշկական սենյակում | | |
| 4) Մեկուսարանում | | |
| 5) Հիվանդասենյակում | | |
| 6) Դահլիճներում | | |
| 7) Սանհանգույցներում | | |
| 8) Ընդունարանում | | |
| 9) Հանդերձարանում | | |

| | | |
|---|---|---|
| 10) Խոհանոցում | | |

բ) Տաք ջրամատակարարում

| | Առկա է | Նշումներ |
|---|---|---|
| 1) Սանհանգույցներում | | |
| 2) Խոհանոցում | | |
| 3) Լվացքատանը | | |

գ) Ջեռուցում

| | Օգտագործվում է | Նկարագիր |
|---|---|---|
| 1) Կենտրոնացված ջեռուցման համակարգ | | |
| 2) Փայտի վառարան | | |
| 3) Էլեկտրական վառարան | | |
| 4) Կոնվեկտոր | | |
| 5) Այլ (նշել) | | |

**9. Մաքրություն**

Հատակի, կահույքի, առարկաների սրբելու/լվանալու հաճախականությունը և միջոցները

| Տարածք/առարկա | Երբ | Ինչպես |
|---|---|---|
| 1) Խմբասենյակների հատակը | | |
| 2) Պարապմունքների սենյակների հատակը | | |
| 3) Դահլիճի հատակը | | |
| 4) Խմբասենյակների կահույքը | | |
| 5) Պատուհանի գոգերը | | |
| 6) Ջեռուցիչները | | |
| 7) Լուսատուները | | |
| 8) Դռները և պատուհանները | | |
| 9) Մանկական զգեստապահարանները | | |
| 10) Խաղալիքները | | |
| 11) Անկողնային սպիտակեղենը | | |
| 12) Սրբիչները | | |
| 13) Զուգարանների հատակը, նստակոնքերը | | |
| 14) Խմբասենյակների սեղանները | | |
| 15) Խմբասենյակների աթոռները | | |

## 10. Օդափոխություն և զբոսանք

ա) Խմբասենյակների օդափոխությունը

| | Հաճախականություն | Նշումներ |
|---|---|---|
| 1) Տաք եղանակին | | |
| 2) Ցուրտ եղանակին | | |

բ) Պարապմունքների սենյակի/դահլիճի օդափոխությունը

| | Հաճախականություն | Նշումներ |
|---|---|---|
| 1) Տաք եղանակին | | |
| 2) Ցուրտ եղանակին | | |

գ) Զբոսանք մաքուր օդում

| | Հաճախականություն | Նշումներ |
|---|---|---|
| 1) Տաք եղանակին | | |
| 2) Ցուրտ եղանակին | | |

## 11. Սննդի պատրաստում

| | Նկարագիր |
|---|---|
| 1) Սննդամթերքի առանձնացում | |
| 2) Սեղանների մակնշում | |
| 3) Դանակների մակնշում | |
| 4) Օգտագործվող սարքավորումները (ջեռոց, սառնարան, մսաղաց) | |
| 5) Արգելված մթերքները | |
| 6) Մենյուի կրկնման պարբերականությունը | |
| 7) Տվյալ օրվա համար նախատեսվող սննդամթերքի ցուցակի փակցնում | |
| 8) Սննդամթերքի մատուցումից առաջ իրականացվող ընթացակարգերը | |

12. **Ուսուցում և զարգացում**

ա) Ուսումնական պարապմունքների քանակը և հաճախականությունը

| Խումբ | Շաբաթական պարապմունքների քանակը | Մեկ պարապմունքի միջին տևողությունը | Առարկաների ցանկ |
|---|---|---|---|
| 1) Կրտսեր խումբ | | | |
| 2) Միջին խումբ | | | |
| 3) Ավագ խումբ | | | |

բ) Կրթական գործընթացի ցուցանիշները

| Ցուցանիշ | Նկարագիր |
|---|---|
| 1) Ժամատախտակի առկայություն | |
| 2) Պարապմունքների միջև եղած ընդմիջումները | |
| 3) Պարապմունքների ընթացքում անցկացվող մարմնամարզական վարժություն | |
| 4) Պարապմունքների ժամատախտակի կազմման ընթացքում հաշվի առնվող գործոնները | |
| 5) Կրթական ծրագրերի սկզբունքները | |
| 6) Առանձին պարապմունքներ հատուկ կարիքներ ունեցող երեխաների հետ (մասնագետների կողմից) | |
| 7) Դաստիարակների և մասնագետների վերապատրաստումներ հատուկ կարիքներ ունեցող երեխաների հետ աշխատելու համար | |

գ) Զարգացման ու կրթական չափորոշիչների ներառումը

| Չափորոշիչ | Նկարագիր՝ ինչպես է ներառվում կրթական ծրագրում |
|---|---|
| 1) Շարժողական զարգացում | |
| 2) Մտածողություն և տրամաբանություն | |
| 3) Տարրական մաթեմատիկական պատկերացումներ և գիտելիքներ | |
| 4) Ուշադրություն և հիշողություն | |
| 5) Երևակայություն և ստեղծագործական մտածողություն | |

| | |
|---|---|
| 6) Կողմնորոշում տարածության և ժամանակի մեջ | |
| 7) Սոցիալ-մշակութային և կենցաղային կողմնորոշում | |
| 8) Բանավոր խոսք | |
| 9) Հետաքրքրություն գրքերի, գրաճանաչության նկատմամբ | |
| 10) Սոցիալական, հուզական, անձնային զարգացում | |
| 11) Ինքնասպասարկման հմտություններ | |
| 12) Առողջության ու անվտանգության պահպանման հմտություններ | |
| 13) Սովորելու հանդեպ հետաքրքրասիրություն և նախաձեռնություն, ուսումնական գործընթացին մասնակցություն | |

*Կցել ուսումնական պարապմունքների ժամատախտակի օրինակ:*

**Մոնիտորների ցանկ**

| Բաժին | Անուն, ազգանուն | Լրացման ամսաթիվ |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |

Խմբի համակարգողի անուն, ազգանուն՝

Խմբի համակարգողի հեռախոսահամար՝

## Հավելված 4. Փորձագիտական հարցազրույցների մասնակիցների ցանկ

1. Իռեն Սարգսյան, Սեյվ դը չիլդրեն, ծրագրի համակարգող,
2. Անուշ Շահվերդյան, Համաշխարհային բանկ, կրթության փորձագետ,
3. Ասյա Հովհաննիսյան, ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտ, մանկավարժական կադրերի վերապատրաստման և ատեստավորման բաժնի մասնագետ,
4. Ռուզաննա Ծառուկյան, «Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամի տնօրեն,
5. Կարինե Թորոսյան, ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտ, նախադպրոցական և տարրական կրթության բաժնի վարիչ,
6. Անահիտ Մխիթարյան, Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության առաջատար մասնագետ,
7. Մանյա Գաբրիելյան, Արտաշատի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի պետ։

## Հավելված 5․Փորձագիտական հարցազրույցների հարցաշար

*Մանկական զարգացման հիմնադրամը ս.թ. հունվարից իրականացնում է «Մասնակցային գործընթացը կրթության հիմքերում» ծրագիրը: Ծրագիրն ուղղված է Արարատի և Վայոց Ձորի մարզերի վեց համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) վերահսկողության և կառավարման ներքո գտնվող 12 նախադպրոցական հաստատություններում մասնակցային մշտադիտարկման իրականացմանը և հաշվետվողականության մեխանիզմի ներդրմանը: Ծրագրի հիմնական բաղադրիչներից է նախադպրոցական հաստատությունների մշտադիտարկումը թիրախ համայնքներում՝ համայնքային բնակչության մասնակցությամբ:*

*Տվյալ հարցազրույցի նպատակն է հավաքագրել փորձագիտական կարծիքները, մտահոգություններն ու առաջարկները նախադպրոցական հաստատությունների ծառայությունների վերաբերյալ: Ստացած տվյալները զեկույցում ներառվելու են ամփոփ ձևով, իսկ ձեր անունը կնշվի հավելվածում՝ հարցված փորձագետների ցանկում: Ձայնագրությունը կօգտագործվի հնչեցված գաղափարները և կարծիքները ճիշտ վերարտադրելու համար:*

1. Ինչպե՞ս կգնահատեք ներկայումս Հայաստանում նախադպրոցական կրթության վիճակը: Արդյո՞ք կա բավարար օրենսդրական կարգավորում: Արդյո՞ք առկա նյութական բազան, ֆինանսական և մարդկային ռեսուրսները ապահովում են ծառայությունների անհրաժեշտ որակը: *(ՏԻՄ և մարզպետարան համար)* Մասնավորապես, ինչպիսի՞ն է իրավիճակը ձեր համայնքի/մարզի մանկապարտեզներում:

*Հետագա հարցերում ՏԻՄ և մարզպետարանի ներկայացուցիչների հետ հարցազրույցի դեպքում նշել՝ձեր համայնքի/մարզի մանկապարտեզներում:*

2. Կա՞ն արդյոք որոշակի չափորոշիչներ կամ սահմանափակումներ՝ երեխաներին մանկապարտեզ ընդունելու համար: Հատուկ կարիքներ ունեցող երեխաները հնարավորություն ունե՞ն ընդունվելու:
3. Ի՞նչ մոտեցումներ են կիրառվում այսօր մանկապարտեզներում՝ երեխայի կրթական ու զարգացման անհատական կարիքները բացահայտելու և հասցեագրելու համար: Ի՞նչ խնդիրներ են առաջանում այս առնչությամբ և ինչպե՞ս են դրանք լուծվում:
4. (*Մեթոդական մասնագետների համար)* Որքանո՞վ են արդյոք ներառված նախադպրոցական կրթության բովանդակության մեջ հետևյալ բաղադրիչները, ըստ Ձեզ՝
   - շարժողական զարգացում,
   - մտածողություն և տրամաբանություն,
   - տարրական մաթեմատիկական պատկերացումներ և գիտելիքներ,
   - ուշադրություն և հիշողություն,
   - երևակայություն և ստեղծագործական մտածողություն,
   - կողմնորոշում տարածության և ժամանակի մեջ,
   - սոցիալ-մշակութային և կենցաղային կողմնորոշում,
   - բանավոր խոսք, հետաքրքրություն գրքերի նկատմամբ,
   - սոցիալական, հուզական, անձնային զարգացում,
   - ինքնասպասարկման, առողջության ու անվտանգության պահպանման հմտություններ,
   - սովորելու հանդեպ հետաքրքրասիրություն, նախաձեռնություն, մասնակցություն ուսումնական գործընթացին:

5. Ինչպիսի՞ն են մանկապարտեզի հարաբերությունները ծնողների հետ: Արդյոք կազմակերպվու՞մ են հանդիպումներ ծնողների և դաստիարակների մասնակցությամբ: Ծնողները մասնակցություն ցուցաբերու՞մ են մանկապարտեզի միջոցառումներին, խնդիրներին կամ առօրյային:

6. Ինչպե՞ս են մանկապարտեզները աջակցում այն երեխաներին, որոնց մոտ հայտնաբերվել է որևէ հոգեբանական կամ զարգացման խնդիր: Արդյոք մանկապարտեզները պատրա՞ստ են ներառական կրթության ծառայություններ մատուցել: Ինչու՞ եք այդպես կարծում:
7. Ի՞նչ է անհրաժեշտ, որ մանկապարտեզները ապահովեն որակյալ ծառայություններ և ունենան երեխայի զարգացման ու կրթության անհրաժեշտ նախադրյալները: Իսկ ի՞նչ է անհրաժեշտ փոխել նախադպրոցական կրթության օրենսդրական կարգավորման ոլորտում:

## Հավելված 6. Ծնողների ֆոկուս-խմբային քննարկման հարցաշար

Մանկական զարգացման հիմնադրամը ս.թ. հունվարից իրականացնում է «Մասնակցային գործընթացը կրթության հիմքերում» ծրագիրը: Ծրագիրն ուղղված է Արարատի և Վայոց Ձորի մարզերի վեց համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) վերահսկողության և կառավարման ներքո գտնվող 12 նախադպրոցական հաստատություններում մասնակցային մշտադիտարկման իրականացմանը և հաշվետվողականության մեխանիզմի ներդրմանը:

Ծրագրի հիմնական բաղադրիչներից է նախադպրոցական հաստատությունների մշտադիտարկումը թիրախ համայնքներում՝ համայնքային բնակչության մասնակցությամբ

Տվյալ քննարկման նպատակն է բացահայտել ծնողների կարծիքները, մտահոգություններն ու առաջարկները նախադպրոցական հաստատությունների ծառայությունների վերաբերյալ: Խնդրում ենք ակտիվ մասնակցել քննարկմանը: Հիշեք, որ չկան ճիշտ ու սխալ պատասխաններ, և բոլոր դիտարկումները ողջունելի են:

Քննարկման հիման վրա զեկույցում ներառվելու են միայն քննարկման ամփոփ տվյալները, անուններ չեն օգտագործվելու: Ձայնագրությունը կօգտագործվի հնչեցված գաղափարները և կարծիքները ճիշտ վերարտադրելու և առաջարկներ պատրաստելու համար:

1. Եկեք ծանոթանանք: Խնդրեմ պատմեք, քանի երեխա ունեք, տվյալ մանկապարտեզի ծառայություններից օգտվելու քանի տարվա փորձ ունեք:
2. Ի՞նչն է ձեզ առավել դուր գալիս մանկապարտեզում, որոնք են նրա առավելությունները:
3. Ի՞նչ են սովորում երեխաները մանկապարտեզում: Ուսուցման հատկապես ո՞ր բաղադրիչներն եք գնահատում: Առկա խաղալիքները, ուսումնական նյութերը համապատասխանու՞մ են երեխաների զարգացման պահանջներին: Ի՞նչ է պակասում երեխայի կրթական կարիքները լիարժեք բավարարելու համար:
4. Առկա՞ է արդյոք դրական մթնոլորտ: Ինչպե՞ս են դաստիարակները արձագանքում երեխաների սխալներին, խրախուսում նրանց ջանքերը, գաղափարները: Արդյոք դաստիարակները ունե՞ն հմտություններ՝ երեխայի անհատական կարիքներին համապատասխան մոտեցում ցուցաբերելու, ներգրավելու, օգնելու դրսևորել իրեն: Խրախուսվու՞մ է արդյոք երեխայի ինքնուրույնությունը:
5. Ի՞նչ խնդիրներ եք ունեցել մանկապարտեզում: Ինչպե՞ս եք փորձել լուծել դրանք, ու՞մ եք դիմել:
6. Եթե հնարավորություն ունենայիք, ի՞նչ կփոխեիք մանկապարտեզում:

## Հավելված 7. Հարցաթերթ ծնողների համար

Մանկական զարգացման հիմնադրամը իրականացնում է «Մասնակցային գործընթացը կրթության հիմքերում» ծրագիրը, որի հիմնական բաղադրիչներից է նախադպրոցական հաստատությունների մշտադիտարկումը թիրախ համայնքներում՝ համայնքային բնակչության մասնակցությամբ։

Տվյալ հարցման նպատակն է բացահայտել ծնողների կարծիքը նախադպրոցական հաստատությունների ծառայությունների վերաբերյալ։ Խնդրում ենք անկեղծ և լիարժեք պատասխանել հարցերին, որպեսզի կարողանանք ստանալ ոլորտի իրական պատկերը և հացեական առաջարկներ ներկայացնել համապատասխան մարմիններին։ Հարցաթերթն անանուն է, ձեր տրամադրած կարծիքները ներկայացվելու են ամփոփ ձևով։

1. Ձեր համայնքը. __________________________
2. Ձեր մանկապարտեզը (նշեք թիվը կամ անվանումը). _____________________________
3. Քանի՞ տարի եք օգտվել այս մանկապարտեզի ծառայություններից. _________
4. Ձեր երեխաներից քանի՞սն են հաճախել կամ հաճախում այս մանկապարտեզը _________
5. Ընդհանուր առմամբ որքանո՞վ եք բավարարված մանկապարտեզի ծառայություններով հետևյալ առումներով (նշեք ձեր գնահատականը յուրաքանչյուր կետի համար՝ 1-ից 5 միջակայքում, որտեղ 1-ը նշանակում է ընդհանրապես բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ)

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1) Տարածք և պայմաններ | 2 | 3 | 4 | 5 |
| 2) Սնունդ | 2 | 3 | 4 | 5 |
| 3) Մաքրություն և հիգիենա | 2 | 3 | 4 | 5 |
| 4) Երեխաների խնամք | 2 | 3 | 4 | 5 |
| 5) Կրթություն և զարգացում | 2 | 3 | 4 | 5 |

6. Խնդրում ենք գնահատել հետևյալ դատողությունները՝ ըստ դրանց հետ համաձայնության աստիճանի, համապատասխան նշում անելով վանդակներում (1-ը՝ բոլորովին համաձայն չեմ, 5-ը՝ լիովին համաձայն եմ)։ Խնդրում ենք գնահատումը կատարել յուրաքանչյուր տողի համար։

| Դատողություն | 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|---|
| 1) Մեր մանկապարտեզում առկա է դրական մթնոլորտ՝ երեխաների ներդաշնակ զարգացումն ապահովելու համար։ | | | | | |
| 2) Մեր մանկապարտեզի դաստիարակներն ունեն երեխաների անհատական զարգացման և կրթության համար անհրաժեշտ մասնագիտական հմտությունները։ | | | | | |
| 3) Մեր մանկապարտեզում բոլոր երեխաները ունեն իրենց զարգացման համար անհրաժեշտ հնարավորությունները՝ անկախ իրենց հոգեկերտվածքից, ֆիզիկական և մտավոր հնարավորություններից։ | | | | | |

7. Խնդրում ենք ներկայացնել վերոնշյալ հարցերի շուրջ ձեր մեկնաբանությունները.

______________________________________________________________________________

______________________________________________________________

8. Ձեր տարիքը. ________

9. Ձեր սեռը. 1) իգական 2) արական

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

### Հավելված 8. Չափորոշիչներին համապատասխանության ամփոփ աղյուսակ՝ ըստ ուսումնասիրված ՆԴՀ-ների

| Համայնք | Նոր Խարբերդ | Արտաշատ | | | Վայք | |
|---|---|---|---|---|---|---|
| Մանկապարտեզ | Գյուլբենկյանների անվան մանկապարտեզ | Թիվ 5 | Թիվ 7 | Թիվ 8 | Թիվ 1 | Թիվ 3 |
| **Հասանելություն** | Սահմանափակ՝ տեղերը բավարար չեն բոլոր ցանկացողներին ընդգրկելու համար, չկա մսուրային խումբ | Հիմնականում հասանելի է, չկա մսուրային խումբ | | | Սահմանափակ՝ տեղերը բավարար չեն բոլոր ցանկացողներին ընդգրկելու համար | |
| **Խմբերի խտություն** | Չի պահպանվում | Չի պահպանվում | Չի պահպանվում | Չի պահպանվում | Չի պահպանվում | Չի պահպանվում |
| **Խմբերի տարիքային կազմ** | Չի պահպանվում՝ առկա է խառը տարիքային խումբ | Պահպանվում է | Չի պահպանվում (կրտսեր խմբում ընդգրկված են 2-4 տարեկան երեխաներ) | Պահպանվում է | Պահպանվում է | Չի պահպանվում |
| **Հաստիքացուցակ** | Չկա հաշվետար-գանձապահ | Չկա հաշվետար-գանձապահ, գործավար, դերձակ, լվացարար | Չկա գործավար, դերձակ, լվացարար | Չկա հաշվետար-գանձապահ, գործավար, դերձակ, շենքերը սպասարկող և նորոգող բանվոր | Չկա մեթոդիստ | Առկա է |
| **Շենքային պայմաններ** | Տարածքը սահմանափակ է, չկա մարզադահլիճ | Առկա է | Առկա է | Առկա է | Տարածքը սահմանափակ է, չկա մարզադահլիճ, մահճակալները չեն բավարարում | Տարածքը սահմանափակ է, չկա մարզադահլիճ, խաղահրապարակ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **Բնական լուսավորություն** | Առկա է | Առկա է | Որոշ ննջարաններում և դահլիճում պատուհան չկա | Առկա է | Առկա է | Առկա է |
| **Անվտանգ ջեռուցում** | Առկա է | Առկա է | Առկա է | Առկա է | Առկա է | Առկա է |
| **Տաք ջրամատակարա-րում** | Առկա է | Չի պահպանվում՝ առկա չէ խմբասենյակների սանհանգույցներում | Չի պահպանվում՝ առկա չէ խմբասենյակների սանհանգույցներում | Չի պահպանվում՝ առկա չէ խմբասենյակների սանհանգույցներում | Առկա չէ սանհանգույցներում և լվացքատանը | Առկա չէ սանհանգույցներում և լվացքատանը |
| **Օդափոխություն և զբոսանք** | Պահպանվում է | Ցուրտ եղանակին երեխաները զբոսանքի են գնում օրական մեկ անգամ կամ ընդհանրապես չեն գնում | Ցուրտ եղանակին երեխաները զբոսանքի են գնում օրական մեկ անգամ կամ ընդհանրապես չեն գնում | Ցուրտ եղանակին երեխաները զբոսանքի են գնում օրական մեկ անգամ կամ ընդհանրապես չեն գնում | Պահպանվում է | Պահպանվում է |
| **Սպիտակեղենի և սրբիչների փոխարինում** | Պահպանվում է | Սպիտակեղենը փոխարինվում է 10 օրը մեկ՝ առավելագույնը 7 օրվա փոխարեն | Պահպանվում է | Պահպանվում է | Պահպանվում է | Պահպանվում է |
| **Մենյուի կրկնման հաճախականու-թյուն** | Պահպանվում է | Պահպանվում է | Կրկնվում է սկսած 3-4 օրից՝ նվազագույնը 7 օրվա փոխարեն | Կրկնվում է սկսած 4 օրից՝ նվազագույնը 7 օրվա փոխարեն | Կրկնվում է սկսած 5 օրից՝ նվազագույնը 7 օրվա փոխարեն | Պահպանվում է |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **Պարապմունքնե րի քանակ և տևողություն** | Չի պահպանվում ըստ ԱՆ նորմատիվների, համապատասխա նում է ԿԱԻ ծրագրին | Չի պահպանվում ըստ ԱՆ նորմատիվների, համապատասխ անում է ԿԱԻ ծրագրին | Պահպանվում է | Չի պահպանվում ըստ ԱՆ նորմատիվների, համապատասխ անում է ԿԱԻ ծրագրին | Պահպանվում է | Չի պահպանվում ըստ ԱՆ նորմատիվների, համապատասխ անում է ԿԱԻ ծրագրին |
| **Զարգացման պայմաններ** | Հիմնականում առկա են | Մեծ մասամբ առկա են | Մեծ մասամբ առկա են | Հիմնականում առկա են | Մեծ մասամբ առկա չեն | Մեծ մասամբ առկա են |
| **Հատուկ մասնագետներ** | Չկա | Համայնքում՝ լոգոպեդ | Համայնքում՝ լոգոպեդ | Հոգեբան, համայնքում՝ լոգոպեդ | Սոցիալական աշխատող | Չկա |

| Համայնք | Այնթապ | Եղեգնաձոր | | | Մալիշկա | |
|---|---|---|---|---|---|---|
| | Մսուր-մանկապարտեզ | Թիվ 1 | Թիվ 2 | Թիվ 5 | Թիվ 1 | Թիվ 2 |
| **Հասանելություն** | Սահմանափակ՝ տեղերը բավարար չեն բոլոր ցանկացողներին ընդգրկելու համար | Հիմնականում հասանելի է, չկա մսուրային խումբ | | | Հիմնականում հասանելի է, չկա մսուրային խումբ | |
| **Խմբերի խտություն** | Չի պահպանվում | Չի պահպանվում | Պահպանվում է | Պահպանվում է | Չի պահպանվում | Չի պահպանվում |
| **Խմբերի տարիքային կազմ** | Պահպանվում է | Պահպանվում է | Պահպանվում է | Առկա է խառը տարիքային խումբ | Չի պահպանվում, 3-5 տարեկան երեխաները ընդգրկված են նույն խմբում | Չի պահպանվում, 3-5 տարեկան երեխաները ընդգրկված են նույն խմբում |
| **Հաստիքացուցակ** | Առկա է | Չկա մեթոդիստ, հաշվետար-գանձապահ, տնտեսվար, գործավար, | Չկա գլխավոր հաշվապահ, տնտեսվար, գործավար | Չկա հաշվետար-գանձապահ, գործավար, խոհարարի օգնական, | Չկա հաշվետար-գանձապահ, գործավար | Չկա հաշվետար-գանձապահ, տնտեսվար, գործավար |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | խոհարարի օգնական, օժանդակ բանվոր, շենքերը սպասարկող և նորոգող բանվոր, դերձակ | | օժանդակ բանվոր, շենքերը սպասարկող և նորոգող բանվոր, տնտեսվար, դերձակ | | |
| **Շենքային պայմաններ** | Չկա մարզադահլիճ | Չկա երաժշտական դահլիճ, մարզադահլիճ, պատշաճ խաղահրապարակ, խմբասենյակների տարածքը սահմանափակ է | Շենքը վատ վիճակում է, չկա մարզադահլիճ, պատշաճ խաղահրապարակ, խմբասենյակների տարածքը սահմանափակ է | Չկա երաժշտական դահլիճ, մարզադահլիճ, պատշաճ խաղահրապարակ | Շենքը չի համապատասխանում տիպային մանկապարտեզի պահանջներին, չկա մարզադահլիճ, երաժշտական դահլիճ խաղահրապարակ, տարածքը սահմանափակ է | Չկա մարզադահլիճ, խաղահրապարակ, տարածքը սահմանափակ է |
| **Բնական լուսավորություն** | Առկա է | Առկա է | Առկա է | Առկա է | Առկա է | Առկա է |
| **Անվտանգ ջեռուցում** | Առկա է | Չի պահպանվում՝ ջեռուցումը փայտե և էլեկտրական վառարանով է | Չի պահպանվում՝ ջեռուցումը փայտե և էլեկտրական վառարանով է | Պահպանվում է | Չի պահպանվում՝ ջեռուցումը էլեկտրական վառարանով է | Պահպանվում է |
| **Տաք ջրամատակարարում** | Առկա է | Առկա չէ խմբասենյակների սանհանգույցներում | Առկա չէ խմբասենյակների սանհանգույցներում, լվացքատանը | Պահպանվում է | Պահպանվում է | Առկա չէ խոհանոցում և լվացքատանը |
| **Օդափոխություն և զբոսանք** | Պահպանվում է | Ցուրտ եղանակին երեխաները զբոսանքի են գնում օրական մեկ անգամ կամ ընդհանրապես չեն գնում | Ցուրտ եղանակին երեխաները զբոսանքի են գնում օրական մեկ անգամ կամ ընդհանրապես չեն գնում | Ցուրտ եղանակին երեխաները զբոսանքի են գնում օրական մեկ անգամ կամ ընդհանրապես չեն գնում | Տաք եղանակին երեխաները զբոսանքի են գնում օրական մեկ անգամ, իսկ ցուրտ եղանակին հիմնականում չեն գնում | Տաք եղանակին երեխաները զբոսանքի են գնում օրական մեկ անգամ, իսկ ցուրտ եղանակին հիմնականում չեն գնում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **Սպիտակեղենի և սրբիչների փոխարինում** | Հիմնականում պահպանվում է | Փոխարինվում է 10 օրը մեկ՝ առավելագույնը 7 օրվա փոխարեն | Պահպանվում է | Պահպանվում է | Պահպանվում է | Սպիտակեղենը և սրբիչները փոխարինվում են ամիսը երկու անգամ՝ առավելագույնը 7 օրվա փոխարեն |
| **Մենյուի կրկնման հաճախականություն** | Պահպանվում է | Պահպանվում է | Պահպանվում է | Կրկնվում է սկսած 4-5 օրից՝ նվազագույնը 7 օրվա փոխարեն | Կրկնվում է 2-3 օրը մեկ՝ նվազագույնը 7 օրվա փոխարեն | Կրկնվում է ամեն օր՝ նվազագույնը 7 օրվա փոխարեն |
| **Պարապմունքների քանակ և տևողություն** | Պահպանվում է | Չի պահպանվում ըստ ԱՆ նորմատիվների, համապատասխանում է ԿԱԻ ծրագրին | Պահպանվում է | Պահպանվում է | Չի պահպանվում՝ կրտսեր խմբի պարապմունքները 20-25 րոպե են | Չի պահպանվում՝ ավագ խմբում պարապմունքների տևողությունը 15-20 րոպե է |
| **Զարգացման պայմաններ** | Հիմնականում առկա են | Մեծ մասամբ առկա են | Մեծ մասամբ առկա են | Հիմնականում առկա են | Մեծ մասամբ առկա չեն | Մեծ մասամբ առկա չեն |
| **Հատուկ մասնագետներ** | Հոգեբան | Չկա | Չկա | Չկա | Չկա | Չկա |